

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճեններ և տպածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Book



01 JUN 2005

«ԲԱՆԻԱԲ» ՄԱՏԵՆԱԼՈՒՐ Թ-ԻՒ 1-

3K23

7-50

ԱՐ

Ն. ԼԵՆԻՆ

ՊԵՏՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

(Մարքսիզմի ուսմունքը պետութեան մասին և պրոլետարիատի դերը յեղափոխութեան մէջ)

Թարգ. ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆ



ՀԱ ԱՇԱՐԴԿՈՒԹԻՒՆ
Հ. ԲԱՆԻԱԲԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՐԵԲԻԿԱ — 1922

0849

A. DEVEJIAN LIBRARY
NEW YORK
Ա. ՏԵՎԵՋՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

11 SEP 2013

7895

«ՊԵՏԾՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ»

ՀԱՅԵՐԵՆ:

Լենինի «Պետութիւնն եւ Յեղափոխութիւն» գիրքը նորագոյն հասարակական պատմութեան համար մի խոռոր անկիւնաքար է կազմում։ Կարելի է համարակ ասել, որ այդ գիրքը հանճարեղ ստեղծագործութիւն է։ Ըստ իս Մարքսի «Կապիտալից» յետոյ իր համակուրեամբ, խորութեամբ ու պարզութեամբ նա երկրորդ գիրքն է։ Եւ ահա թէ ինչու։

Հիմ սօցիալիստները երկրորդ ինտերնացիոնալի բանակից վերջ ի վերջոյ դաւանանեցին մարքսիզմին — թէ զաղափարապէս եւ թէ գործնականում։ Երկրորդ կարգի դաւանանութիւնը հասկանալի դարձաւ մեծ իմպերիալիստական կուի բնբացքում։ Առաջին տեսակի դաւանանութիւնը վազուց բայց եր դրած սօցիալ-դեմոկրատական ըրջաններում, բայց մասսաները եւ աստ ու աստ անկիոծ, ոգեւորւած առաջաւորները չէին նկատում այն։ Երկրորդ ինտերնացիոնալի տակտիկան այն աստիճան խոհեմ, խորամանկ ու նուրք եր, որ անոնամ շատերի տակից շատ դժւար եր դրւու բերել իրականը, իսկականն ու էականը։ Խօսեմ օրինակներով։

Մարքս ու Էնգելս ասու են զրել պրօլետարիատի գիտառությի, պրօլետարական յեղափոխութեան եւ սօցիալիստական պետութեան մասին։ Իրանք ժամանակ խօսել են կօմունիզմի ու սօցիալիզմի մասին, բաւելով նրանց մէջ որու ու յայտնի գիծ, սակայն կարողացել են արդեօֆ նրանց կօմնատառօռները, նրանց անմիջական աշակերտները (Բէրել, Կառուցի, Գէղ, Պէխանով) պարզ ու յսոսակ կերպով լուսարանել մասսաների համար մարքսիզմի այդ կարեւոր հիմունքները։ Ոչ եւ ոչ։ Երկրորդ ինտերնացիոնալի սօցիալիստները այդ խնդիրների կողմից անցել են միւս զարմանալի քերեւութեամբ։

Պրօլետարիատի գիտառությունը։ Դա մի ցանկութիւն, մի ինչ որ անբացատրելի նեռաւոր ապագայ էր սօցիալ-դեմոկրատի համար, դէպի այն կարելի էր գնալ պարլամենտական խոսադ կուով, ընտրողական պայմանություն, մեծամասնութեան սօցիալիստական դաստիարակութեամբ, ինչով կուզեք, բայց ոչ յե-



2497
39

դափնիուրեամբ, ապստամբուրեան միջոցով, փողոցի կուռիլ: Մեզ բոլորին էլ այդ կրուրիւնն էր աշխատում տալ սօցիալ-գեմոկրատիան:

Պրօլետարական յեղափոխուրիւն: Սա էլ ոչ այլ ինչ էր, երեւ հանգիստ կերպով մեծամասնուրիւն դառած ննուած դասակարգերի բնական յայտարարուրիւնը յօդուա նոր յեղափոխուրեան: Իսկ ի՞նչ էր տալու այդ յեղափոխուրիւնը, ի՞նչ բռվանդակուրիւն էր ունենալու նա, — սրա մասին սօցիալիստները չէին էլ մտածում: Պրօլետարական պետուրիւն կրչածը սօցիալ-գեմոկրատի համար մի դատարկ հնձիւն է եղել: Մարքսի յայտնի դարձածքը «Գոտայի ծրագրի բնադատուրիւնը» գրեթե կից, թէ «կապիտալիստական ու կօմիւնիստական հասարակուրիւնների միջեւ գտնուում է յեղափոխական վերակազմուրեան ըքանիք, որին բաղադրական կետանում համապատասխանում է այն անցորդական ժամանակամիջոցը, որի ընթացքում, բացի պոլիտարիստի յեղափոխական դիլուսուրան, չի կարող լինել ուրիշ պետուրիւն» — այս դարձածքը ոչ թէ միայն անհասկանալի է մնացել սօցիալ-գեմոկրատական սերնդին, այլ նոյն իսկ պահ է դրած եղել փուռ ու մազարեների բանիք ծածկ կոցի տակ:

Լենինի անգնահատելի ծառայուրիւնը նրանումն է կայանում, որ նա առաջին եղաւ ին սօցիալիստական բանակում, որ դուրս գալով նրանից՝ կորուլ ու համարակ զրեց մասնաների ուռաջ այս խնդիրների այժմէականուրիւնը եւ տւեց նրանց խևական ու յեղափոխական, ուստի եւ գիտական բացատրուրիւնը: Եր զրբում նա ցոյց է տալիս, որ նրանիք վերջին համարակ են աւելի բարձր հասարակակարգ, քան առաջինը, որ կօմենի կարելի է հասնել սօցիալիզմի միջոցով, որ դրա համար պետք է ստեղծել պրօլետարական պետուրիւն, որից զուրկ կլիմի կօմենի կազմը, ժամի որ նա կարիք չի զգայ առհասարակ որ եւ է պետական կազմի, որ այդ պետուրիւնը առաջ կգայ եւ կը զարգանայ պրօլետարական դիկոստուրայի կամ իշխանուրեան միջոցով, իսկ որ առանց ապրաւատուրական, բռնի ոյժի եւ արիւն բափելու անհնար է հասնել դիկոստուրայի: Այսուեղ մեր առաջին է ցցում բուրդուական կամ տահասարակ գեմոկրատիայի խնդիրը: Առաջին դեմոկրատիային կամ կապիտալիստական պետուրիւնը (պարլամենտարիզմը), իսկ երկրորդին — սօցիալիստական կամ սօվետական իշխանուրիւնը:

Այն, ինչ որ այժմ կատարուում է մեր աչերի առաջ Ռուսաստանում, Ունիկրայինայում, Արեւելեան ազգերի մօտ, Ազէքքէջանում ու Հայաստանում իսկ վաղը պիտի լինի եւ միւս երկներում, այդ ամենը տւարկայօրէն ապացուցանում է մարդուզմի համարեղ ուսումնիքի հետարտուրիւնը եւ նրա նոյնիքան հանեարեղ պարզաբնուրեան իրաւացիուրիւնը: Ահա թէ ինչու մենի այն համարում ենի երկրորդ «Կապիտալ»: «Կապիտալ» տւեց մարդկուրեան կապիտալիստական տնտեսուրեան ու կազմի բմբանողուրեան բանալին, «Պետուրիւնն ու Յեղափոխուրիւնը» մեր առաջ բաց է անուն պրօլետարիատի յեղափոխուրեան դոմերը: Ով չի խմանայ այս բանը, ով չի ուսումնասիրի այս փոքրիկ գրեթյկը, ով չի ըմբռնի նրա էականը, նա կօպէկի զին չի ունենայ նոր ժամանակների ժիմարար աշխատանիքի համար:

Հանգուցեալ ընկ. Վահան Տէրեանը տառ լաւ էր ըմբռում մարդուզմի այդ բաղադրական հիմունիքները: Ռուսաստանի հակունմբերեան օրերին պրօլետարիատի հետ միասին եւ նրա շարքերում նա կուի էր մզում բուրդուական անբարյականացնող կարգերի դէմ: Ահա թէ ինչու մի հայ խաղաղ բանաւուղդ, մի լիրիք կարեւոր համարեց լենինի խոռոր գրածքը հայ ընթերցալին մատակարարել եւ դեռ այն ժամանակ, երբ այդ ընթերցողը տնենում էր հայ ու եւրոպական ենիշերիների դժնակ լծի տակ:

Տէրեանի բարգմանուրիւնը խկազես նրա յեղափոխական պատգամն է հայ պրօլետարիատին: Տէրեան այսուհետեւ անբաժանելի է պրօլետարիատից ու մասնաւորապես հայ աշխատանքից: Նրա համար նա կուեց եւ կուռու ստացաւ մահացու վէրք: Մինչիւ վերջին ունեցը նա մնաց պրօլետարիատին հաւատարիմ: Եւ հեռաւոր Օքենբուրգում, վերջին պահ ամուր կանգնած յեղափոխուրեան ու կօմենի զիրքում ու մտաւարւած պրօլետարիատի հօգսեռով, նա կնեւց իր մահկանացուն:

Մեծ գրքի հայկական փարքամ բարգմանուրիւնը, լինելով մի ուղեցոյց աստղ եւ ույս պրօլետարիատի համար, թող' լինի եւ մի յաւել մահարամ ընկած խոռոր հայ գրողի ու խիզախ մարտիկի հեռաւոր ու անուուք ժիրիմի վրայ:

Ա. ՄԱՐՏՈՒՆԻ

Զ Յունիարի, 1921.

Մոսկավ.

Ե Ր Կ Ա Խ Խ Օ Ս Ք

Անցեալ տարի, աւճանը, ուղեւորելով Թուրքեստան, Վահան Տէրեանը յանձնել էր Հայոց Կոմիսարիատին «Պետութեան և յեղափոխութեան» բարգմանուրիւնը յանձնարարելով տողերիս գրողն Խմբազրել եւ Խկիլ տաղազրութեան վրայ:

Ինչուս տնօքականերում, այնպէս էլ հիմա, մենք չենք քերանայ մեր բնկերական պարտքը կատարելուց, երէ պրէտի շարքերի վրայ դրւած չիներ յաւիտենական համրութեան ուն նիւը:

Այն ամենը, ինչ երբ եւ իցէ դուրս է եկիլ Վահան Տէրեանի գրչի տակից — այլեւս երա վերջն յօսն է:

Բացի այդ մենք ի նկատի ենք ունեցել նաեւ մի այլ հանգամանք:

Աւելի զարգացած լեզուց պակաս մշակւած լեզուի վերածելիս՝ բարգմանիչը դեմ է առնում յատուկ դժւարութիւնների, մանաւանդ երէ նիւթը վերացական ու բարդ է: Թարգմանութեան միջոցով մենք իսկապէս ուրիշ հոդի վրայ բաժան, այլ մբնոլորտում հասունացած հասկացողութիւնները տեղափոխում ենք մեր երկիրը, որտեղ այդ հասկացողութիւնները, հետեւապէս եւ երանց համապատասխան լեզուային միջոցները, օրգանապէս չեն անել:

Վահան Տէրեանը, որ այնպիսի նոյն, փարքամ հայերէնով արտայայտել է ինսելլիքենու մարդու զգացումներն ու որաժադշութիւնները, նոյն ինսելլիքենու մտածողութիւնն ու մտալարկենները նկարազելին: Ենգուում է լեզուային միջոցների պակասից, անգամ բացակայութիւնից:

Ներկայ աշխատութիւնը բարգմանչական գործի մի շարք դժւարութիւններ յալքահարելու փորձեր է պարունակում: Ընթերցողի աշխից անընուած չի վրիպի, թէ ինչպէս երբեմն միեւնոյն խընդիրը բարգմանիչը լուծում է մի ժամի տարրեր եղանակներով: Մեր խօսքը պարզելու համար վերցնենք թէկուզ օտար բառերի հարցը:

Պահպանէ՞լ օտար բառերը թէ հայացնել: Պոդօցիա, ուղիկէ՞ֆ, լոգիքակա՞ն, էխցի՞ն, անարիի՞ստ պանեզի՞րիկ եւ այլն, թէ ոստիկանութիւն, ցայտուն, արամարանական, ծայրայեղութիւն, անիշխանական, ներքոզ եւ այլն: Խիրացնել այդ բառերի օտար վերջառութիւնները՝ դեմոկրատիկ, բիւրոկրատիկ, մեթոսիկ, պարլամենտար, ուժորմիզմ, եւ այլն, թէ հայերէն վերջառութիւն-

ներ կցել համաձայն մեր լեզուի օրէնքներին (ինչպէս վրացիներն են անում)՝ չինովեհիկական, չինովեհիկութիւն, պրոպագանիային, աղիտացիական, եւ այլն: Աւատութիւն, աւատատէ՞ր, աւատակա՞ն, թէ՝ ֆէշդ, ֆէոդատէր, ֆէոդական կամ նոյն խոկ ֆէոդալ, ֆէոդալական եւ այլն, եւ այլն: Վահան Տէրեանի լեզուային տատանումներն ու տարակուսանինները — մեր գիտական լեզուի աղքատութեան վկայարուցքն է: Հայ բարգմանիչների համար անմշամար եւ ապարդիս չափուի մնան Տէրեանի պէս մի լեզուապէտի եւ ոնարանի որոշումները:

Այս նկատառումներով «Պետութիւնն ու յեղափոխութիւնը» մենին լոյս ենք ընծայում անփոփոխ, լրացնելով լոկ առանց բարգմանութեան բողած տողերն ու տեղերը:

Հայոց Կոմիսարիատում Վահան Տէրեանի օրօք ժամից յօս ե բացւել յատուկ սերմինարանական յանձնաժողով գումարելու, բարգմանիչների գործը կանոնադրելու եւ դիւրացնելու նպատակով: Ինչ — ինչ պատճառներով այդ գործը Մոսկուայում գլուխ չեկա:

Թէրեւս Խորիդային Հայաստանում իրազործի այդ միտքը:

Գ. ՄԱԿԻՆՑԵԱՆ

1920, Դեկտ. 22

Ա. Բ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն

Պետութեան խնդիրը ներկայումս առանձին կարեւորութիւն է ստանում թէ տեսական թէ գործնական քաղաքական տեսակէտից։ Իմակերպալիստական պատերազմը գերազանցօրէն արագացրել ու սրել է մոնուպոլիստական կապիտալիզմը պետական մոնուպոլիստական կապիտալիզմը գարձնող պրոցեսը։ Պետութիւնը հրեշտակ կերպով ճնշում է աշխատաւոր մասսաներին եւ ինքը քանի գնում աւելի ու աւելի սերտ կերպով ձուլում է կապիտալիստների ամենազօրեղ միութիւնների հետ՝ դառնալով աւելի ու աւելի հրէշտակ։ Առաջաւոր երկրներ — մեր խօսքը նրանց թիկունքին է վերաբերում — զինուրական տաժանակիր բանտեր են դառնում բանտորների համար։

Զգձուղ պատերազմի չլուած աղէտներն ու սարսափները մասսաների գրութիւնն անտանելի են դարձնում եւ աւելի ու աւելի ուժեղացնում նրանց ըմբուտացում։ Ակնյայտ կերպով աճում է միջազգային պրոդեմարտարական յեղափոխութիւնը։ Եւ նրա վերաբերմունքը դէմի պետութիւնը գործնական նշանակութիւն է առնում։

Տասնեակ տարիների համեմատարար խաղաղ դարացման միջոցին ողջ աշխարհի պաշտօնական սոցիալիստական կուսակցութիւնների մէջ, օպպորտինիստներն ստեղծել են սոցիալ-շովինիստական հոսանք։ Այդ հոսանքը (Պլեխանով, Պոտրեսով, Բրեշկովսկայա, Ռուբանովիչ, ապա քիչ աւելի քողարկած ձեւով Ծերեթիլի, Զերնով եւ ընկ.—Ռուսիա, Շայդէման, Լեգին, Դաւիդ եւ այլն—Գերմանիա, Ռէնդէլ, Գէդ, Վանդեր-

վէլլ—Ֆրանսիա, եւ Բէլգիա, Հայնդման եւ Ֆարիա-կաններ—Անգլիա, եւ այլն, եւ այլն) խօսքով սոցիալիզմի է, գործով չովինիզմ — նրա յատկանիշն է՝ սոցիալիզմի առաջնորդների դազիր, լաքէյական համակերպում ոչ միայն «իրանց» աղջային բուրժուազիայի շահերին, այլ էնց «իրանց» պետութեան շահերին, որովհետեւ այսպէս կոչւած մեծ պետութիւնների մեծագոյն մասը վաղուց արդէն շահագործում ու ստրկացման է ենթարկում մի շարք փոքր ու թոյլ ազգութիւններ։ Իսկ իմակերպալիստական պատերազմը էնց այդ տեսակ որսի բաժանման ու վերաբաժանման համար մղւող մի պատերազմ է հանդիսանում։ Անհնարին է կուի մղել աշխատաւոր մասսաները բուրժուազիայի աղեցութիւնից աղատելու համար, մանաւանդ իմակերպալիստական բուրժուազիայից աղատելու համար առանց օպպորտիւնիստական նախապաշարմունքների դէմ կուելու։

Մենք քննում ենք նախ Մարքսի եւ Էնգելսի ուսմունքը պետութեան մասին, յատկապէս կանգ առնելու այդ ուսմունքի մոռացւած կամ օպպորտիւնիստական աղաւաղման ենթարկած կողմերի վրայ։ Ապա մենք յատուկ քննութեան կ'ենթարկենք այդ աղաւաղումների գլխաւոր ներկայիչ կառլ Կառլցիուն, երկրորդ ինտերնացիոնալի (1889—1914) այդ ամենայայտնի առաջնորդին, որն այնպիսի խղճալի մնանկութեան հասաւ ներկայ պատերազմի ընթացքում։ Վերջապէս մենք ընդհանուր հաշեկարգար կը կատարենք 1905 եւ մանաւանդ 1917 թւի յեղափոխութիւնների նկատմամբ։ Այս վերջինն, ըստ երեւոյթին ներկայում (1917 թ. օգոստոսի սկզբին) աւարտում է իր զարգացման առաջին շրջանը, բայց իր ամբողջութեամբ այդ յեղափոխութիւնը կարելի կը մինի ըմբռնել միայն իրբեւ իմակերպալիստական

պատերազմից ծագած սոցիալիստական-պրոլետարական յեղափոխութիւնների շղթայի օղակներից մէկը։ Պրոլետարիատի սոցիալիստական յեղափոխութեան եւ պետութեան փոխադարձ յարաբեռութեան խնդիրը այդպի-սովոր ոչ միայն գործնական-քաղաքական այլ եւ օրւայ չարիքի նշանակութիւն է ստանում, դառնում է խնդիր—մասսաներին բացատրելու նրանց անելիքը՝ իրանց ամենամօտ ապագայում կապիտալի լծից ազատելու համար։

Օդրսուու 1917 թ.

ՀԵՂԻՆԱԿ



Գ Լ Ռ Խ Խ 1.

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ, ՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ :

1. Պետութիւնն արդիւմք դասակարգային հակասութեանց անհասուելիութեան։

Մարքսի ուսմունքն այժմ նոյն վիճակում է, որում շատ ու շատ անգամ պատմութեան ընթացքում եղել են ճնշւած ու իրանց ազատութեան համար մարտնչող դասակարգերին առաջնորդող յեղափոխական մտածողների ուսմունքները։

Ճնշող գասակարգերը մեծ յեղափոխականներին նըրանց կենդանութեան ժամանակ յար ու անդադար հայածում են, դուրս են գալիս նրանց ուսմունքի դէմ ամենալայրի չարութեամբ, ամենակատաղի ատելութեամբ, ստութեան ու գրաբառութեան ամենասահնարձակ արշաւանքով։ Իսկ մահից յետոյ փորձեր են անում նրանց անվնաս սրբապատկերներ գարձնելու այսպէս ասած կանոնականացնելու նրանց որոշ փառքով պսակելու նրանց անունը, որպէս զի այդպիսով «միմիթարեն» ճընշըւած գասակարգերին, յիմարացնեն նրանց՝ կրտելով յեղափոխական ուսմունքի բովանդակութիւնը, գուհկացնելով այն։

Մարքսիզմի այդօրինակ «մշակման» գործում միացած են այժմ բուրժուազիան ու բանուորական շարժման մէջ գտնուող օպպորտիւնիստները։ Մոռացութեան են

տալիս, յետ են մզում, աղաւաղում են ուսմունքի յեղափոխական կողմը, նրա յեղափոխական հոգին: Ընդհակառակը՝ առաջ են քաշում, փառաբանում են այն, ինչ ընդունելի է, կամ ընդունելի է թում բուրժուազիային: Կատակ չանչ'ք, — այժմ բոլոր սոցիալ — շովինիստները մարքսիստ են: Գերմանացի բուրժուական գիտնականները, նրանք, որ գետ երեկ մարքսիզմի ոչընչացման մասնագէտներ էին, այժմ քանի զնում աւելի ու աւելի յաճախ են խօսք բաց անում «գերմանական — աղային» Մարքսի մասին, որն իրը թէ կրթել է հրաշալի կերպով կազմակերպւած բանուրական միութիւնները կողոպաթէ պատերազմ մղելու համար:

Քանի որ իրերի գրութիւնն այդպէս է, քանի որ ըստեսնւած չափերով տարածւած է մարքսիզմի աղաւազումը — մեր հոգսը պիտի լինի նախ եւ առաջ վերականգնել Մարքսի իսկական ուսմունքը պետութեան մասին: Բրահմար անհրաժեշտ կրլինի մէջ բերել մի շարք ցիտատներ (քաղւածներ) Մարքսի եւ ինգելսի սեփական գրւածներից: Ճիշտ է՝ ցիտատները կը ծանրացընեն մեր շարադրութիւնը ու ընաւ չեն նպաստի նրա մատչելութեան: Բայց առանց ցիտատների անհնար է եօլա զնալ: Մարքսի եւ ինգելսի պետութեան վերաբերող գրւածների բոլոր, կամ գոնչ բոլոր վճռական նշանակութիւն ունեցող հաստածները անհրաժեշտ կրլինի մէջ բերել կարելիին չափ լիովին, որպէսզի ընթերցողը իարողանայ ինքնուրոյն զաղափար կազմել զիտական սոցիալիզմի հիմնադիրների բովանդակ հայեցքների եւ այդ հայեցքների զարգացման մասին, նմանապէս եւ նրա համար, որ փաստացի աղացուցւած և ակներկ ցոյց տրւած լինի այն աղաւաղումը, որ կատարում է այժմ իշխող «կառւցկիականութիւնը»:

Սկսինք ֆր. էնգելսի ամենատարածւած՝ «ընտանիքի», մասնաւոր սեփականութեան եւ պետութեան ծագումը» գրւածից, որ 1894 թիւն լոյս է տեսել ծտուալազարտում արդէն վեցերորդ տպագրութեամբ:

Մենք ստիպուած ենք ցիտատները գերմանական բընագրից թարգմանելու, որովհետեւ գոյութիւն ունեցող ուսւերէն թարգմանութիւնները թէեւ բազմաթիւ են, այնուամենայնիւ կամ անլրիւ են կամ անրաւարար:

«Պետութիւնն, ասում է ինգելսը ամփոփելով իր պատմական անալիզը, բնաւ այնպիսի մի ոյժ է, որը գրաց փաթաթւում է հասարակութեան վզին: Ոչ էլ «բարոյական զաղափարի իրականացումն» է պետութիւնը կամ «մտքի պատկերն ու իրականացումն» ինչպէս Հէպէլն է ասում: Պետութիւնն արդիւնք է հասարակութեան, — սրա զարգացման որոշ աստիճանի վրայ գտնւող հասարակութեան: Պետութիւնն ինքնին մի խոստովանք է, որ հասարակութեան ծոցում անլուծելի ներհակութիւններ կան, որոնցից նա անզօր է ազատուելու: Բայց, որպէս զի այդ ներհակութիւնները միմեանց հակասող տնտեսական շահեր ունեցող դասակարգերը աննպատակ կուռում իրար եւ հասարակութիւնը ըըլիանեն՝ անհրաժեշտ եղաւ մի ոյժ, ըստ երեւոյթին հասարակութիւնից վեր կանգնած, մի ոյժ, որ պիտի չափաւորէր ընդհարումը, «կարգի սահմաններում» պահէր նրան: Եւ այդ ոյժը, որ հասարակութիւնից էր ծնունդ առել, բայց իրան նրանից վեր էր գասում, որը գնալով աւելի ու աւելի խորթանում էր հասարակութեան — ահա զա պետութիւնը»: (Գերմաներէն վեցերորդ տպագր. 177—178 էր.):

Այստեղ կատարեալ պարզութեամբ արտայայտւած է մարքսիզմի հիմնական գաղափարը պետութեան պատմական դերի եւ նշանակութեան մասին։ Պետութիւնը դասակարգային հակասութիւնների արդիւնք ու արտայայտութիւն է։ Պետութիւնը ծագում է միայն այնուել, այն ժամանակ եւ այն չափով, որտեղ, երբ եւ ո՛ր չափով դասակարգային հակասութիւններն օրինեկտիւ կերպով հաշտեցնել չեն կարող։ Եւ ընդհանուր պետութեան գոյութիւնն ինքնին արդէն մի ապացոյց է որ դասակարգային հակասութիւններն անհաշտելի են։

Ահա այս կարեւորագոյն ու հիմնական կէտից է սկիզբ առնում մարքսիզմի աղաւաղումը, որ երկու գլխաւոր գծով է ընթանում։

Մի կողմից բուրժուական եւ մանաւանդ մանր՝ բուրժուական իդէոլոգիները պատմական անվիճելի փաստերի ճնշման տակ հարկադրւած են ընդունել, որ պետութիւն կայ միայն այնուել, ուր կան դասակարգային հակասութիւններ եւ դասակարգային կուեւ, բայց «սըրբագրում» են Մարքսին այն ձեւով՝ որ պետութիւնը դասակարգի հաշտեցման մի օրդան է զուրս գալիս։ Բայ Մարքսի՝ պետութիւնը ո՛չ կարող էր ծագել, ո՛չ էլ պահպանել, եթէ հնարաւոր լինէր դասակարգերի հաշտեցում։ Քաղքենի եւ Փիլիսոփեր պրօֆեսորներն ու ուրիշիստներն այնպէս են զուրս բերում — այն էլ նդադար կերպով Մարքսի վրայ բարեացակամ ցուցմունքներ անելով — իր թէ հէնց պետութիւնն է, որ հաշտեցնում է դասակարգերը։ Բայ Մարքսի՝ պետութիւնը դասակարգային տիրապետութեան օրդան է, մի օրդան, որի միջոցով մի դասակարգ ննջում է միւսին, ստեղծագործումն է այն «կարգի», որն օրինականացը

նում եւ ամրապնդում է այդ ճնշումը, չափաւորելով դասակարգային ընդհարումները։ Մանր՝ բուրժուական քաղաքագէտների կարծիքով կարգը հէնց դասակարգերի հաշտեցման մէջ է կայանում եւ ոչ թէ նրանում, որ մի դասակարգ ճնշէ միւսին։ նրանց կարծիքով չափաւորել ընդհարումը՝ կնշանակէ հաշտեցնել եւ ոչ թէ խլել ճընշըւած դասակարգերից՝ նրանց ճնշողներին տապալելու համար մղւող կուի միջոցներն ու ձեւերը։

Օրինակ՝ բուրը էսէրները (սոցիալիստ՝ յեղափոխականներն) ու մենչեւիկները 1917 թւի յեղափոխութեան մէջ, երբ պետութեան դերի ու նշանակութեան խնդիրն իսկ որ ծառացաւ իր ամբողջ մեծութեամբ, ծառացաւ գործնականապէս, իր անմիջական գործի, այն էլ մասսայական գործի խնդիրը՝ բուրը էսէրներն ու մենչեւիկներն իսկոյն ցած գլուրւեցին դէպի դասակարգերի պետութեան միջոցով հաշտեցնելու մանր՝ բուրժուական թէորիան։ Այն, որ պետութիւնը որոշ դասակարգի տիրապետութեան օրդան է, որը չի կարող հաշտեցնել իր անտիպոդի հետ (հակոռնեայի — իրան ներհակ դասակարգի հետ) մանր՝ բուրժուական դեմոկրատիան երբէք չըպիտի կարողանայ ըմբռնել։ Այդ կուսակցութիւններին պատկանող քաղաքագէտների անթիւ — անհամար ուեզօլիցիաներն ու յօդւածներն ամբողջովին այդ Փիլիսոփերային քաղքենիական «հաշտեցման» թէորիայով են ուղղուած։ Մեր էսէրների եւ մենչեւիկների դէպի պետութիւնն ունեցած վերաբերմունքն ամենից լաւ է արտայայտում այն, որ նրանք բուրժորովին սոցիալիստ չեն (մի բան, որ մենք, բոլշևիկներս չարունակ ապացուցել ենք), այլ համարեա թէ սոցիալիստական Փիլիսոլոգիա բանեցնող մանր-բուրժուական դեմոկրատներ։

Միւս կողմից մարքսիզմի «կառւցկեական» աղաւա-
դումն է, որը շատ աւելի նուրբ է : «Թէորիայով» նա չի
ժխտում, որ պետութիւնը դասարդային տիրապետու-
թեան օրգան է, ոչ էլ այն, որ դասարդային հակասու-
թիւնները անհաշտելի են : Բայց նա աչքաթող է անում
կամ մթութեան քողով է պատում հետեւեալը . ևթէ պե-
տութիւնը դասարդային հակասութեանց արդիւնք է,
երէ նա հասարակութիւնից վեր կանգնած մի ոյժ է, ո-
րը «քանի զնում աւելի ու աւելի խորթացնում է իրան
հասարակութիւնից», ապա պարզ է, որ նշանակած դասա-
դասարդայի ազատումը ոչ միայն առանց բռնի յեղա-
փոխութեան է անհնար այլև առանց քնչման այն պետա-
կան ապարատի, որն ստեղծել է տիրող դասարդայի
ու որի մէջ այդ «խորթացումը» մարմնացել է : Այս եզ-
րակացութիւնը, որ քէորիապէս պարզ է ինքն ըստ ինք-
եան, Մարքս արել է, ինչպէս ցածում կրտեսնենք, ա-
մենակատարեալ որոշութեամբ յեղափոխութեան խնդրի
կոնկրետ-պատմական վերլուծութեան հիման վրայ : Եւ
հենց այդ եզրակացութիւնն է, որ կառւցկին, — մենք այդ
մանրամասնօրէն ցոյց կրտանք մեր յետագայ շարադր-
րութեան մէջ — ... «մոռացել» ու աղաւաղել է :

2. Զինաւած մարդկանց յատուկ խմբեր, բանտեր եւ այլն :

«Հին գենտիլ (կլանային կամ սոհմային) կաղ-
մակերպութեան հետ համեմատած, շարունակում է
ինգելսը, պետութիւնը տարրերում է նախ նրանով,
որ իր հոգատակներին բաժանում է ըստ երկրամա-
սերի :

Այդ բաժանումը մեզ «բնական» է թւում, բայց
նա արդիւնք է երկարատեւ կուի, որ մզւել է հին
սոհմային եւ սերնդային կազմակերպութեան դէմ» :

— «Երկրորդ յատկանիշը՝ հասարակական իշ-
խանութեան հաստատումն է, այն իշխանութեան,

որն արդէն անմիջապէս չի նոյնանում ինքն իրեն
իր զինւած ոյժ կազմակերպած բնակչութեան հետ :
Այդ յատուկ հասարակական իշխանութիւնն անհը-
րաժեշտ էր նրա համար որ արդէն այն օրից, երբ
հասարակութիւնը բաժանւել էր դասակարգերի՝
անհնար էր դարձել բնակչութեան ինքնագործ զին-
ւած կազմակերպութիւնը... Այդ հասարակական
իշխանութիւնը գոյութիւն ունի ամեն մի պետու-
թեան մէջ : Նա բազկացած է ոչ միայն զինւած
մարդկանցից, այլև զանազան տեսակի նիւթական
յաւերածներից, որպիսիք են բանտեր ու զանազան
տեսակի հարկադիր հիմնարութիւններ, որոնք ան-
յայտ էին հասարակութեան տոհմային (կլանային)
կազմակերպութեանը :

Ինգելսը բաց է անում պետութիւն կոչւող այդ «ոյ-
ժի» գաղափարը, այն ոյժի, որը ծագել է հասարակու-
թիւնից, բայց իրան հասարակութիւնից վեր է դասում
եւ քանի զնում աւելի ու աւելի բաժանում է իրան հա-
սարակութիւնից : Ինչո՞ւմ է կայանում դիմանորապէս
այդ ոյժը : Նա կայանում է զինւած մարդկանց յատուկ
խմբերում, որոնք իրանց տրամադրութեան տակ ունեն
բանտեր եւայլն :

Մենք իրաւունք ունենք խօսելու զինւած մարդկանց
յատուկ խմբերի մասին, որովհետեւ ամեն մի պետու-
թեան յատուկ հասարակական իշխանութիւնը «անմիջա-
պէս չի նոյնանում» զինւած բնակչութեան հետ, նրա
«ինքնագործ զինւած կազմակերպութեան հետ» :

Ինչպէս եւ քոլոր մեծ յեղափոխական մտածողները՝
ինգելսը աշխատում է զիտակից բանտորների ուշադրու-
թիւնը հարաբերել հէնց այն բանի վրայ, ինչ տիրող քաղ-
քենիներին թւում է ամենից քիչ ուշադրութեան արժանի,

ամենից սովորական, հախապաշտումներով սրբագործւած եւ ոչ միայն հաստատուն, այլ կարելի է ասել քարացած : Մշտական զօրքն ու պոլիցիան պետական իշխանութեան ոյժի գլխաւոր դէնքերն են, եւ մի՞թէ կարող էր այլ կերպ լինել :

19 րդ դարի վերջի եւրոպացիների ահազին մեծամասնութեան համար որոնց գիմում էր էնգելսը եւ որոնք չեն ապրել եւ մօտիկից չեն դիտել ոչ մի մեծ յեղափոխութիւն, դա այլ կերպ լինել չի կարող : Երանց համար բոլորովին անհասկանալի է, թէ ի՞նչ բան է այդ «հասարակութեան ինքնազործ», զինւած կազմակերպութիւնը» : Այն հարցին, թէ ինչո՞ւ կարիք ստեղծւեց յատուկ, հասարակութիւնից բարձր դասւած եւ իրանց հասարակութիւնից բաժանող զինւած մարդկանց խմբերի (ոստիկանութիւն, մշտական զօրք), արեւմտաեւրոպական եւ ոռւս ֆիլիսոփերը հակւած է պատասխանելու Սովենսերից ու Միխայլովսկուց փոխ առած մի երկու Փրազով, մատնանիշ անելով հասարակական կեանքի զարգացումը, Փունկցիաների դիմութեացիան եւ այն :

Այդպիսի մատնանշումը «դիտական» է թւում եւ հըշացալի կերպով քննեցնում է օրի՞տելին, խաւարով պատերով գլխաւորն ու հիմնականը հասարակութեան բաժանումը անհաշտելի թշնամի-դասակարգերի :

Եթէ այդ բաժանումը չըլինէր, «հասարակութեան ինքնազործ զինւած կազմակերպութիւնը» իր բարդութեամբ, իր տեխնիկայի բարձրութեամբ եւայլն կը տարբերէր մահակներով զինւող կապիկների հօտից կամ տոհմական հասարակութիւններ կազմող նախնական մարդկանցից, բայց այդպիսի կազմակերպութիւնը հնարաւոր կը լինէր :

Նա անհնար է նրա համար, որ քաղաքակիրթ հասարակութիւնը բաժանուած է թշնամական եւ այն անհաշտելի թշնամական դասակարգերի, որոնց «ինքնազործ» զինումը պիտի զինւած կոիւ առաջացնէր նրանց մէջ: Կազմում է պետութիւն, ստեղծուում է յատուկ ոյժ, զինւած մասրդկանց յատուկ խմբեր եւ ամեն մի յեղափոխութիւն քանդելով պետական ապագարատը, ակներեւ կերպով ցոյց է տալիս մեզ, թէ ինչպէս տիրող դասակարգը ձգտում է վերականգնել իրան ծառայող զինւած մարդկանց յատուկ խմբերը, ինչպէս ճնշած գասակարգը ձգտում է ստեղծել այդ տեսակ մի նոր կազմակերպութիւն, որ ընդունակ պիտի լինի ծառայել ոչ թէ շահագործողներին, այլ շահագործուողներին :

Էնգելսը մեր առաջ բերած դատողութեան մէջ տեսականապէս զինում է Հէնց այն հարցը, որը գործնականապէս, որոշակի եւ այն մասսայական գործողութեան մասչուարով, զինում է մեր առաջ ամեն մի մեծ յեղափոխութիւն, այն է՝ զինւած մարդկանց «յատուկ» խմբերի եւ հասարակութեան ինքնազործ զինւած կազմակերպութեան» յարաբերութեան խնդիրը: Մենք կը տեսնենք, թէ ինչպէս է այդ խնդիրը կոնկրետ կերպով պատկերանում եւրոպական եւ ոռւսական յեղափոխութեանց փորձում : Սակայն զառնանք էնգելսի շարադրութեանը :

Նա մատնանշում է, որ երբեմն, օրինակ Հիւսիսային Ամերիկայի որոշ կէտերում, այդ հասարակական իշխանութիւնը թույլ է (խօսքը վերաբերուում է կապիտալիստական հասարամկութեան սակաւագոյն բացառութեան եւ Հիւսիսային Ամերիկայի նրա մինչ-իմպերիալիստական շրջանի այն մասերին, ուր գերիշխող էր ազատ կոլոնիատը) բայց խօսքով ընդհանրապէս նա ուժեղանում է :

«Հասարակական իշխանութիւնը ուժեղանում է այն չափով, որ չափով սրում են դասակարգերի հակասութիւնները պետութեան ծոցում եւ քանի իրար հետ չփող պետութիւնները աւելի մեծ ու բազմամարդ են դառնում : Նայեցէք թէկուզ հէնց ներկայ Եւրոպային, որի մէջ դասակարգային կոխն ու նւաճման մրցումը վեր են բարձրացրել հասարակական իշխանութիւնը դէպի այնպիսի մի բարձրութիւն, որ նա սպառնում է կլանել ողջ հասարակութիւնն ու մինչեւ իսկ պետութիւնը»...

Սա անցեալ դարու 90-ական թւականների սկզբներին է զրւած : Էնգելսի վերջին առաջարանը թւագրւած է 1891 թ. յունիսի 16 ին : Այն ժամանակ թէ թրւանների կատարեալ տիրապետութեան իմաստով, թէ՝ խոչըրագոյն բանկերի միահեծան իշխանութեան մաքով, թէ՝ հսկայածաւալ գաղութային քաղաքականութեան մշտքով շրջադարձը դէպի իմպերիալիզմը գեռ նոր-նոր էր սկիզբ առնում ֆրանսիայում եւ աւելի թոյլ էր Հիւսիսային Ամերիկայում ու Գերմանիայում : Դրանից յետոյ — մինչեւ մեր օրերը — «նւաճողական մրցումը» հսկայական քայլերով է առաջ դնացել եւ արդէն 20-րդ դարու երկրորդ տասնամեակի կիսին երիրագունդը վերջնականօրէն բաժանւած էր այդ «մրցակից նւաճողների» այսինքն թալանիչ մեծ պետութիւնների մէջ : Ռազմածովային թալանիչ եւ 1914—1917 թւի թալանիչ պատերազմը, որ մզւում էր յանուն Անգլիայի եւ Գերմանիայի համաշխարհային գերիշխանութեան, յանուզ աւարի բաժանման, աւելի եւս մերձբեց այն ժամը, երբ պետական իշխանութիւնը սպառնում է կլանել հասարակութեան բոլոր ոյժերը եւ կատարեալ կատաստրոֆ առաջացնել : Էնգելսը դեռ 1891 թւին կարողացաւ մատնանշել

«նւաճողական մրցումը», իբր մեծ պետութիւնների արտաքին քաղաքականութեան կարեւորագոյն յատկանիշներից մէկը : Մինչդեռ ստոր սոցիալ-շովինիստները 1914—1917 թւականներին, երբ այդ մրցութիւնն արդէն չատաւելի սուր բնոյթ ստացաւ, երբ նա իմպերիալիստական պատերազմ յարուցեց, քօղարկում են «իրանց հայրենիքի» բուրժուազիայի կողոպուտային շահերի պաշտպանութեան», «յեղափոխութեան եւ հանրապետութեան պաշտպանութեան» անունով փրաւն Փրագներ են հրապարակ նետում :

3. Պետութիւնը՝ գործիք ննւած դասակարգը հարստահարելու :

Յատուկ, հասարակութիւնից վեր կանգնած հասարակական իշխանութիւնը պահպանելու համար հարկաւոր են տուրքեր եւ պետական պարտքեր :

Հասարակական իշխանութիւն ու հարկառութեան իրաւունք ունենալով, գրում է Էնգելսը, չինովնիկները, որպէս հասարակութեան օրգաններ հասարակութիւնից վեր են դասւում : Այն ազատ ու կամաւոր յարգանքը, որ վայելում էին տոհմային (կլանի) հասարակութեան օրգանները, չի կարող գոհացնել չինովնիկներին, եթէ անգամ նրանք այդ յարգին արժանանան» : Ստեղծւում են չինովնիկների սրբութեան ու անձեռնմխելիութեան մասին յատուկ օրէնքներ : «Ամենաողղորմելի ոստիկանական ծառայողն աւելի «հեղինակութիւն» ունի, քան տոհմի ներկայիքը, սակայն քաղաքակիրթ պետութեան ուղղմական իշխանութեան պետն իսկ կարող էր նախանձել կլանի աւագին, որը հասարակութեան ոչ թէ «բոնի ոյժով կորզւած յարգն է վայելում» այլ կամովի յարգանքը :

Չինովնիկների մենաշնորհւած զրութեան խնդիրն իբրեւ պետական օրգանների խնդիր այստեղ դրւած է :

իրեւ հիմնականը գծւած է՝ թէ ի՞նչն է նրանց հասարակութիւնից վեր գասում : Մենք կըտեսնենք թէ այս տեսական խնդիրը ինչպէս է լուծում գործնականում Պարիզի կոմմունան 1871 թւին եւ ինչպէս ոչակցիական կերպով քօղարկում էր Կառուցկու կողմից 1912 թւին :

...«Որովհետեւ պետութիւնը ծագել է դասակարգային հակասութիւնները սանձահարելու կարիքց, որովհետեւ միեւնոյն ժամանակ նա ծագել է դասակարգերի այդ ընդհարմանց իսկ մէջ, դրա համար ըստ ընդհանուր կարգի պետութիւնը ամենազօրեղ, անտեսապէս տիրող դասակարգի պետութիւն է հանդիսանում : Եւ այդ դասակարգը պետութեան օգնութեամբ քաղաքականօրէն եւս տիրող դասակարգ է դառնում ու այդպիսով ճնշած դասակարգը ճնշելու եւ կեղեցելու նոր միջոցներ է ձեռք բերում... Ոչ միայն Հին եւ Փէողալական պետութիւնն է եղել ստրուկների եւ ճորտերի չափործութեան օրգան, այլ և «ժամանակակից ներկայացուցչական պետութիւնը հանդիսանում է մի օրգան, որով կապիտալը շահագործում է աշխատանքը : Սակայն իբր բացառութիւն լինում են ժամանակաշրջաններ, երբ կուող դասակարգերն ոյժերի այնպիսի հաւասարակշռութեան են հասնում, որ պետական իշխանութիւնը ժամանակաւոր կերպով անկախ է զգում իրան երկու դասակարգից էլ եւ երկուսի համար էլ միջնորդ է թւում : Այդպէս է 17 եւ 18-րդ դարի արտուիւտ միապետութիւնը, առաջին եւ երրորդ իմպերիայի բռնապարտիզմը Ֆրանսիայում, Բիսմարկը՝ Գերմանիայում :

Այդպէս է, կաւելացնենք մենք, կերենսկու կառավարութիւնը հանրապետական Ռուսիայում այն օրից, երբ նա յեղափոխական պրոլետարիատի անմիջական հա-

լածմանն է անցել, այն մոմենտում, երբ խորհուրդները մանր-բուրժուական դեմոկրատների ղեկավարութեան չնորհիւ արդէն անզօրեն, իսկ բուրժուազիան դեռեւս բաւականաչափ ուժեղ չէ, որ ցըէ Խորհուրդները :

Դեմոկրատիկ հանրապետութեան մէջ,— չարունակում է ինդեմարքը,— «հարստութիւնն օգտառում է իշխանութիւնից անուղղակի բայց դրա համար եւ աւելի հաստատ կերպով»— նախ՝ «չինովնիկներին ուղղակի կաշառելով» Ամերիկան), ապա՝ «կառավարութեան ու բորսալի դաշնակցութեան միջոցով (Ֆրանսիա եւ Ամերիկա) :

Ներկայումս իմպերիալիզմն ու բանկերի տիրապետութիւնը հարստութեան ինքնիշխանութեան հաստատման այդ երկու ձեւն էլ արտակարգ հնարագիտութեան աստիճանի են հասցըել բոլոր գեմոկրատիկ հանրապետութիւնների մէջ : Եթէ, օրինակ Ռուսիայում դեմոկրատական հանրապետութեան առաջին իսկ ամիսներում — «սոցիալիստ» էսէրների, մենշևիկների եւ բուրժուազիայի պահակազրութեան առաջին իսկ ամսում, մեղրամիսում իսկ կոռալցիոն կառավարութեան մէջ Պ. Պալ'չինսկին սարուտած էր անում կապիտալիստների եւ նըրանց մարողերութեան, սանձահարման համար ձեռնարկուած բոլոր միջոցները եւ նրանց ռազմական մատակարարման միջոցների թալանը սանձահարելու եւ եթէ յետոյ մինխատրութիւնից հեռացած Պալ'չինսկին (որին փոխարինեց ի հարկէ մի այլ ճիշտ նոյնպիսի Պալ'չինսկի) «վարձատրուած է» կապիտալիստներից 120 հազար ըուրիշի ոռնիկանոց պաշտօնով — արդեօք ի՞նչ է դա, ուղղակի կաշառում, թէ անուղղակի :

Արգեօք գաշինք է կառավարութեան ու սինդիկալիստների թէ «միայն» բարեկամական յարաբերութիւն : Ի՞նչ դեր են կատարում Զերնովներ եւ Ծերեթելինները,

Աւքսենտիկեներն ու Սկորելեները — արդեօք նրանք գանձարանը թալանող միլիոնատէրերի «ուզզակի» դաշնակիցներն են, թէ՞ միայն անուղղակի :

«Հարստութեան» միահեծան իշխանութիւնը աւելի հաստատ է գեմոկրատիկ հանրապետութեան մէջ նաեւ նրա համար, որ նա կախւած չէ կատիտավելովմի քաղաքական վատ կեղեւից: Դեմոկրատիկ հանրապետութիւնը կապիտալիզմի հնարաւորներից լաւագոյն քաղաքական կաղապարն է եւ դրա համար կապիտալը տիրելով (Պալ-չինկիների, Զերնովների, Ծնրեթելիների եւ ընկ. մի-ջոցով) այդ լաւագոյն կաղապարին հիմնաւորում է իր իշխանութիւնն այնքան հաստատուն, որ բուրժուական-դեմոկրատիկ հանրապետութեան մէջ այդ իշխանութիւնը չի կարող երերել ոչ անձերի, ոչ հաստատութիւնների, ոչ կուսակցութեանց փոփոխումը:

Պէտք է նիշել եւայն, որ ինգելսը ամենաորոշակի կերպով ընդհանուր ընտրական իրաւունքը բուրժուա-դիայի տիրապետութեան գործիք է անւանում: Ընդհա-նուր ընտրական իրաւունքն, ասում է նա հաշւի առնելով գերմանական սոցիալ-գեմոկրատիայի երկարատեւ փոր-ձը՝

«Բանւոր դասակարգի հասունութեան նշանն է: Աւելին նա չի կարող տալ եւ երբէք չի տալ այժմեան պետութեան մէջ»:

Մեր էսէրների ու մենշետիկների նման մանր բուր-ժուական գեմոկրատներն ու նրանց հարազատ եղբայր-ները՝ Արեւմտեան Եւրոպայի բոլոր սոցիալ-շովինիստներն ու օպպորտիւնիստները չէնց «աւելին» են սպասում ընդհանուր ընտրական իրաւունքից: Նրանք իրանք ըն-դունում են եւ ժողովրդին էլ ներշնչում այն սխալ միտ-քը, իրը թէ ընդհանուր ընտրական իրաւունքը «այժմեան պետութեան մէջ» իրօք կարող է արտայայտել աշխատա-

ւոր մեծամասնութեան կամքը եւ հաստատել այդ կամ-քի իրականացումը կեանքում:

Այստեղ մենք կարող ենք միայն մատնանշել այդ սխալ միտքը, մատնանշել միայն, որ ինդելսի միանգա-մայն պարզ, ճշգրիտ, կոնկրետ յայտարարութիւնը ա-ղաւագում է ամեն մի քայլափոխում «պաշտօնական» (այսինքն օպպորտիւնիստ) սոցիալիստական կուսակցու-թիւների պրոպագանդի ու ագիտացիայի մէջ: Ինդելսի կողմից գէն չպրտւած այդ մաքի ողջ ստութիւնը ման-րամասն կը պարզաբանեի մեր յետազայ շարադրութիւ-նից, ուր բացադրում է Մարքսի եւ ինդելսի հայեացքն «այժմեան» պետութեան վրայ:

Ինդելսն իր հայեացքներն ամփոփում է իր ամենա-ժողովրդական հեղինակութեան մէջ հետեւել խօսքերով՝

«Ուրեմն, պետութիւնը յակտուան գոյութիւն չի ունեցել: Եղել են հասարակութիւններ, որոնք առանց նրան են եօլա զնացել, որոնք հասկացողու-թիւն անզամ չեն ունեցել պետութեան եւ պետական իշխանութեան մասին: Տնտեսական զարգացման որոշ աստիճանի վրայ, որ անհրաժեշտօրէն կապւած է եղել հասարակութեան բաժանումը դասակար-գերի, այդ բաժանման պատճառով պետութիւնը անհրաժեշտութիւն դարձաւ: Այժմ մենք արագ քայլերով մօտենում ենք արտազլութեան այն աս-տիճանին, որի վրայ այդ դասակարգերի դոյու-թիւնը ոչ միայն զագարել է անհրաժեշտութիւն լի-նելուց, այլ ուզզակի խոչնդութ է հանդիսանում արտադրութեան համար: Դասակարգերի չքացու-մը կլինի նոյնքան անխուսափելի, որքան անխու-սափելի է եղել նրանց ծագումը անցեալում: Դա-սակարգային չքացման հետ միասին անխուսափելի

կերպով կըչքանայ եւ պետութիւնը։ Հասարակութիւնը, որ նոր ձեւով կաղմակերպելու է արտադրութիւնը — արտադրողների ազատ ու հաւասար ասսոցիացիայի հիման վրայ, կուղարէէ պետական մեքենան այնտեղ, ուր նրա իսկական տեղն է՝ հընութիւնների թանգարանը իլիկի ու բրօնդէ կացնի կուշտը»։

Ժամանակից սոցիալ-դեմոկրատիայի պրոպագանդիստական ու ազիտացիական գրականութեան մէջ շատ էլ յաճախ չէք պատահի այս ցիտատին։ Բայց նոյն իսկ այն ժամանակ, երբ այս ցիտատը պատահում է — նրան առաջ են բերում այն ձեւով, կարծես թէ մի սրբապատկերի առաջ գլուխ են խոնարհում, այսինքն ինգելսին պաշտօնական պատիւ տալու համար, առանց որևէ փորձ անելու մտասոյզ լինել այն բանի մէջ, թէ որքո՞ն խոր թափ է նախատեսնում այդ «պետական մեքենան հնութեանց թանգարանը ուղարկելու» մտքում։ Մեծ մասամբ չի երեւում անգամ այն, ինչ ինդելսը պետական մեքենայ է անւանում։

4. Պետութեան «մահացումն» ու բնի յեղափոխութիւնը։

Ինգելսի խօսքերը պետութեան աստիճանաբար վախճանման մասին լայն ժողովրդականութիւն են վայելում եւ շատ յաճախ են քաղւածօրէն մէջ բերում։ Նրանք շատ ցայտուն կերպով են ցուցադրում օպպորտիւնիզմը մարքսիզմի տեղ բանացնելու սովորական կեղծարարութեան հրացանու ու հոտը եւ գրա համար պէտք է մանրամասն կանգ այդ խօսքերի վրայ։ Մենք ամբողջապէս առաջ ենք բերում այն դատողութիւնը, որից վերցրած են այդ խօսքերը։

«Պրոլետարիատը վերցնում է պետական իշխանութիւնն ու արտադրական միջոցները նախ եւ

առաջ պետական սեփականութիւն է դարձնում։ Բայց հէնց դրանով նա ոչնչացնում է ինքն իրան, իրեւ պրոլետարիատ, հէնց դրանով նա ոչնչացնում է բոլոր դասակարգային տարբերութիւններն ու դասակարգային հակասութիւնները իսկ գրա հետ միասին եւ պետութիւնը։ Մինչ այժմ գոյութիւն ունեցած եւ ունեցող հասարակութեան, որը դասակարգային հակասութիւնների միջեւ է առաջ շարժում, պետութիւնն անհրաժեշտ էր, այսինք անհրաժեշտ էր կեղեգող դասակարգի կաղմակերպութիւնը նրա արտադրութեան արտադրին պայմանների պահպանութեան համար, ուրեմն դիմաւորապէս կեղեցւած դասակարգը բոնի կերպով պահելու տևել արտադրական ձեւով պայմանաւորաւած ճնշման մէջ (ստրկութիւն, ճորտութիւն, վարձու աշխատանք)։ Պետութիւնը ողջ հասարակութեան պաշտօնական ներկայացուցիչն էր, նրա կենտրոնացումը ականաւոր կորպորացիայի մէջ, բայց այդպիսին հանդիմանում էր նա այն չափով, որ չափով որ նա պետութիւնն էր այն զասակարգի որն իր ժամանակա-շրջանում հասարակութեան միակ ներկայացուցիչն է հանդիմանում։ Հին դարերում նա ճորտատէր-քաղաքացիների պետութիւն էր ներկայացնում, միջին դարերում՝ ֆէոդալական ազնւականութեան, մեր ժամանակ — բուրժուազիայի։ Երբ պետութիւնը իրօք դառնում է ողջ հասարակութեան ներկայացուցիչ՝ նա ինքն իրան աւելորդ է դարձնում։ Այն օրւանից, երբ չի լինի եւ ոչ մի հասարակական դասակարգ, որը պէտք է ճնշման մէջ պահել, այն օրից, երբ դասակարգային տիրապետութեան հետ միասին, արտադրութեան մէջ այժմ իշխող անարխիայից ծագող անհատական գոյութեան կուի

հետ միասին կը չփանան այն ընդհարումներն ու է-քսցեսները (ծայրայեղութիւնները), որոնք այդ կուից են ծագում, այդ իսկ օրւանից ճնշելու բան չի մնայ, ուրեմն եւ կարիք չի լինի ճնշման յատուկ ոյժի՝ — պետութեան։ Առաջին իսկ ակար, որի մէջ պետութիւնը հանդէս է զալիս իրօք որ իրեւ ողջ հասարակութեան ներկայացուցիչ — հանուր հասարակութեան անունից արտադրութեան միջոցները նրանց աէք լինելու նպատակով վերցնելու ակտը — միաժամանակ եւ նրա, իրեւ պետութեան, վերջին ինքնուրոյն ակտն է հանդիսանում։ Այն ժամանակ պետութեան հասարակական յարաբերութեանց միջամտելու դէպքերը մէկը միւսի յետեւից աւելորդ են դառնում եւ ինքն իրանց քնում։ Մարդկանց կառավարելը երկրի եւ արտադրական պրոցեսների կառավարման է փոխում։ Պետութիւնը չի «վերացւում», նա «մահանում է»։ Ահա այդ հիման վրայ պէտք է գնահատել «ազատ ժողովրդական պետութիւն» Փրազը, որ իր ժամանակ ագիտացիական նպատակով գոյութեան իրաւունք ունէր, բայց ի վերջոյ գիտական տեսակէտից անհիմն էր։ Նոյն հիմունքով պէտք է գնահատել նմանապէս եւ անարխիստների պահանջը՝ պետութիւնն այսօր-էդուց վերացնելու։

(Անտի-Դիւրինդ «Գիտութեան տապալումը և Եւգենի Դիւրինդի ձեռքով եր. 302—3, 3րդ գործ. Հրատ.) :

Առանց սփառելուց վախենալու կարելի է ասել, որ էնդեւսի այսքան մտքերով հարուստ դատողութիւնից ժամանակակից սոցիալիստական կուսակցութիւններում սոցիալիստական մտքի իրական սեփականութիւն է դարձել միմիայն այն, որ պետութիւնն ըստ Մարքսի՝ հա-

կառակ անարխիստական պետութեան «վերացման» ուսումունքին՝ «մահանում է»։

Այդպէս աղմատել մարքսիզմը, կնշանակէ մարքսիզմը օպտորտիւնիզմի վերածել, որովհետեւ այդպիսի «մէկնութիւնից» յետոյ դանդաղ հաւասար, աստիճանական փոփոխութեան մի աղօս գաղափար է ստացւում — թուիչքների ու փոթորիկների եւ յեղափոխութեան բացակայութեան մի գաղափար։ Պետութեան «մահացման» գաղափարը առօրիայ, ընդհանուր, տարածւած եթէ կարելի է ասել՝ մասսայական ըմբռնումով վերցրած անկառած յեղափոխութեան եթէ ոչ ժխտումը, գոնէ նրա քողարկումն է նշանակում։

Մինչդեռ այդպիսի «մէկնութիւնը» մարքսիզմի ամենակոպիտ և միմիայն բուրժուազիային ձեռնուու մի աղաւաղում է, որը տեսականորէն հէնց թէկուզ կնդելսի մեր ամբողջութեամբ առաջ բերած դատողութեան ամենակարեւոր հանգամանքների ու նկատումների մոռացման վրայ է հիմնած։

Առաջինը՝ այդ գատողութեան սկզբում իսկ կնդելսն ասում է, որ պետական իշխանութիւնը վերցնելով պրոլետարիատը «դրանով իսկ ոչնչացնում է պետութիւնն իրը պետութիւն»։ Թէ ի՞նչ է նշանակում այդ՝ դրա վըրայ խորհելն «ընդունած չէ»։ Սովորաբար դա կամ բոլորովին անտես է անւում, կամ կնդելսի «Հէգէլական թուլութեան» նման մի բան է համարում։ Իսկ իրօք այդ խօսքերում համառօտ կերպով արտայայտւած է ամենամեծ պրոլետարական յեղափոխութիւններից մէկի այն է՝ 1871 թւի Պարիզեան կոմմունի փորձը, որի մասին մէնք դեռ կը խօսինք։ Իրօք կնդելս այստեղ աչքի առաջ ունի բուրժուազիայի պետութեան «ոչնչացումը» պրոլետարական յեղափոխութեան միջոցով, իսկ մահացման մասին ասւած խօսքերը վերաբերում են պրո-

լետարական պետութեան մնացորդներին՝ սոցիալական յեղափոխութիւնից յետոյ : Բուրժուական պետութիւնն ըստ էնդելսի ոչ թէ «մահանում» է այլ «ոչնչացւում» է՝ սլրութարիատի ձեռքով, յեղափոխութեան միջոցով : Եւ դրանից յետոյ է, որ մահանում է պրոլետարական պետութիւնը կամ կիսապետութիւնը :

Երկրորդ՝ պետութիւնը «ճնշման յատուկ ոյժ» է : Այս հոյակապ ու վերին աստիճանի խոր բնորոշումը էնդելսը տեղի է այստեղ կատարեալ պարզութեամբ : Եւ դրանից բղխում է, որ բուրժուազիայի՝ սլրութարիատին «ճնշելու յատուկ ոյժը», միլիոննաւոր աշխատաւորների ճնշումը մի բառ ունեւորների ձեռքով, պիտի գառնայ «ճնշման յատուկ ոյժ» պրոլետարիատի ձեռքում» բուրժուազիային ճնշելու համար (պրոլետարիատի դիկտուրա) : Ճէնց դրանում է կայանում «պետութեան ոչնչացումը իբր պետութիւն» : Ճէնց դրանում է կայանում հանձնարակութեան անունից արտադրութեան միջոցները նրանց տէր լինելու նպատակով վերցնելու «ակտը» : Եւ ինքն ըստ ինքեան ակներեւ է արդէն, որ մի (բուրժուական) «յատուկ ոյժի» մի ուրիշ (սլրութարական), «յատուկ ոյժի» փոխելը ոչ մի կերպ չի կարող կատարել «մահացման» ձեւով :

Երրորդը՝ «մահացման» կամ նոյն իսկ աւելի ռէփունկ՝ «ապահովական պետութիւն» մասին է միանչք ու գունեղ՝ «նինջի» մասին էնդելսը խօսում է միանչքամայն պարզ ու որոշ այն շրջանի վերաբերմամբ, որը դարձած է «երր արդէն պետութիւնը հասարակութեան անունից գրաւած կրիխնի արտադրութեան միջոցները նըրանց տէր լինելու նպատակով» այսինքն սոցիալական յեղափոխութիւնից յետոյ : Մենք գիտենք, որ «պետութեան» քաղաքական ձեւն այդ ժամանակ լինելու է կաթարեալ դեմոկրատիա : Բայց մարքսիզմն անամօթ կերտարեալ դեմոկրատիա :

պով աղճատող օպպորտունիստներից ոչ մէկը գլուխ չի ընկնում, որ հետեւապէս այստեղ էնդելսի մօտ իսուքը դեմոկրատիայի «նինջման» կամ «մահացման» մասին է : Առաջին հայեացքից դա տարօքինակ է թւում : Բայց դա «անհասկանալի» է միմիայն նրանց համար, ով մտառու չի եղել, որ դեմոկրատիան նոյնպէս պետութիւն է, եւ ուրեմն նա եւս կըչքանայ երբ պետութիւնը չքանայ : Բուրժուական պետութիւնը միայն յեղափոխութեամբ բուրժուական պետութիւնը միայն յեղափոխութեամբ է այրող է ոչնչացւել : Պետութիւնն ընդհանրապէս, այլ կարող է միայն կարող է միայն «մասինքն լիակատար դեմոկրատիան կարող է միայն «մասինալ» :

Չորրորդ — առաջադրելով իր հոչակառը դրութիւնը — «պետութիւնը մահանում է» — էնդելսը իսկոյն կոնկրետ կերպով բացատրում է, որ այդ դրութիւնը ուղղվում է եւ օպպորտիւնիստների եւ անարխիստների դէմ : Եւ առաջին տեղում էնդելսը դրել է «պետութեան մահացման» դրութեան այն եզրակացութիւնը, որ օպպորտիւնիստների դէմ է ուղղւած :

Կարելի է գրագ գալ, որ պետութեան «մահացման» մասին կարգացած մարդկանցից 10,000 ից 9990ը բոլորին չգիտեն ու չեն յիշում, որ էնդելսն իր եզրակացութիւններն այդ դրութիւնից ուղղել է ոչ միայն անարխիստների դէմ : Իսկ մնացեալ 10 հոգուց — անշուշտ 9ը չըգիտէ, թէ ինչ է «ազատ ժողովրդական պետութիւնը» եւ ինչու յարձակել այդ լոգունգի վրայ կնշանակէ օպպորտիւնիստների վրայ յարձակել : Ահա այդպէս է դրում պատմութիւնը... Ահա թէ ինչպէս է աննկատելի կերպով կեղծւում յեղափոխական մէծ ուսմունքը, որպէս զի յարմար գայ տիրող քաղքենի ճաշակին : Անարխիստների դէմ ուղղւած եզրակացութիւնը հազար անգամ կրկնել, գուեհացման է ենթարկել ու մտցւել

մարդկանց՝ գլուխը՝ ամենասպարզ ձեւով՝ նախառաջաշամունքի մայնութիւն ստացել։ Խակ օպպորտիւնիստները ուղարկմ ուղղւած եղբակացութիւնը քօղարկել են ու «մոռի գէմ ուղղւած եղբակացութիւնը» քօղարկել են ու «սուսացել»։

«Ազատ ժողովրդական պետութիւնը» 70 ական թւականների գերմանական սոցիալ – գեմոկրատների ծրագրային պահանջն ու սովորական լոգունգն է եղել։ Այդ լոգունգի մէջ չկայ ոչ մի քաղաքական բովանդակութիւն բացի գեմոկրատիա հասկացողութեան քաղենիօրէն – փուն նկարագրութիւնից։ Որ չափով որ նրա մէջ լեզար կերպով ակնարկում էին գեմոկրատիկ հանրապետութիւնը՝ այն չափով ինդելու պատրաստ էր «Ժամանակաւորապէս» արդարացնել։ Այդ լոգունգը ագիտատորական տեսակէտից։ Սակայն այդ լոգունգն օպպորտիւնիստական էր, որովհետեւ նա ոչ միայն բուրժուական գեմոկրատիային սոցիալիստական ներկ քսել է, այլ եւ առհասարակ պետութեան սոցիալիստական քննադատութեան անհասկացողութիւն։ Մենք կողմնակից ենք գեմոկրատիկ հանրապետութեան՝ իրեւ պրոլետարիատի համար լաւագոյն պետական ձեւի կապիտալիզմի շրջանում, բայց մէնք իրաւոնք չունենք մոռանալու, որ վարձուստրկութիւնը բաժին է ընկնում ժողովրդին նոյնիսկ ամենադեմոկրատիկ հանրապետութեան մէջ։ Եւ յետոյ՝ ամեն պետութիւն ճնշւած գասակարգը «խեղելու յատուկ մի ոյժ է»։ Դրա համար՝ ամեն մի պետութիւն ոչ պատ է եւ ոչ ժողովրդական։ 70 ական թւականներին Մարքսն ու ինդելու բազմից բացատրել են այդ իրանց կուսակցական ընկերներին։

Հինդերորդ՝ ինդելու նոյն գրւածքում, որի միջից բոլորն իրանց մտքում պահել են պետութեան պատճանական մահացմանը» վերաբերող դատողութիւնը կայ

եւ բոնի յեղափոխութեան նշանակութեանը վերաբերուող մի դատողութիւն։ Դրա ունեցած գերի պատմական գընահատութիւնը ինդելու մօտ բոնի յեղափոխութեան մի խակական պահեղիրիկ է դառնում։ Այդ բանը «ոչ ոք չի յիշում», այդ մարքի նշանակութեան մասին խօսելը, նոյն իսուբէլն ընդունեած չէ ժամանակակից սոցիալիստական կուսակցութիւնների մէջ եւ մասսաների մէջ մզուղ առօրեայ աղիտացիայում եւ պրոպագանդում այդ մտքերը ոչ մի գեր չեն խաղում։ Մինչդեռ այդ մտքերը պետութեան աստիճանական «մահացման» հետ անխղելի կերպով կապւած են եւ մի ներդաշնակ ամբողջութիւն են կազմում։

Ահա ինդելու այդ դատողութիւնը՝

...«Այդ բանութիւնը պատմութեան մէջ մի այլ դեր էլ է կատարում (բացի չարիք գործելուց), այն է՝ յեղափոխական ու որ նա ըստ Մարքսի, առմայլ է հանդիսանում հին հասարակութեան ամար, երբ վերջինը յդի է նորով, որ բռնութիւնը հանդէս է գալիս իրեւ այն դէնքը, որով հասարակական շարժումն իր համար ճանապարհ է բաց անում եւ փշրում քարացած, մահացած քաղաքական ձեւերը — այդ ամենի մասին պ. Դիւրինդի մօտ չըկայ եւ ոչ մի բառ։ Եւ ախ ու վախ քաշելով միայն նա հնարաւոր է համարում, որ հարստահարիչ տնտեսութիւնը խորտակելու համար գուցէ տարաբախտաբար հարկ լինի բռնութիւն գործադրելու, տարաբախտաբար, որովհետեւ իրը թէ բռնութիւնը անբարոյականաշնում է նրան, ով այդ բռնութիւնը գործադրում է։ Եւ այդ ասւում է Գերմանիայում, ուր բոնի ընդհարումը, ուրը կարող են

փաթաթել ժողովրդի շինքին, կունենար այն առաւելութիւնը, որ դուքս կը վանէր 30 ամեայ պատերազմի ստորացութիւնների հետեւանքով աղջային գիտակցութեան մէջ մտած ստրկութեան ողին։ Եւ այդ անգոյն, թուլամորթ, անոյժ տէրտէրական մտածողութիւնը համարձակուում է առաջարկել, որ ընդունէ իրան պատմութեան ճանաչած կուսակցութիւններից ամենայեղափոխականը։ (Եր. 193 գէլմ. Յրդ տպագր. II բաժնի IV գլխի վերջը)։

Ինչպէս կարող են միանալ միեւնոյն ուսմունքի մէջ րոնի յեղափոխութեան նւիրւած այդ ներբողը՝ որ ինգելսն անդադար մատուցանում է գերմանական սոցիալ գեմոկրատներին 1878 թւականից մինչեւ 1894, այսինքն մինչեւ իր մահը, պետութեան աստիճանական «մահացման» թէորիայի հետ։

Սովորաբար միացնում են մէկն ու միւսը, էկեկտիցիզմի միջոցով, կամ անգաղափարական, սովետական ձեւով դուքս խլելով ըստ իրենց քմահաճոյքի (կամ իշխանութիւն ունեցողներին դուք գալու նպատակով) մէկ այս մէկ միւս զատողութիւնը, ըստ որում 100ից 99 դէպրում առաջ են քաշում հէնց աստիճանական «մահացումը»։ Մեր օրերի պաշտօնական սոցիալ-գեմոկրատիայի գրականութեան մէջ այդ վերաբերմունքը դէպի մարքսիզմը ամենասովորական ու ամենատարածւած երեւյթ է։ Այդ փոխարինումը իհարկէ նորութիւն չէ։ այդ բանը գիտել են նոյն իսկ յունական կլասիկ փիլիսոփայութեան պատմութեան մէջ։ Երբ օպարորտիւնիզմը հանդէս է բերում իրրեւ մարքսիզմ, էկեկտիզմն էլ հանդէս է գալիս իրրեւ գիտելեալիկա եւ ամենահեշտ կերպով խարում է մասսաներին, նրանց երեւյթական բաւարարութիւն է տալիս, իբր թէ հաշւի է առնում պրոցեսի բոլոր

կողմերը, զարգացման բոլոր տենդենցները, բոլոր հակասական աղղեցութիւնները եւ այն, իրօք բնաւ չի տալիս հասարակական զարգացմուն պրոցեսի ամբողջական եւ յեղափոխական ըմբռնում։

Վերը մենք արդէն ասացինք եւ յետագայ շարադրութեան մէջ աւելի մանրամասնօրէն ցոյց կըտանք, որ Մարքսի ու ինգելսի ուսմունքը բոնի յեղափոխութեան անխուսափելութեան մասին վերաբերում է բուրժուական պետութեան։ Այդ պետութիւնը պրոլետարական պետութիւն (պրոլետարիատի գիլտատուրա) չի կարող դառնալ աստիճանական «մահացման» միջոցով, այլ, ըստ ընդհանուր կանոնի՝ լոկ բոնի յեղափոխութեան միջոցով։ Այն ներբողը, որ ասում է ինգելսը բոնի յեղափոխութեան համար եւ որը կատարելապէս համապատասխան է Մարքսի բազմիցս արած յայտարարութիւններին (յիշենք «Փիլիսոփայութեան խեղճութեան» վերջն ու «Կոմմունիստական Մանիֆեստը», ուր բացայստ ու հպարտ կերպով յայտարարուած է բոնի յեղափոխութեան անխուսափելութեան մասին, յիշենք Գոթի 1875 թ. ծրագրի քննադատութիւնը գրեթէ երեսուն տարի անց, — ուր Մարքսն անխնայ կերպով մտրակում է այդ ծրագրի օպպորտիւնիզմը) — այդ ներբողը բնաւ «ողեւորութեան» արդիւնք չէ, բնաւ գեկլամացիա չէ, ոչ էլ պոլեմիկային մի ձեւ։ Այն միտքը, թէ անհրաժեշտ է սիստեմատիկ կերպով կրթել մասսաներին, ներչնչելով նրանց այդ եւ հէնց այդ տեսակէտը բոնի յեղափոխութեան վրայ Մարքսի եւ ինգելսի ողջ ուսմունքի հիմունքներից մէկն է կազմում։ Այժմ տիրող սոցիալ-շուզինիստ եւ կատակիսական հոսանքի դաւաճանութիւնը Մարքսի եւ ինգելսի ուսմունքին յատկապէս ցայտուն կերպով արտայայտում է նրանում, որ այդ երկու հո-

սանքն էլ մոռացութեան են մատնում այդպիսի պրոպա-
գանդի, այդպիսի ազիտացիայի անհրաժեշտութիւնը։
Բուրժուական պետութիւնը չի կարող պրոլետարական
պետութիւն գառնալ առանց բանի յեղափոխութեան։ Պը-
րոլետարական պետութեան ոչնչացումը, այսինքն պե-
տութեան իրա ոճացումն, անհնար է այլ կերպ, քան
աստիճանական «մահացման» եղանակով։ Մարքսն ու ին-
գելսն այդ տեսակէաները կոնկրետ ու մանրազնին կեր-
պով արձարծում են ուսումնասիրկելով ամեն յի յեղափո-
խական սիստեացիա, անալիդի ենթարկելով ամեն մի յե-
ղափոխութեան փորձի դասերը։ Եւ մենք այժմ կանցնենք
դէպի նրանց ուսմունքի այդ անպայման կարեւորագոյն
մասը։

Գ լ ո հ և Ա.

ՊԵՏՈՒԹԻՒՆ ԵԽ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ։

1848—1851 թ. ՓՈՐՁԵՒ :

1. Յեղափոխութեան նախօրեակը։

Ամբողջացած մարքսիզմի առաջին երկերը՝ «Փիլի-
ոսոփայութեան խեղճութիւնն» ու «Կոմմունիստական
Մանիֆեստը» 1848 թ.-ի յեղափոխութեան հէնց նա-
խօրեակին են լոյս տեսել։

Այդ հանգամանքն է պատճռու, որ այդտեղ մարք-
սիզմի ընդհանուր հիմունքների բացատրութեան հետ
միասին մենք գտնում ենք որոշ չափով եւ այն շրջանի
յեղափոխական սիստեացիայի ցոլացումը։ Դրա համար
թում է, որ աւելի նպատակայարմար կըլինի նախ քան
Մարքսի եւ ինգելսի 1848—1851 թաւկանների փորձից
արած եղակացութիւններին անցնելը՝ քննել թէ ինչ են
ոսում նրանք պետութեան մասին։

...Բանուոր զասակարգը, զրում է Մարքսը «Փի-

լիսովայութեան խեղճութիւն» մէջ, զարգացման
ընթացքում, հին բուրժուական հասարակութեան
տեղ կըհաստատէ մի այնպիսի ասսոցիացիա, որը
ոչնչացնում է զասակարգերն ու նրանց ներհակու-
թիւնը։ Այլեւ չի լինի բուն քաղաքական իմաստով
իշխանութիւն, որովհետեւ հէնց քաղաքական իշ-
խանութիւնը դասակարգերի ներհակութեան պաշ-
տօնական արտայալում է հանդիսանում բուրժուա-
կան հասարակութեան մէջ։ (1885 թ. գերմ. հրատ.
եր. 182)։

Ուսանելի կըլինի դասակարգերի ոչնչացումից յե-
տոյ պետութեան չքացման վերաբերող մաքի այս ընդ-
հանուր արտայալութիւնը համեմատել այն արտայա-
լութեան հետ, որ գտնում ենք Մարքսի եւ ինգելսի դրա-
նից մի քանի ամիս անց, այն է 1847 թվի նոյեմբերին
դրած «Կոմմունիստական Մանիֆեստի» մէջ։

...«Նկարագրելով պրոլետարիատի զարգաց-
ման ամենալազնդհանուր Փազերը, մենք հետեւում
էինք գոյութիւն ունեցող հասարակութեան ներ-
ում կատարող քիչ թէ շատ քաղաքաւած քաղաքա-
ցիական կուին մինչեւ այն կէտը, եթբ այդ քաղա-
քացիական կուիը բացարձակ յեղափոխութիւն է
դառնում և պրոլետարիատը բուրժուազիայի բռնի
խորտակման միջոցով իր տիրապետութիւնն է հա-
տառում . . .»

...«Վերը մենք արդէն տեսանք, որ բանուրա-
կան յեղափոխութեան մէջ առաջին քայլը պրոլե-
տարիատի տիրող գասակարգ գանձնին է, դեմոկ-
րատիայի ձեռք բերելը»։

«Պրոլետարիատն իր քաղաքական տիրապետու-
թութիւնը օգտագործելու է այնպէս, որ աստիճա-
նաբար խլէ բուրժուազիայից ողջ կապիալը, ար-

տաղբութեան բոլոր գործիքները կենտրոնացնէ պետութեան ձեռքում, այսինքն իբրեւ տիրող դասաւարդական կարգ կազմակերպւած պլուետարիատի ձեռքում, եւ հնարաւորին չափ արագ շատցնէ արտադրական ոյժերի գումարը»: (1906 թւի գերմ. 7-րդ հրատ. 31 եւ 37 եր.):

Այստեղ մենք տեսնում ենք մարքսիզմի պետութեան խորին վերաբերող ամենանշանաւոր ու կարեւորագոյն գաղափարներից մէկը, այն է՝ «պլուետարիական գիշտատառայի» (ինչպէս Մարքսն ու Էնգելման սկսեցին ասել Պարիզի կոմմունից յետոյ) գաղափարը եւ ազա պետութեան վերին աստիճանի հետաքրքիր բնորոշումը, որ նոյնպէս «մոռացւած խօսքերի» թւին է պատկանում: «Պետութիւն, այսինքն իբրեւ տիրող դասակարգ կազմակերպւած պրոլետարիատ»:

Բաւական չէր, որ պաշտօնական սոցիալ-դեմոկրատական պրոպագանդային ու ագիտացիական տիրող գլուքականութեան մէջ այդ բնորոշումը «չ միայն երթէք չէր բացատրում, այլ նա մոռացման էր մատնւած, որովհետեւ այդ բնորոշումը ոչ մի կերպ չէր կարելի հաշտեցնել ու փորմիզմի հետ, որովհետեւ նա մերկացնում ու խորակում էր «զեմոկրատիայի խաղաղ զարգացման» սովորական օպպորտիւնիստական նախալաշարմունքները ու մեշտական իլիւզիաները (ցնորքները):

Պրեկտարիատին հարկաւոր է պետութիւն: Այս բանը կրկնում են բոլոր օպպորտիւնիստները, սոցիալ չուվինիստներն ու կառւցիւհականները, հաւատացներով, որ այդ է Մարքսի ուսմունքն, ու «մոռանալով» աւելացնել, որ նախ ըստ Մարքսի պլուետարիատին հարկաւոր է միայն աստիճանաբար-մահացող պետութիւն, այսինքն մի պետութիւն կազմւած այնպէս, որ իսկոյն սկսի մա-

հանալ եւ անկարող լինի չըմահանալու եւ երկրորդ — աշխատաւորներին հարկաւոր է «պետութիւն», «այսինքն իբրեւ տիրող դասակարգ կազմակերպւած պլուետարիատ»:

Պետութիւնը ոյժի յատուկ կազմակերպութիւն է, բռնութեան կազմակերպութիւն — որեւէ դասակարգի ճնշելու համար: Ո՞ր դասակարգին պէտք է ճնշէ պրո-լետարիատը: Իհարկէ շահագործող դասակարգին — այսինքն բուրժուազիային: Աշխատաւորներին պետութիւնը հարկաւոր է միմիայն շահագործողների դիմադրութիւնը ճնշելու համար եւ զեկավար լինել այդ ճնշման գործում, կեանքում իրականացնել այդ ճնշումը ճեռնհասէ միմիայն պլուետարիատը, իբրեւ միակ դասակարգը, որ յեղափոխական է, մինչեւ վերջը, իբրեւ միակ դասակարգը, որ ընդունակ է միացնել բոլոր աշխատաւորներին ու շահագործողներին բուրժուազիայի գէմ կըռ-մլու եւ նրան տապալելու համար:

Շահագործող դասակարգերին քաղաքական տիրապետութիւնը հարկաւոր է շահագործումը պահպանելու համար, այսինքն — չնչին փոքրամասնութեան շահամութիւնը պաշտպանելու համար ընդդէմ ժողովրդի աշազին մեծամասնութեան: Իսկ շահագործող դասակարգերին քաղաքական տիրապետութիւնը հարկաւոր է ամեն շահագործում ոչնչացնելու համար, այսինքն — յօդուած ժողովրդի ահազին մեծամասնութեան ընդդէմ ժամանակակից ճորտատէրերի, այսինքն՝ կապիտալիստների եւ կալւածատէրերի չնչին փոքրամասնութեան:

Մանր բուրժուական դեմոկրատները, այդ իբր թէ սոցիալիստները, որ դասակարգային պայքարը փոխարինում էին դասակարգերի համաձայնութեան ցնորքներով՝ սոցիալիստական վերանորոգումն էլ պատկերացնում էին որպէս ցնորողներ, ոչ թէ իբրեւ հարստահա-

բող դասակարգի բոնի խորտակում, այլ այնպէս, որ իբր թէ փոքրամասնութիւնը խաղաղ կերպով պիտի հպատակւի իր գերը ճանաչած մէծամասնութիւնն: Այդ մանր բուրժուական ուսուպիան, անխղելի կերպով կապւած է պետութիւնը գեր դասակարգային համարելու հետ՝ զործնականում առաջ էր բերում աշխատաւոր դասակարգերի շահերի ինչպէս այդ ցոյց տևեց, օրինակ, 1848 եւ 1871 թ. Փրանսիական յեղափոխութեանց պատմութիւնը, ինչպէս այդ ցոյց տևեց «սոցիալիստների» բուրժուական մինհստրութիւնների մէջ մասնակցելու փորձը Անդիայում, Ֆրանսիայում, Բուլիայում եւ այլ երկրներում 19րդ դարի վերջում եւ 20-րդի սկզբում:

Մարքսն իր ողջ կեանքում կուել է այդ մանր բուրժուական սոցիալիզմի դէմ, որն այժմ վերածնել է Ռուսայում էսէլների եւ մենչեւիների կուսակցութեանց չնորհիւ: Մարքսը դասակարգային կուի ուսմունքը հետեւողական կերպով հասցրել է մինչեւ քաղաքական իշխանութեան ուսմունքը, մինչեւ պետութիւնն ուսմունքը:

Միայն պրոլետարիատն է, որ կարող է խորտակել բուրզուազիայի տիրապետութիւնը, միայն պրոլետարիատը իրերեւ յատուկ մի դասակարգ, որի գոյութեան տնտեսական պայմանները պատրաստում են նրան եւ ոյժու հնարաւորութիւն են տալիս նրան իրագործելու այդ խորտակումը: Մինչդեռ բուրժուազիան փոշիացնում ու ցիրցան է անում գիւղացիութիւնն ու բոլոր մանր բուրժուական խաւերը, նա համարմառում, ամփափում կաղմակերպում է պրոլետարիատը: Միայն պրոլետարիատն է, որ չնորհիւ խոչըր արդիւնաբերութեան մէջ իր կատարած գերի ընդունակ է առաջնորդ լինել բոլոր աշխատաւոր ու հարսւահարսող մասսաների, որոնց բուրժուազիան շահագործում է, ճնշում ու նեղում շատ յաճախ ոչ պակաս, այլ նոյնիսկ աւելի քան պրոլետարնե-

րին եւ որոնք սակայն անընդունակ են իրանց ազատման համար ինքնուրոյն կերպով կուի մզելու:

Դասակարգային պայքարի ուսմունքը, որ կիրառել է Մարքսը պետութեան եւ սոցիալիստական յեղափոխութեան ինդրի նկատմամբ անհրաժեշտ հետեւողականութեամբ, հարկադրում է ընդունել պրոլետարիատի քաղաքական տիրապետութիւնը, նրա դիկտատուրան, այդպահան սիրապետութիւնը, որ անմիջական սինքն — նրա միահեծան իշխանութիւնը, որ անմիջական կերպով յենած է մասսաների զինւած ոյժի վրայ: Բուրժուազիայի տապալումը կարող է իրականանալ միմիայն այն ժամանակ, երբ պրոլետարիատը կըդառնայ տիրող դասակարգ, որն ընդունակ է ըստինի ճնշել բուրժուազիայի անխուսափելի, յուսահատ զիմալդրութիւնը եւ կազմակերպել տնտեսական նոր ձեւի համար բոլոր աշխատող ու շահագործուղ մասսաները:

Պրոլետարիատին հարկաւոր է պետական իշխանութիւն, կենարոնացրած կազմակերպութիւն, բոնութեան կազմակերպութիւն թէ շահագործողների զիմալդրութիւնը ճնշելու համար եւ թէ սոցիալիստական տնտեսութիւնը «սարքի բերելու» գոյծում զեկավար հանդիսանալու բնակչութեան ահազին մասսայի համար՝ գիւղացիութեան, մանր բուրժուազիայի եւ կիսամըրութեարների համար:

Դաստիարակելով՝ բանուրական կուսակցութիւնը՝ մարքսիզմը դաստիարակում է պրոլետարիատի աւանդարբանացը, որն ընդունակ է իշխանութիւնն իր ձեռքն առնել եւ տանել ողջ ժողովուրդը գէպի սոցիալիզմը, ուղղել ու կազմակերպել նոր կարգը, մինել ուսուցիչ, զեկավարու առաջնորդ բոլոր աշխատող ու շահագործուղների իրենց հասարակական կեանքը առանց բուրժուազիայի եւ ընդդէմ բուրժուազիաի կազմակերպելու շինարար գործում: Խոկ այժմ տիրող օպպորտիւնիզմն ընդհակա-

ռակը, դաստիարակում է մասսայից կտրւող ներկայացուցիչներ, աւելի լաւ վարձատրւող բանւորներ, կապիտալիզմի շրջանում «իրենց բանը սարգողներ», ոսպապուրի գնով իրանց անդրանկութեան իրաւունքը վաճառողներ, այսինքն՝ ընդդէմ բուրգուազիայի ժողովրդի յեղափոխական առաջնորդների դերից հրաժարւողներ:

«Պետութիւն՝ այսինքն իրեւ տիրող դասակարգ կազմակերպւած պրոլետարիատ»— Մարքսի այս թէորիան անխօնի կերպով կապւած է նրա պրոլետարիատի պատմութեան մէջ ունեցած յեղափոխական դերի վերաբերեալ ողջ ուսմունքի հետ։ Այդ դերի կատարումը պրոլետարական դիկտատորան է, պրոլետարիատի քաղաքական տիրապետութիւն։

Բայց եթէ պրոլետարիատին հարկաւոր է պետութիւն, իրեւ բոնութեան յատուկ մի կազմակերպութիւն ընդդէմ բուրժուազիայի՝ ապա սրանից ինքնիրան բըղիսում է հետեւեալ հարցը։— Հնարաւոր է արդեօք ստեղծել այդպիսի մի կազմակերպութիւն՝ առանց նախօրօք ոչնչացնելու, առանց խորտակելու այն սկսական մեքենան, որն ստեղծել է բուրժուազիան իրա համար։ Այդ հարցին մօտեցնում է «Կոմմունիստական Մանֆեստը» եւ այդ հարցի մասին խօսում է Մարքսը 1848—1851 թ. յեղափոխութեան փորձի հաշւեյարդար կատարելիս։

2. Յեղափոխութեան հաւելյարդար։

Պետութեան խնդրի նկատմամբ, որը մեղ հետաքըրքը քրում է, Մարքսը 1848—1851 թ. յեղափոխութեան հաշւեյարդար է կատարում իր հետեւեալ դատողութեամբ «Լուի Բոնապարտի Բրիւմերի 18» գրւածքում։

...Սակայն յեղափոխութիւնը հիմնաւոր է։ Նա դեռևս մաքրանով անցնելու ձանապարհին է գտնւում։ Նա իր գործը կատարում է մեթոդիկ կերպով։ Մինչեւ 1851 թւի դեկտեմբերի 2-ի (Լուի Բո-

նապարտի ձեռքով յեղաշրջում կատարելու օրը) նա վերջացրեց իր պատրաստական աշխատանքի կէսը վերջացրեց այժմ նա միւս կէսն է վերջացնում։ Նա նախ կաեւ այժմ նա միւս կէսն է վերջացնում։ Նա նախ կատարելութեան է հասցնում պարլամենտական իշխանութիւնը, որպէս զի հնարաւորութիւն ունենայ նրան տապալելու։ Եւ այժմ, երբ այդ արւած է, նա գործադիր իշխանութիւնն է կատարելութեան հասցընում, տանելով նրան մինչեւ իրա մաքուր արտայայտութեան տասիճանը եւ նրան մեկուսացնելով, իրեւ միակ կշտամբանք իր առաջն է բերում նրան, իրա համար, որպէս զի կենտրոնացնէ նրա դեմ աւերան բոլոր ոյժերը (նոտրգիրը մերն է)։ Եւ երբ որ յեղափոխութիւնը կըվերջացնէ իր նախապարաստական աշխատանքի այդ երկորդ մասը, այն ժամանակ Եւրոպան տեղիցը վեր կը կենայ ու ցնծագին կասէ՝ «զու լաւ ես փորում պառաւ խլուրդ»։

«Այդ գործադիր իշխանութիւնը իր բիւրոկրատական ու ուղմական ահագին կազմակերպութեամբ, իր բարդագոյն եւ արհկատական պետական մեքենայով, չինովնիկների այդ կէսմիլիպոնանոց զօրքով մի այլ կէսմիլիպոնանոց զօրքի կողքին, այդ սոսկալի պարագիտօրդանիզմը, որ ցանցի նման փաթաթում է Փրանսիական հասարակութեան ողջ մարմինը ու լցնում նրա բոլոր ծակոտիքը՝ ծագել է արսոլիւտիստական միապետութեան շրջանում աւատական կարգի (Փէողալիզմի) անկման ժամանակ, անկման, որն այդ օրդանիզմն օգնում էր արագացնելու։ Փրանսիական առաջին յեղափոխութիւնը զարգացրեց կենտրոնացումը «Բայց միժամանակ ընդլայնեց կառավարական իշխանութեան տարածութիւնը, ատրիբուտներն ու օգնականների թիւը։ Նապոլէոնը

լրացրեց այդ պետական շէնքը» : Լեզվատիմ միապետութիւնն ու յուղիսեան միապետութիւնը «ոչինչ նոր բան չաւելացրին , բացի աշխատանքի բաժանումն աւելացնենուց» :

...«Վերջապէս պարլամենտական հանրապետութիւնը յեղափոխութեան դէմ կուելիս ստիպւածէր ուեպրեսսիւ միջոցների հետ միասին ուժեղացնելնաւ կառավարական իշխանութեան միջոցներն ու կենտրոնացումը : Բոլոր յեղացրումները փշընու փոխարէն կատարելագործում էին այդ մեքենան (նոտրգիբը մերն է) : Տիրապետութեան համար կուող եւ մէկը միւսի տեղը բռնող կուսակցութիւնները իրանց յաղթութեան գէպքում՝ խլելիք գլխաւոր աւարը պետական այդ հոկայական շէնքն էին համարում : (Առև Բոնապարտի Բրիւմերի 18 , եր . 98—99 , 4-րդ հրատ . Համբուրգ . 1907 թ.) :

Այս նշանաւոր դասողութեան մէջ մարքսիզմը մի աշագին քայլ առաջ է դնում «Կոմմունիստական Մանիֆեստից» : Այստեղ պետութեան խնդիրը դրւում էր ղեռեւ բոլորովին արտարակու , ամենաընդհանուր հասկացողութիւններով՝ ու արտայայտութիւններով : Այստեղ հարցը դրւում է կոնկրետ կերպով եւ եզրակացութիւնն արտում ծայր աստիճան ճշգրիտ , որոշ , զործնականապէս շօշափելի : Բոլոր նախկին յեղափոխութիւնները կատարելագործել են պետական մէքենան , մինչդեռ նըրան պէտք է փշրել , խորտակել :

Այդ եզրակացութիւնը գլխաւորն ու հիմնականն է մարքսիզմի պետական ուսմունքի մէջ : Եւ այդ հիմնականը ոչ միայն մոռացման է մատնել տիրող պաշտօնական սոցիալ-դեմոկրատական կուսակցութեանց կողմից , այլ եւ ուղղակի ալլավալւում է (ինչպէս կըտեսնենք

քիչ յետոյ) Երկրորդ ինտերնացիոնալի ամենանշանաւոր թէորետիկ կ . կառուցկու կողմից :

«Կոմմունիստական Մանիֆեստում» կատարւած է պատմութեան ընդհանուր հաշւեյարգար , որն ստիպում է նկատել պետութիւնն իրեւ դասակարգային տիրապետութեան օրդան եւ անհրաժեշտորէն եզրակացնել , որ պրոլետարիատը չի կարող խորտակել բուրժուազիային առանց նախօրօք քաղաքական իշխանութիւն . նամակու , առանց քաղաքական տիրապետութիւն ձեռք բերելու , առանց պետութիւնը «իրեւ տիրող դասակարգ կազմակերպութեարիատ» դարձնելու եւ որ այդ պրոլետարական պետութիւնը իր յաղթութիւնից յետոյ անմիջապէս կսկսի մահանալ , որովհետեւ դասակարգային հակառական մէկներից զուրկ հասարակութեան մէջ պետութիւն հարկաւոր չի եւ անհնար է : Այստեղ հարց չի դըրւած թէ պատմական զարգացման տեսակէտից ինչ կերպով պիտի բուրժուական պետութիւնը պրոլետարականի փոխիւ :

Ճէնց այդ հարցը Մարքսը դնում է եւ լուծում 1852 թին : Հաւատարիմ մնալով իր գիւղակական մատերիալիզմի փիլիսոփայութեանը , Մարքսն իրեւ հինգ վերցնում է 1848 — 1851 յեղափոխութեան մէծ տարիների վորձը : Այստեղ եւս ինչպէս միշտ Մարքսի ուսմունքը հանդիսանում է վորձի հաշւեյարգար՝ փիլիսոփայական խոր աշխարհայեացքով եւ պատմութեան ճոխ դիտութեամբ լուսաբանւած :

Պետութեան խնդիրը դրւում է կոնկրետ . պատմականորէն ինչպէ՞ս է ծագել բուրժուական պետութիւնը , բուրժուազիայի տիրապետութեան համար անհրաժեշտ պետական մէքենան : Արակիսի՞ փոփոխութիւններ է կըել նա , ի՞նչ էւոլիցիայի է ենթարկել բուրժուական

յեղափոխութեանց ընթացքում եւ ճնշւած դասակարգերի ինքնուրոյն ապստամբութեանց դիմաց : Ո՞րն է պրոլետարիատի անելիքը այդ պետական մեքենայի նկատմամբ :

Բուրժուական հասարակութեան յատուկ կենտրոնացած պետական իշխանութիւնը ծագել է արսոլիւաիդմի անկման շրջանում : Այդ Պետական մեքենայի ամենաբնորոշ հաստատութիւններն են՝ չինովնիկութիւնն ու մշտական զօրքը : Այն մասին՝ թէ ինչպէս այդ հաստատութիւնները բիւրաւոր թելերով կապւած են հէնց բուրժուազիայի հետ, բազմիցս խօսւում է Մարքսի ու Էնդելսի գրածներում : Ամեն մի բանորի փորձը կատարելապէս ազդու եւ չօշափելի կերպով բաց է անում այդ կապը : Բանուոր դասակարգն իր կաշչի վրայ է սովորում ճանաչել այդ կապը — ահա թէ ինչու այնքան ճիշտ է ըմբռում եւ հիմնաւոր կերպով իւրացնում այդ կապի անհրաժեշտութեան վերաբերեալ գիտութիւնը, այն գիտութիւնը, որ մանր բուրժուական դեմոկրատները կամ տգիտորէն ու թեթեւամտօրէն ժխտում են, կամ աւելի եւս թեթեւամտօրէն ընդունում են «ընդհանրապէս», մոռանալով համապատասխան եզրակացութիւններն անելու : Չինովնիկութիւնն ու մշտական զօրքը «պարագիտ» են բուրժուական հասարակութեան մարմնի վրայ, պարագիտ, որին հասարակութիւնը ծւատող ներքին հակառակութիւններն են ծնել, բայց իսկ որ կենսական ծակուիքը խցկող պարագիտ : Պաշտօնական սոցիալ-դեմոկրատիայի մէջ ներկայումս տիրող կառուցկիական օպպորտիւնիզմը պետութիւնը պարագիտական օրգանիզմը համարող հայեցակէտը նկատում է իրքեւ անարիխիզմի բացառիկ ու յատուկ սեփականութիւն : Իհարկէ մարքսիզմի այդ պահաւաղումը չափ օգտակար է այն քաղքենիներին, որոնք «հայրենիքի պաշտպանութիւն» հասկացողութիւ-

նը գործադրելով՝ ու ցիւալիզմը իմպերիալիստական պատերազմն արդարացնելու եւ գեղեցկացնելու ըսուած մշտական կութեան հասցըին, բայց ունուամենայնիւ դա անսպայման աղաւառում է :

Աւատականութեան անկումից յետոյ Եւրոպան բարձրթիւ բուրժուական յեղափոխութիւններ է տեսել եւ մաթիւ բուրժուական յեղափոխութիւնները զարգացրել, կատարելաբոլոր յեղափոխութիւնները զարգացրել, կատարելաբոլոր գործել ու ամրապնդել են այն չինովնիկական ու ռազմական ապագարատը : Մասնաւորսպաէս հէնց մանր բուրժուազիային, որ գրաւում են խոչըր բուրժուազիայի կողմը եւ հպատակեցնում վերջինին այդ ապագարատի միջոցով, որը գիւղացիութեան, մանր արհնոստաւորների եւ առեւտրականների վերին խաւերին եւ այլն տալիս է համեմատաբար յարմար, հանգիստ ու պատաւոր պաշտօններ, որոնք այդ պաշտօնատէրերին ժողովրդից քարձր են գասում : Վերցրէք այն, ինչ կատարեց Ռուսաստանում 1917 թ. փետրարի 27-ից յետոյ կէս տարւայ ընթացքում : Չինովնիկական պաշտօնները, որ առաջ առաւելապէս ուեւ հարիւրականներին էին տրում, կատէղների, մենչեւիկների-ու էսէրների աւարի առարկան գարձան :

Ոչ մի լուրջ ուժորմի մասին իրօք դրանք չեն մտածել, աշխատելով յետաձգել ու ֆորմները «մինչեւ հիմնադիր ժողով»՝ իսկ հիմնադիր ժողովը քիչ-քիչ յետաձգել մինչեւ պատերազմի վերջը : Իսկ աւարը բաժանելիս, մինիստրների, նրանց օգնականների, դեներալ գուրենատորների եւ այլ պաշտօններն ստանձնելու համար չին սպասում ոչ մի հիմնադիր ժողովիք : Կառավարութեան կազմին վերաբերող կոմբինացիաների խաղն ըստ էութեան «աւարի» բաժանման եւ վերբաժանման արտայայտութիւնն է եղել եւ այդ աւարաբաժանումն անց է կացել վերեւում ու ներքեւում, ողջ երկ-

րում, ողջ կենտրոնական ու տեղական վարչութեան մէջ: Եւ եթէ օբիեկտիւ հաշւեյարդար կատարենք 1917 թւի փետրւարից մինչեւ օգոստոսի 27 անցած կեսամեակի նկատմամբ, պարզ պիտի տեսնենք, որ ուժորմները յետաձգւած են, իսկ չինովնիկական տեղերի բաժանումը կատարւած եւ բաժանման պահին եղած «սխալները» մի քանի վերաբաժանումների միջոցով ուղղված:

Բայց որքան որ չառ են կատարում չինովնիկական ապարատի «վերաբաժանումները» զանազան բարժուական ու մաշուրութուական կուսակցութիւնների միջեւ (կատենների, էսէրների և մենչեւիկների միջեւ, եթէ ուստական օրինակը վերցնելու լինենք), այնքան աւելի է պարզում ճնշւած դասակարգերի եւ նրանց գլուխը կանդնած պրոլետարիատին իրանց անհաշտ թշնամական դիրքը դէպի ողջ բուրժուական հասարակութիւնը: Եւ այստեղից է, որ բոլոր բուրժուական կուսակցութիւնների համար նոյնիսկ ամենազեմոկրատիկ ու «յեղափոխական - դեմոկրատիկ» կուսակցութիւնների համար անհրաժեշտութիւն է ծագում՝ ուժեղացնել ուսպիսասիաները յեղափոխական պրոլետարիատի դէմ, ամրապնդել ուսպիսասիաների ապարատը, այսինքն՝ նոյն պետական մեքենան: Իրերի այդ ընթացքը հարկադրում է, որ յեղափոխութիւնը «կենտրոնացնէ աւերման բոլոր ոյժերը» ընդդէմ պետական իշխանութեան, հարկադրում է հարց գնել ոչ թէ պիտական մեքենացի լաւացման մասին, այլ նրա խորտակման, ոչնչացման մասին:

Լոգիքական դասողութիւնները չեն, որ ստիպել են խնդիրն այդ կերպ դնել, այլ անցքերի իրական զարգացումը, 1848–1851 թ. կենդանի փորձը: Թէ որ ստիպան խիստ կերպով է Մարքսը պատմական փորձի փաստական բաղիսի վրայ կանդնած, ցոյց է տեղիս այն բոլոր, որ 1852 թւին նա կոնկրետ կերպով հարց չի բարձրանում, թէ

ինչո՞վ պէտք է փոխարինել այդ ոչնչացնելիք պետական մեքենան: Այն ժամանակի փորձը այդպիսի հարց զնելու համար նիւթ չէր տալիս եւ այդ հարցը օրւայ հերթական հարցը դարձաւ աւելի ուշ, այն է 1851 թւին: 1852 թւին բնապատմական դիտութեան ճշգրառութեամբ կարելի էր հաստատել միայն, որ պրոլետարական յեղափոխութիւնը մօտեցել է «աւերման բոլոր ոյժերը» պէտական իշխանութեան դէմ «կենտրոնացնելու» խնդիրին, պետական մեքենան «խորտակելու» խնդիրին:

Այստեղ հարց կարող է ծագել, թէ ուղի՞ղ է արդեօք փորձի այն ընդհանրացումը, որ կատարել է Մարքսը, ուղի՞ղ են արդեօք նրա դիտութիւններն ու եղբակացութիւնները եւ նրանց 1848–1851 թւականների Փրանշիական պատմութեան սահմաններից գուրս աւելի լայն սահմաններում կիրառելը: Այդ հարցը քննելու համար նախ կը լիշեցնենք ինդելսի մի նկատողութիւնը եւ ապա կանցնինք վաստական տւեալներին:

... Ֆրանսիան, գրում էր ինգելու «Բրիւմերի 18»-ի Յըդ հրատարակութեան համար, Փրանսիան մի երկիր է, ուր դասակարգերի պատմական պայքարը աւելի քան որեւէ այլ երկրում չանում էր միշտ իր վճռական վախճանին: Ֆրանսիայում աւելի ցայտուն զծեր են ստացել այն փոփոխուող քաղաքական ձեւերը, որոնց ներսեւը առաջ է մզւել դասակարգային այդ պայքարը եւ որոնց մէջ իրենց արտայայտութիւնն են գտել այդ պայքարի հետեւանքները: Ֆրանսիան, որ եղել է աւատականութեան կենտրոն միջին գարերում, դասային օրինակելի ու միաձեւ միապետութեան երկիր, Ռենեանսի շրջանից սկսած, խորտակեց մեծ յեղափոխութեան ժամանակ աւատականութիւնը եւ բուր-

ժուազիայի մաքուր տիրապետութիւնը հաստատեց
մի այնպիսի յատակութեամբ, որի նմանը չի եղել
Երոպական եւ ոչ մի երկրում: Եւ ըմբոստացող
սլրութարիատի պայքարը ընդդէմ տիրող բուր-
ժուազիայի այստեղ հանդէս է գալիս մի այնպիսի
սուր ձեւով, որը անծանօթ է միւս երկրներին:
(1907թ. Հրատ. Եր. 4):

Վերջին նկատողութիւնը հնացել է, որ չափով որ
1871թից յետոյ ընդմիջւել է Փրանսիական պրոլետա-
րիատի յեղափոխական պայքարը: Բայց այդ ընդմիջու-
մը, որքան էլ երկար տեւէ նա՝ բնաւ չի կարող անհնար
դարձնել, որ Ֆրանսիան արտայայտէ ինքն իրեն — իր-
բւել կլասիկ երկիր մինչեւ վճռական վախճանը մղւող
դասակարգային պայքարի:

Սակայն ընդհանուր հայեացք նետենք առաջաւոր
երկրների 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի
պատմութեան վրայ: Եւ մենք կըտեսնենք, որ աւելի
դանդաղ, աւելի բազմաձեւ կերպով աւելի լայն առաջ-
րէզի վրայ կատարում է նոյն պրոցէսսը — մի կողմից
«պարլամենտական իշխանութիւն» է մշակում թէ հան-
րապետական երկրներում (Փրանսիա, Ամերիկա, Զե-
ցարիա) թէ միապետական երկրներում (Անգլիա, Գեր-
մանիա որոշ չափով իտալիա, Սկանդինավեան երկրներ
եւ այլն), իսկ միւս կողմից այլ եւ այլ բուրժուական ու
մանը — բուրժուական կուսակցութիւններ կոիւ են մը-
ղում բաժանելով ու վերբաժանելով «աւարը», չինով-
նիկական պաշտօնները, անխախտ պահպանելով բուր-
ժուական կարգի հիմքը, վերջապէս կատարելագործում
ու ամրապնդում է «գործադիր իշխանութիւնը», նրա
չինովնիկական ու ուղմական ապահարատը:

Ոչ մի կասկած չըկայ, որ բոլոր կապիտալիստական
պետութիւնների նորագոյն էւոլյուցիայի ընդհանուր գծե-
րըն են գրանք: Երեք տարւայ ընթացքում, 1848—1851,
Ֆրանսիան արադ, ցայտուն, կենտրոնացրած ձեւով ցոյց
տւեց զարգացման այն պրոցէսսները, որոնք յատուկ են
և ողջ կապիտալիստական աշխարհին:

Յատկապէս իմպերիալիզմը՝ բանկային կապիտալի
շրջանը, հսկայական կապիտալիստական մոնոպոլիս-
ների այն շրջանը, երբ մոնոպոլիստական կապիտալիզմը
աճելով պետական — մոնոպոլիստական կապիտալիզմը
զառնում՝ ցոյց է տալիս «պետական մեքենայի» արտա-
սովոր ուժեղացում, այդ «մեքենայի» չինովնիկական ու
ուղմական ապահարատի ըրտեսնւած աճում եւ միաժա-
մանակ պրոլետարիատի գէմ ուղղւած ուեպրեսսիաների
ուժեղացում թէ միապետական, թէ ամենաաղատ հան-
րապետական երկրներում: Համաշխարհային պատմու-
թիւնն, անտարակոյս, այժմ եւ այն՝ աւելի մեծ մասը —
տարով, քան 1852թին, տանում է դէպի պրոլետարա-
կան յեղափոխութեան «բոլոր ոյժերի կենտրոնացումը»
պետական մեքենան խորտակելու համար: Թէ ինչով պի-
տի փոխարինէ պրոլետարիատն այդ մեքենան՝ դրա վե-
րաբերմամբ վերին աստիճանի ուսանելի նիւթ է տւել
Պարիզի կոմմունան:

Գ Լ Ո Ւ Խ III.

ՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ: 1871
ԹԻՒ ՊԱՐԻԶԵԱՆ ԿՈՄՄՈՒԻՆԻ ՓՈՐՁՔ:
ՄԱՐՔՍԻ ԱՆԱԼԻԶԻ:

1. ինչո՞ւմ եր կայանում կոմունարմերի փոքրի եերասկանութիւնը:
Յայտնի է, որ կոմմունից մի քանի ամիս առաջ,
1870թ. աշնանը, Մարքսը նախազգուշացնում էր քան-

ւորներին, ջանալով ապացուցել, որ կառավարութիւնը խորտակելու փորձը յօւսահատութիւնից բղխած մի լի-մարութիւն կը լինի: Բայց էրբ 1871 թիւի մարտին բան-ւորներին ստիլեցին վճռական պայքարի հրատէրն ընդունել, երբ ապատամբութիւնն արգէն փաստ էր, Մարք-ը գերազոյն հիացմունքով ողջունեց պրոլետարական յղափոխութիւնը, չնայած աննպաստ նշաններին: Մարքը պեղանատի յամառութեամբ չըլատապարտեց «վաղաժամ» շարժումը, ինչու մարքսիզմի ոուհ ունկատ տիրահաջակակ Պէիսանովը, որ 1905 թիւի նոյեմ-բերին բանւորական ու գիւղացիական պայքարը խրա-խուսող ոգով էր զրում, իսկ 1905 թիւի զեկումբերից յետոյ լիրերալանքան գոռում էր. «Հարկաւոր չէր զի՞նք վերցնել»:

Սակայն Մարքով յոկ հիացմունք չէր արտայայտում. բայց իր խօսքի «Երկինքը չուուրմի ենթարկող» կոմմու-նարների հերոսականութեան համար: Մասսայական յե-ղափոխական շարժումը, (թէպէտ եւ այդ շարժումն իր նպատակին չըհասաւ) նաև համարում էր ահազին կարե-ւորութիւն ունեցող պատմական մի փորձ, համաշխար-հային յեղափոխութեան գործի որոշ քայլ, դէպի ա-ռաջ զործնական մի քայլ, որ աւելի կարեւոր է, քան հա-րիւրաւոր ծրագիրներն ու դատողութիւնները: Անալիզի ենթարկել այդ փորձը, նրանից տակտիկայի դաս առնել, վերաքննել գրա հիման վրայ սեփական ծրագիրը — ա-հա թէ ինչու էր ըմբռնում Մարքն իր անելիքը:

Միակ «ուղղումը», որ արեց Մարքով «Կոմմունիս-տական Մանիֆեստի» նկատմամբ, Պարիզի կոմմունար-ների յեղափոխական փորձի հիման վրայ արեց նա:

«Կոմմունիստական Մանիֆեստի» գերմաներէն նոր հրատարակութեան առաջաբանը, որի տակ ստորագրել

են երկու հեղինակն էլ, թւագրւած է՝ 1872 թ. յունիսի 24: Այդ առաջարանում հեղինակները — կարև Մարքսն ու Ֆրիդրիխ Էնդելսը — առում են, որ «կոմմունիստա-կան Մանիֆեստն» «այժմ տեղ տեղ հնացել է»:

...«Մասսանդ —, շարունակում են նրանք — կոմմունան ապացուցեց, որ բանոր դասակարգը չի կարող լոկ պետական պատրաստ մեթենան պար-զապէս իր ձեռքն առնել եւ սկսել բանեցնել նրան իր անփական նպատակների համար»...

Այս ցիտատում երկրորդ չակերտների մէջ առնւան-րաները հեղինակները փոխ են առել Մարքսի «Քաղաքա-ցիական կուիր Ֆրանսիայում» գրւածքից:

Այդպիսով Պարիզի կոմմունի մի հիմնական ու դիմաւոր գասին Մարքսն ու Էնդելսն այդպիսի ահազին կարեւորութիւն էին աալիս, որ այն մտցրին, իրեւ էա-կան ուղղում, «կոմմունիստական Մանիֆեստի»:

Ծայր աստիճան բնորոշ է, որ հէնց այդ էական ուղ-ղումը աղաւաղել են օպպորտիւնիստները եւ նրա իմաս-տը, հաւանօքէն, յայտնի չէ կոմմունիստական Մանի-ֆեստի ընթերցողների տասից լինին, եթէ ոչ հարիւրից ինհասուն եւ իննին: Մանրամասն այդ մասին մենք կը խօ-սենք ներքեւը, այն գլխում, որը յատկապէս աղաւա-ղումներին է ներիւած: Իսկ այժմ բաւական է նիշել մի այն, որ Մարքսի վերեւն առաջ բերած հոչակաւոր խօս-փերի սովորական ու գոեհիկի «ըմբռնումն» այն է, որ իրը թէ Մարքսը չեշտում է այդտեղ զանդադ զարգաց-ման գաղափարը ընդգէմ իշխանութեան բռնազրաւման եւ այն: Բայց իսկը՝ նիշտ դրա հակառակն է: Մարքսի միտքը այն է, թէ բանւոր դասակարգը պիտի փշրէ, խորտակէ «պատրաստ պետական մեքսնան» եւ ոչ թէ բաւականանայ այդ մեքենան պարզապէս բռնագրաւելով:

1871 թիւի ապրելի 12 ին, այսինքն հէնց Կոմմունի ժամանակ Մարքսը գրում էր Կուգելմանին.

... «Եթէ դու աչքի անցնես իմ «Բրիւմերի 18 ի» վերջին գլուխը, կրտենես, որ ըստ իս Փրանսիական յեղափոխութեան փորձը հետեւեալը պիտի լինի՝ ոչ թէ բիւրոկրատական ռազմական մեքենան խել մէկից ու միւսին յանձնել, ինչպէս որ եղել է մինչև այժմ, այլ կոտրնել այդ մեքենան (Նոտրդիրը Մարքսին է.) բնագրում գրւած է (zerbrechen) եւ իսկ որ այդ է եւրոպական ցամաքի վրայ կատարւող ամեն մի իրավիչ ժողովրդական յեղափոխութեան նախապայմանը: Եւ հէնց դրանում է կայանում մէր պարիգեան հերոս-ընկերների փորձը»:

(1901—2 Neue Zeit XX, I, էր. 709):

Այս խօսքերում «կոտրնել բիւրոկրատական ռազմական պետական մեքենան» ամփոփւած է, Համառոտարտայատութեամբ, մարքսիզմի գլխաւոր դասը այն ինդրի մասին, թէ պետութեան վերաբերմամբ ինչ դիրք պիտի բռնէ պրոլետարիատը յեղափոխութեան ժամանակ: Եւ հէնց այդ դասը ոչ միայն բոլորովին մոռացւած է, այլ եւ ուղղակի աղաւաղւած մարքսիզմի տիրող կառուցկիական «մեկնաբանութեամբ»:

Իսկ ինչ վերաբերում է Մարքսի «Բրիւմերի 18 ի» ժամանակումին՝ մենք վերը ամբողջութեամբ առաջ բերնք Համապատասխան հատւածը:

Հետաքրքիր է առանձնապէս նիշել երկու հատւած Մարքսի վերեւ առաջ բերած դատողութիւնից: Նախ նա սահմանափակում է իր եղրակացութիւնը եւրոպական ցամաքով: Դա հասկանալի էր 1871 թւին, երբ Անդիան դեռեւ մաքուր կապիտալիզմի օրինակելի մի երկիր էր, սակայն ազատ ռազմամոլութիւնից ու որոշ չափով նաեւ բիւրոկրատիայից: Դրա համար Մարքսը բացառում էր

Անդիան: Թւում էր, եւ այն ժամանակ դա հնարաւոր էր, որ այնտեղ յեղափոխութիւնը, նոյնիսկ ժողովրդական յեղափոխութիւնը, հնարաւոր է առանց «պետական պատրաստ մեքենան խորտակելու» նախաղայմանի:

Այժմ^o, 1917 թւին առաջին իմպերիալիստական մեծ պատերազմի շրջանում Մարքսի այդ սահմանափակումը վերանում է, որովհետեւ Անդիան էլ, Ամերիկան էլ, որ ողջ աշխարհում անդօ-սակսոնական «ազատութեան» (ռազմամոլութեան ու բիւրոկրատիզմի բացակայութեան իմաստով) վերջին եւ խոչըրազոյն ներկայացուցիչներն էին՝ ցած գլուրեցին դէպի ողջն իրենց ենթարկող եւ ողջը ճնշող համաեւրոպական բիւրոկրատիկ-ռազմական հիմնարկութիւնների կեղտու, արնոտ ճահիճը: Ապա յատուկ ուշագրութեան է արժան Մարքսի վերին աստիճանի այն խորամիտ նկատողութիւնը, թէ բիւրոկրատիկ-ռազմական պետական մեքենայի խորտակումը ամեն մի խական ժողովրդական յեղափոխութեան նախապայմանն է: Այդ «ժողովրդական» հասկացողութիւնը տարօրինակ է թւում Մարքսի բերանում եւ ոռւս Պլեխանովականները եւ մենչեւիներ, Ստրուվէի այդ հետեւողները, որ ուղում են մարքսիստ համարել, կարող են գուցէ այդ արտայատութիւնը Մարքսի բերանում «լազոսում» համարել: Նրանք մարքսիզմն այնպիսի ողորմելի լիբերալկան աղաւաղում են դարձրել, որ բացի պրոլետարական եւ բուրժուական յեղափոխութեանց հակադրութիւնից էլ ոչինչ գորութիւն չունի նրանց համար եւ հէնց այդ հակադրութիւնն էլ նրանք բաւական մեռած կերպով են ըմբռնում:

Եթէ օրինակի համար վերցնելու լինենք 20րդ դարի յեղափոխութիւնները, այն ժամանակ, ի հարկէ, եւ թիւրքական, եւ փորթուգալական յեղափոխութիւնը

բուրժուական պէտք է համարել: Բայց դրանցից ոչ մէկը, ոչ միւս «ժողովրդական» չեն, որովհետեւ ժողովրդական մասսան, նրա ահազին մեծամասնութիւնը ակտիւ կերպով, ինքնուրոյն, իր սեփական անտեսական ու քաղաքական պահանջներով այդ երկու յեղափոխութիւններից եւ ոչ մէկի մէջ նկատելի կերպով հանդէս չի եկել: Ընդհակառակը Ռուսիայի բուրժուական յեղափոխութիւնը 1905—7 թ., թէսլէտեւ չի ունեցել այնպիսի «փայլուն» յաջողութիւններ, որպիսիք մերթ ընդ մերթ քածին են ընկել փորթուգալական ու թիւրքական յեղափոխութեան, անտարակոյս «իրապէս ժողովրդական» յեղափոխութիւն է եղել, որովհետեւ ժողովրդի մասսան, նրա մեծամասնութիւնը, հասրակութեան «ամենասորբին» խաւերը, որ ճմլած են են եղել ձնչման ու հարստահարութեան բեոի տակ, ուստք էին ենում, ինքնուրոյն կերպով, յեղափոխութեան ողջ ընթցքի վրայ իրենց պահանջների կնիքն էին զնում, հնի տեղ նոր հասարակութիւն իրենց ուզած ձեւի, կազմակերպելու փորձի կնիքը:

1871 թւականի Երոսայում, Երոսական ցամաքի վրայ եւ ոչ մի երկրում պրոլետարիատը ժողովրդի մեծամասնութիւն չի էազմում: «ժողովրդական» յեղափոխութիւնը, որը չարժման մէջ է առնում իրօք որ մեծամասնութիւնը, կարող էր «ժողովրդական» լինել միմայն ընդգրկելով թէ պրոլետարիատը, թէ գիւղացիութիւնը: Այդ երկու դասակարգն էր, որոնցից այն ժամանակ կազմուում էր ժողովրդը: Երկուսն էլ միացած են նրանով, որ «բիւրոկրատիկ-ուզմական պետական մեքենան» նեղում, ձնչում հարստահարում է նրանց: Փըշ-րել այն մեքենան, կոտրտել այն, ահա թէ ինչ է պահանջում «ժողովրդի», նրա բանւորների ու գիւղացիների մեծամասնութեան շահը, դա է չքաւորագոյն գիւղացի-

ների ու պրոլետարների ազատ դաշինքի նախապայմանը, իսկ առանց այդ դաշինքին անհաստատ է դեմոկրատիան եւ սոցիալիստական վերանորոգումն՝ անհնար:

Հէնց գէպի այդ դաշինքն էր, որ ճանապարհ էր ուղում բաց անել իր համար Պարիզի Կոմմունը, որ այդ պատակին չըհասաւ մի չարք ներքին եւ արտաքին պատճառներով:

Հետեւարար, խօսելով «իսկական ժողովրդական» յեղափոխութեան մասին Մարքսը մոռացութեան չէր տալիս մանր բուրժուացին յատկութիւնները (զրանց մասին նա խօսել է շատ եւ յաճախ) եւ խօսիւ հաշիվ էր առնում 1871 թւի Երոսայի պետութեանց մեծամասնութեան մէջ դոյցութիւն ունեցող դասակարգերի փաստական յարաբերութիւնը: Իսկ միւս կողմէց նա հաստատում էր, որ պետական մեքենայի «փշրումն» է պահանջում բանւորների ու գիւղացիների շահը, որ դա միացնում է նրանց, նրանց առջեւ ընդհանուր նպատակ. է դնում, այն է՝ վերացնել «պարազիտն» ու նրան մի ուրիշ բանով փոխարինել:

Բայց ինչո՞վ:

2. Խնչո՞վ փոխարինել փերած պետական մեքենան:

Այդ հարցին 1847 թ. Մարքսը «Կոմմունիստական Մանիֆեստում» գենեև բոլորովին արտարակտ պատասխան էր տալիս, որն աւելի շուտ անելիքն էր մատնանը-շում, քան հարցի լուծման միջոցները: Փոխարինել «պրոլետարիատի իրեւ տիրող դասակարգի կազմակերպութեամբ», «դեմոկրատիայի նւաճումով»— այս էր «Կոմմունիստական Մանիֆեստի» պատասխանը:

Մարքսն, առանց ուտոպիսականերով տարելու, մասսայական շարժումից էր ակնկարում պատասխան այն հարցին, թէ ի՞նչ կոնկրետ ձեւ՝ կ'ուրիշ ընդունել «պրոլետա-

ւիատի իրը տիրող դասակարգ կազմակերպումն» եւ ինչ կերպ այդ կազմակերպումը միացած կըլինի ամենալիա-կատար ու հետեւողական «դեմոկրատիա նւաճելուն»:

Կոմմունի փորձը, որքան եւ փոքր էր նա, Մարքսն ամենառաջադիր կերպով անալիքի է ենթարկում իր «Քա-ղաքացիական կուր Ֆրանսիայում» գրւածքում:

19-րդ դարում զարգանում էր միջնադարից ծա-դած «կենտրոնացրած պետական իշխանութիւնը իր ամենուրեք զոնուող օրդաններով՝ մշտական զօր-քով, բիւրոկրատիայով, հոգեւորականութեամբ ու դատաւորական դասով»: Կապիտալի եւ աշխատան-քի միջն ծագած դասակարգային անտագոնիզմի զարգացման հետ միասին «պետական իշխանութիւ-նը քանի զնում աւելի ու աւելի աշխատանքի ճնշման հասարակական իշխանութեան, դասակարգային տիրապետութեան մեքնայի բնոյթ էր ստանում»:

Ամեն մի յեղափոխութիւնից յետոյ, որ դասա-կարգային կուի առաջադիմութեան մի քայլ է՝ պե-տութեան զուտ ճնշիչ բնոյթն աւելի ու աւելի բաց կերպով է արտայայտում: «1848—9 թւականների յեղափոխութիւնից յետոյ պետական իշխանութիւնը դառնում է «կապիտալի ընդդէմ աշխատանքի վա-րած պատերազմի ազգային զէնք»: Երկրորդ իմ-պերիան ամրապնդում է դա:

«Իմպերիայի ձիչը հակառակն էր Կոմմունը: Նա որոշ ձեւ էր մի այնպիսի հանրապետութեան, որը պիտի վերացնէր դասակարգային տիրապետութեան ոչ միայն միապետական ձեւը, այլ հէնց դասակար-գային տիրապետութիւնը»:

Ինչո՞ւմ էր կայանում պրոլետարական, սոցիա-լիստական հանրապետութեան այդ որոշ ձեւը: Ո՞ր էր այն պետութիւնը, որ նա սկսէլ էր ստեղծել:

...«Կոմմունի առաջին դեկտեմբ էր՝ մշտական գորքի ոչնչացումն ու նրա փոխարինումը դինւած ժողովրդով»:

Այդ պահանջն այժմ դրւած է բոլոր սոցիալիստական կոչել ցանկացող կուսակցութեանց ծրագրում: Բայց թէ ինչ արժէք ունեն նրանց ծրագիրները, ամենից բաւ ցոյց տւին իրենց վարմունքով մեր էսէրներն ու մենշևիկները որոնք հէնց կետրւարի 29 ի յեղափոխութիւնից յետոյ հրաժարւեցին այդ պահանջն իրականացնելուց:

...«Կոմմունը կազմւեց Պարիզի զանազան շըր-ջաններում ընդհանուր ձայնատութեան իրաւուն-քով ընտրւած ձայնաւորներից: Նրանք պատասխա-նատու էին եւ ամեն բովէ կարող էին փոխարինել: Ինքն ըստ ինքեան հասկանալի է որ նրանց մեծա-մասնութիւնը կազմում էին բանտորները կամ բան-ւոր դասակարգի ճանաչւած ներկայացուցիչները»:

...Ոստիկանութիւնը, որ մինչ այժմ պետական կառավարութեան զէնքն էր, իսկոյն զրկւեց իր քա-ղաքական Փունկցիաներից ու դարձւեց Կոմմունի պատասխանատու օրդան, որին ամեն ժամ կարելի էր փոխել...

...Նոյն կերպ եւ վարչութեան բոլոր ճիւղերի չինովնիկների վերաբերմամբ... Սկսած Կոմմունի անդամներից — վերեւեց մինչեւ ցածը — հասա-րակական պաշտօնը կատարելու էր բանտրական օրավարձու: Պետական բարձր չինովնիկների հետ միասին անհետացան նաեւ բոլոր մենաշնորհումներն ու չինովնիկներին արւող «ներկայացուցչական» վճարները:

...Մշտական զօրքն ու ոստիկանութիւնը հին կառավարութեան իշխանութեան այդ նիւթական զէնքերը վերացնելուց յետոյ Կոմմունան անմիջա-

պէս ձեռնարկեց հոգեւոր ճնշման դէնքը խորտակելու՝ աէրտէրների ոյժը... Դատաւորական աստիւծանաւորները կորցրին իրենց երեւոյթական անկախութիւնը... Նրանք այսուհետեւ պիտի բաց կերպով ընտրւէին, լինէին պատասխանառու եւ փոխարինելի»:

Աւրեմն Կոմմունան փշրւած պէտական մեքինան կարծես թէ «միմիթայն» աւելի լիակատար զեմոկրատիայով փոխարինեց մշտական զօրքի ոչնչացում եւ բոլոր պաշտօնեանների ընտրելութիւն ու փոխարինելութիւն։ Բայց իրապէս այդ «միմիթայն» նշանակում է որոշ հաստատութիւնների հակայական փոխարինում այլ սկզբանների տեսակէտից նախկիններից բոլորովին տարբեր հաստատութիւններով։

Այստեղ կարելի է դիմել այն դէպքերից մէկը, երբ քանակը որակէ դառնուում։ Դեմոկրատիան, երբ նա իրականացրած է այդքան լիակատար կերպով եւ այնպիսի հետեւողականութեամբ, որդիսին առհասարակ հաւատուր է երեւակայել՝ այն ժամանակ զեմոկրատիան բուժժուականից պրակտարականի է փոխում, պետութիւնից (որոշ դասակարգ ճնշելու յատուկ ոյժ) փոխում է մի բանի, որն արդէն իսկական պետութիւն չէ։

Բուժժուակային եւ նրա դիմադրութիւնը գեռ անհրաժեշտ է ճնշել։ Կոմմունի համար առաւել եւս անհրաժեշտ էր եւ Կոմմունի պարտութեան պատճառներից մէկն էլ այն էր, որ նա հարկ եղածին չափ վճռական կերպով չէր կատարում այդ։ Բայց իրը ճնշման օրգան այստեղ արդէն հանդէս է զալիս բնակչութեան մեծամասնութիւնը եւ ոչ թէ փոքրամասնութիւնն, ինչպէս որ եղել է միշտ թէ սորկութեան, թէ՛ ճորտութեան եւ թէ՛ վարձու սորկութեան ժամանակ։ Իսկ երբ ժողովրդի մեծամասնութիւնն է ճնշում իր նեղիներին, այն ժամա-

նակ «ճնշման յատուկ ոյժի» կարիք չըկայ։ Աչա այդ մտքով պետութիւնն ակտում է մահանալ։ Առանձնաշընորհներ վայելող փոքրամասնութեան հիմնարկութիւնների փոխարին (առանձնաշնորհւած չինովնիկութիւն, մշտական զօրքի հրամանատարութիւն) ինքը մեծամասնութիւնը անմիջական կերպով կարող է կատարել այդ, և, որքան որ աւելի համաժողովրդական է դառնում պետական իշխանութեան գունդցիաների կատարումը, այնուական իշխանութեան անհրաժեշտութիւնը։ Քանի նւազում է այդ իշխանութեան անհրաժեշտութիւնը։

Նշանաւոր է այդ կողմից կոմմունի ձեռնարկած միջոցներից մէկը, որը Մարքսն ընդգծել է։ Պա չինովնիկներին «ներկայացուցչութեան» համար արևող ամեն տեսակի վճարների վերացումն է, չինովնիկների համապատասխութիւնը ունեցած ամեն տեսակ փողային առանձնաշնորհների վերացումը, պետութեան բոլոր պաշտօնեանների ուսմանը աշխատավարձին։ Հաւասարեցնելը։ Հէնց այստեղ է, որ ամենից պարզ կերպով է արտայայտում յեղաշրջման գիծը՝ բուժժուական դէմոկրատիայից դէպի պրոլետարականը, ճնշեների դէմոկրատիայից դէպի ճնշածների դէմոկրատիան, որոշ դասակարգ ճնշող «յատուկ ոյժի» տիրապետութիւնից դէպի ժողովրդի մեծամասնութեան, ըանուրների ու դէպի ժողովրդի ճնշեների ճնշող ընթիանուր ոյժ։ Ենչնց այս, պետութեան վերաբերող առանձնապէս ակներեւ եւ թերեւս սմենակարեւոր կէտում է, որ Մարքսգուներին ամենից աւելի են մոռացւած։ Մատչելի մեկնարանութիւններում, որ անթիւ ու անհամար են, այդ մասին խօսք չեն բաց անում։ Այդ մասին «ընդունւած» է լուել, որպէս մի իր ժամանակն անցկացրած «միամտութեան» մասին, որպէս քրիստոնեաները պետական կրօնի դիրք ստանալով «մոռացան» նախնական քրիստոնէու-

թեան «միամտութիւններն» ու յեղափոխական-դեմոկրատիկ ողին:

Պետական բարձրագոյն չինովնիկների ոռծիկը պակասեցնելը «պարզապէս» միամիտ, պրիմիտիւ դեմոկրատիզմի պահանջ է թւում: Նորագոյն օպպորտիւնիզմի հիմնադիրներից մէկը, նախկին սոցիալ-դեմոկրատ էդւարդ Բերնշտայնը բազմաթիւ վարժութիւններ է կատարել կրկնելով բուրժուական գուհիկ հեղնանքները ուղղւած «պրիմիտիւ» դեմոկրատիզմի հասցէին: Ինչպէս եւ բոլոր օպպորտիւնիսանները, ինչպէս եւ այժմեան կառցկիականները՝ նա բնաւ չըմբռնեց, որ նախ կապիտալիզմից դէպի սոցիալիզմ անցնելն անհնար է առանց որոշ չափով դէպի պրիմիտիւ դեմոկրատիզմը «վերադառնալու» (որովհետեւ ապա ի՞նչ կերպ կարելի պիտի լինի պետական Փունկցիաներ կատարելու գործը յանձնել բնակչութեան մեծամասնութեան, բոլոր բնակչութեան) եւ ապա՝ որ «պրիմիտիւ դեմոկրատիզմը» կապիտալիզմի եւ կապիտալիստական կուլտուրայի բազիսի վրայ այն չէ, ինչ պրիմիտիւ դեմոկրատիզմը նախնական կամ մինչ-կապիտալիստական ժամանակներում: Կապիտալիստական կուլտուրան ստեղծել է խոշոր արտադրութիւն, Փալրիկներ, երկաթուղիներ, պոստ, հեռախոսներ եւայլն, իսկ այդ բազիսի վրայ հինգետական իշխանութեան Փունկցիաների ահազին մեծամասնութիւնն այնքան պարզացել են ու ռեֆիստրացիայի, գրի առնելու, ստուգման ամենապարզ գործութիւններ գարձել, որ այդ Փունկցիաները միանգամայն մատչելի կըլինին բոլոր գրադէտ մարդկանց որ այդ Փունկցիաները կարելի կըլինի կատարել սովորական բանուրական աշխատավարձով, որ կարելի կըլինի (եւ անհրաժեշտ) այդ Փունկցիաները գրկել որեւէ ա-

ռանձնաշնորհումի կամ «իշխանականութեան» ստւերից անդամ:

Առանց որեւէ խտրութեան բոլոր պետական պաշտօնեաններին ընտրելու եւ հարկ եղած դէպքում փոխելու սիստեմը, այդ պաշտօնեանների ոռծիկը սովորական «բանուրական աշխատավարձին» հասցնելը՝ այդ պարզ եւ «ինքն իստ ինքեան հասկանալի» դեմոկրատիկ միջոցները լիովին միաւորելով բանուրների եւ գիւղացիների մեծամասնութեան շահերը, միեւնոյն ժամանակ կապիտալիզմից դէպի սոցիալիզմը տանող մի կամուրջ են դառնում: Այդ միջոցները վերաբերեւում են հասարակութանում: Այդ միջոցները վերակազմութեան, թեան պետական, զուտ-քաղաքական վերակազմութեան, բայց նրանք իրենց ողջ իմաստն ու նշանակութիւնն ըստանում են լոկ այն ժամանակ, երբ իրականացւում կամ պատրաստում է «էքսպրոպրիատորների էքսպրոպրիացիան», այսինքն՝ արտադրութեան միջոցների կապիտալիստական մասնաւոր սեփականութեան հասարակական սեփականութիւն դարձնելը:

«կոմմունը, գրում էր Մարքսը, ճշմարտութիւն գարձեց բոլոր բուրժուական յեղափոխութիւնների լոգունդը՝ էժանագին կառավարութիւնը, ոչնչացնելով ծախսերի երկու ամենախոշոր յօդւածները՝ զօրքն ու չինովնիկութիւնը»:

Գիւղացիների միջից, ինչպէս եւ մանր-բուրժուակայի միւս խաւերի միջից, լոկ չնչին փոքրամասնութիւնն է, որ «վեր է բարձրանում», «մարդ է դառնում», բուրժուական իմաստով, այսինքն կամ ունեւոր մարդ է դառնում՝ բուրժուա, կամ ապահովւած, առանձնաշնորհւած չինովնիկ: Ամեն մի կապիտալիստական երկրում, ուր գիւղացիութիւնն կայ (իսկ մծամասնութիւնն այդպիսի կապիտալիստական երկրներ են) գիւղացիութիւնը ճնշւած է կառավարութեան կողմից եւ

«Ժարաւ է» էժանադին կառավարութեան։ Այդ բանը միայն պրոլետարիատն է կարող իրակացանել եւ իրականացնելով այդ նա միհետքն ժամանակ մի քայլ է անում զէպի Հասարակութեան։ Սոցիալիստական վերակաղմութիւնը։

3. Պարլամենտարիզմի ոչնչացումը։

«Կոմմունը, գրում էր Մարքսը, պիտի լինի ոչ թէ պարլամենտար, այլ աշխատող կորպորացիա, միաժամանակ եւ օրէնսդիր եւ օրէնքները զործագը»...

Փոխանակ երեք կամ վեց տարին մի անգամ ուրոշելու, թէ տիրող դասակարդի ո՞ր անդամը պիտի ժողովրդի ներկայացուցիչը լինի ու ճնշէ (verwandt zertreten) ժողովուրդը պարլամենտում, դրա փոխարքն ընդհանուր ընտրական իրաւունքը պիտի ծառայէր կոմմունաներում կազմակերպւած ժողովրդին, որպէս զի վերջինս կարողանար գտնել իր ձեռնարկութիւնների Համար բանորներ, Հսկիչներ, Հաշվառահներ ինչպէս, անհատական ընտրական իրաւունքը ծառայում է այդ նպատակի Համար ամեն մի աշխատանք տուղի։

Պարլամենտարիզմի այս հրաշալի քննադատութիւնը, որ արւած է 1871 թ., նոյնպէս մարքսիզմի «մոռացւած խօսքերի» թւին է պատկանում չնորհիւ սոցիալ-շառականիզմի և օպարտինիզմի տիրապետութեանը։ Արհես. առվ մինիստրներն ու պարլամենտի անդամները, պրոլետարիատի դաւաճաններն ու մեր օրերի «գործնական» սոցիալիստները պարլամենտարիզմի քննադատութիւնը թողել են բացառապէս անարխիստներին եւ այդ զարմանալի խելօք հիման վրայ պարլամենտարիզմի ամեն քըննադատութիւն անարխիզմ են յայտարարել։ Եւ միթէ տարօրինակ է, որ պարլամենտական առաջաւոր երկրնե-

րում պրոլետարիութը զգւանք է զգում, տեսնելով Շայրէմանների, Դաւիդների, Լեգինների, Սանրաների դէմանների, Գենդերսոնների, Վանդերվէլլների, ըԱռէնողէլների, Գենդերսոնների, Բրանախինդների, Բիսսուլատիների եւ տառնինդների, Բրանախինդների, Բիսսուլատիների լրնկ. նման «սոցիալիստներ» և աւելի ու աւելի յաճախ իր լրնկ. նման «սոցիալիստներ» և աւելի յաճախ իր համակարանքը անարխիս - սինդիկալիզմին նվիրում, չնահամակարանքը անարխիս - սինդիկալիզմին նվիրում էր։ յած որ վերջինս օպպորտիւնիզմի Հարազատ եղացրն էր։

Բայց Մարքսի Համար յեղափոխական գիակլետիկան բնաւ չի եղել այն դատարկ մողայի ֆրազը, այն խաղալիքը, որպիսին դարձրին այն Պլեխանովը, Կառուցկին եւ ուրիշներ։ Մարքսը գիտէր անիմայ կերպով խօնել իր կապերը անարխիզմից նրա համար, որ վերջինս չէր կարողանում օգտագործել նոյնիսկ բուրժուական պարլամենտարիզմի «ախոռը», մանաւանդ, երբ պարզապէս բացակայում է յեղափոխական սիսուացիան — սակայն միենայն ժամանակ նա ցիտէր տալ պարլամենտարիզմի իրապէս յեղափոխական-պրոլետարական քննադատութիւնը։

Մի քանի տարին մի անգամ որոշել, թէ տիրող գասակարդի ո՞ր անգամը պիտի ժողովրդին ճնշէ ու ճզմէ պարլամենտում — ահա թէ ինչում է կայանում բուրժուական պարլամենտարիզմի խօսկան էութիւնը ոչ միայն պարլամենտարական-սահմանադրական միապետութիւնների մէջ, այլ եւ ամենաղեմոկրատիկ Հանրապետութիւններում։

Սակայն եթէ դրում է պետութեան խնդիրը, եթէ քննութեան է առնելում պարլամենտարիզմը իրեւ պետութեան Հաստատութիւններից մէկը պրոլետարիատի տեսակէտով այդ բնագաւառում, ապա ի՞նչ ելք կայ պարլամենտարիզմից։ Ինչպէս եօլա գնալ առանց նրան։

Կրկին ու կրկին ստիպւած ենք ասել. — Մարքսի կոմ-
մունի ուսումնասիրութեան վրայ հիմնւած դասերը այն
աստիճանն մոռացւած են, որ ժամանակակից «սոցիալ-
դեմոկրատի» համար (կարգա՝ սոցիալիզմի ժամանա-
կակից դաւաձանի համար) ուղղակի անհասկանալի է
պարլամենտարիզմի որեւէ քննադատութիւնը, բացի ա-
նարիխստական կամ ոչակցիոն քննադատութիւնից :

Պարլամենտարիզմից ելք պէտք է իհարկէ ոչ ներկա-
յացուցչական հաստատութիւնների եւ ընտրականութեան
ոչնչացման մէջ, այլ ներկայացուցչական հաստատու-
թիւնները խօսարաններից աշխատող հաստատութիւն-
ների վերածել : «Կոմմունը պիտի լինէր ոչ թէ պարլա-
մենտական հաստատութիւն, այլ աշխատող, միաժա-
մանակ եւ օրէնքների եւ օրէնքների կատար ածող» :

«Ոչ թէ պարլամենտական, այլ աշխատող» հաստա-
տութիւն — այդ միտքը հանում է արդի պարլամենտա-
կանների եւ սոցիալ - դեմոկրատիայի պարլամենտական
«սենեկային չների» աչքը : Դիտեցէք պարլամենտական
երկրներից որն ուղում էք Սմերիկայից սկսած մինչեւ
Չիլիցերիա, Ֆրանսայից սկսած մինչեւ Անգլիա, Նորվէ-
գիա եւայլն, իսկական «պետական» աշխատանքը անում
են կուլիսների յետեւում եւ կատարում են այդ դեսպա-
տամենտները, դիւաննուները, շտաբները :

Պարլամենտաներում լոկ դատարկաբանութիւն են ա-
նում յատկապէս «հասարակ ժողովուրդը» խարելու նը-
պատակով : Դա այն աստիճան ճիշտ է, որ նոյնիսկ ուու-
սաց հանրապետութեան մէջ, բուրժուական - դեմոկրա-
տիկ հանրապետութեան մէջ, նախ քան նա կարողացաւ
իսկական պարլամենտ ստեղծել՝ իսկոյն երեւան եկան
պարլամենտարիզմի այդ բոլոր նպատակները : Փթած
քաղքենութեան այնպիսի հերոսներ՝ որպիսիք են Սկո-
բելեւներն ու Ծերեթելիները, Զերնովներն ու Աւգսեն-

տիեւները, կարողացան մինչեւ անգամ Խորհուրդներն
ապականել ու բուրժուական պարլամենտարիզմի տիպի
բաներ, սնամէջ խօսաւաններ դարձնել : Խորհուրդների
մէջ պարոն «սոցիալիստական» մինստրները Փրազարա-
նութեամբ ու ոչդոլիցիաներով էին իւղում գիւրահա-
ւատ զեղուների գլուխը : Կառավարութեան մէջ մի
պերմանենա կադրիլ է տիրում — մի կողմից պատւաւոր
ու շահաւէտ տեղերում հերթով որքան կարելի է շատ
էսէր ու մենշևիկ նստեցնեն, միւս կողմից ժողովրդի
ուշադրութիւնն զբաղեցնեն : Իսկ դիւանատներում ու
շտաբներում «պետական» աշխատանք է եռում :

Սոցիալիստ-յեղափոխականների, այդ կառավարիչ
կուսակցութեան «Տէլօ նարօտա» («Ժողովրդի Գործ»)՝
օրգանը «լաւ հասարակութեան» պատկանող մարդկանց
աննման անկեղծութեամբ, հասարակութեան, որի մէջ
«բոլորը» քաղաքական պոռնկութամբ են պարապում,
խոստովանեց, որ նոյնիսկ այն մինհստրութիւններում,
որոնք «սոցիալիստների» (ներեցէք այս արտայատու-
թեանս համար) ձեռքում ն գտնուում, նոյնիսկ նրանց
մէջ ողջ չինովնիկական ապագարատը իրօք հինն է մսում,
իր Փունկցիաները կատարում է հին ձեւով, սաբուտաժի
է ենթարկում յեղափոխական ձեռնարկութիւնները մի-
անգամայն «ապատ կերպով» :

Բայց հէնց թէկուզ այդ խոստովանութիւնը չինչը
էլ մի՞թէ այդ բանը չի ապացուցանում մենշևիկների եւ
էսէրների կառավարութեան մէջ փաստական մասնակ-
ցութեան պատմութիւնը : Բնորոշն այստեղ միայն է,
որ կաղետների հետ մինհստրական մի համախմբան
մէջ գտնւելով պարոնայք Զերնովները, Ռուսանովները,
Զենզինովները եւ «Տէլօ նարօտա»ի («Ժողովրդի Գոր-
ծի») միւս խմբագիրները այն աստիճան կորցրել են ա-

մօթի զգացումը, որ չեն քաշւում հրապարակաւ քպատմել, իբրեւ մի չնչին բան, որ «իրանց մօտ» մինիստրութիւններում ամեն ինչ հին կարգով է գնում... Յեղափոխական-դեմոկրատիկ Փրազ դիւզական իվանուշկաների համար եւ չինովնիկական դիւտական ձգձում կապիտալիստներին «գոհացնելու» համար — ահա ձեզ այդ «ազնիւ» կուլիցիայի կութիւնը:

Կոմմունը բուրժուական հասարակութեան ծախւող ու վիթած պարլամենտարիզմը փոխարինում է այնպիսի հաստատութիւններով, որոնց մէջ դատողութեան ու քննութեան ազատութիւնը չի այլասերւում ու խարհութիւն չի դառնում, որովհետեւ պարլամենտի անդամներն իրենք պէտք է աշխատեն, իրենք պիտի կատարեն իրենց օրէնքները, իրենք պիտի ստուգեն թէ դրանից կեանքում ինչ է ստացւում, իրենք պիտի անմիջապէս պատասխանատու լինեն իրենց ընտրողների առաջ: Ներկայացուցչական հիմնարկութիւնները մնում են, բայց պարլամենտարիզմն իրեւ առանձին մի սիստեմ, իրեւ օրէնքուդիր եւ զործադիր աշխատանքի բաժանում, իրեւ դեպուտատների առանձնաշնորհւած մի վիճակ այստեղ գոյուրին չունի: Մենք չենք կարող երեւակայել դեմոկրատիա, նոյն իսկ պրոլետարական դեմոկրատիա չենք կարող պատկերացնել առանց ներկայացուցչական հաստատութիւնների, իսկ առանց պարլամենտարիզմի կարող ենք եւ պարտաւոր ենք, եթէ միայն բուրժուական հասարակութեան քննազատութիւնը մեզ համար, դատարկաբանութիւն չէ, եթէ բուրժուական տիրապետութիւնը խորտակելու ձգտումը մեր ամկեղծ ձգտումն է և ոչ թէ «ընտրական» մի Փրազ բանւորների ձայները որսալու համար, ինչպէս մենշետիկների եւ էսէրների, ինչպէս Շայդէմանների եւ լեգինների, Սանրամների ու Վանդերվէրների համար:

Շատ ուսանելի է, որ խօսելով չինովնիկութեան Փունկցիաների մասին, որը հարկաւոր է կոմմունին եւ պրոլետարական դեմոկրատիային, Մարքսը համեմատութեան համար վերցնում է «ամեն մի ուրիշ աշխատատուի» ծառայողներին, այսինքն՝ կապիտալիստական մի ձեռնարկութիւնն իր «բանւորներով», հսկիչներով ու հաշվապահներով»:

Մարքսի մօտ չկայ ուսուպիզմի նշոյլ անգամ, այն ուսուպիզմի, որ հնարելիս լինէր, Փանսազիայով ստեղծէր «նոր» հասարակութիւն: Ոչ, նա նոր հասարակութեան ծագումը հնից, հնից դէպի նորելը տանող անցողիկ ձեւերը ուսումնասիրում է, որպէս բնապատմական մի պրոցէս: Նա վերցնում է պրոլետարիատի մասսայական շարժման փաստացի փորձն ու աշխատում է նրանից գործնական դասեր առնել: Նա դաս է առնում կոմմունից, ինչպէս որ մեծ յեղափոխական մտածողները չեն վախեցել դաս առնել ճնշած դասակարգի մեծ շարժումներից, առանց պեղանտական բարոյախօսութիւններ կարդալու այդ շարժումների նկատմամբ (ինչպէս Պեհսանովն իր «չըսէտք էր զէնքի դիմել») կամ Ծերեթելին իր «դասակարգը պէտք է ինքն իրեն սահմանափակէ» խօսքերով):

Չինովնիկութիւնը մէկն ի մէկ, ու ամեն տեղ եւ մինչեւ վերջը ոչնչացնելու մասին չի կարող խօսք լինել: Դա ուսուպիա է: Բայց միանդամից փշրել չինովնիկական մեքենան ու իսկոյն սկսել կառուցանել նորը, որ թոյլ է տալիս աստիճանաբար չիք դարձնել ամեն տեսակ չինովնիկութիւն — ահա այդ ուսուպիա չէ, դա կոմմունի փորձն է, դա յեղափոխական պրոլետարիատի անմիջական հերթական խոդիրն է:

Կապիտալիզմը «պետական» կառավարչութեան Փունկցիան պարզացնում է եւ «թոյլ է տալիս դէն շը-

պրտել իշխողականութիւնը, ողջ գործը դարձնել պրո-
լետարիատի կազմակերպութիւն (կազմակերպել պրոլե-
տարիատն իբրեւ տիրող դասակարգ), որն ամբողջ հա-
սարակութեան անունից վարձում է «քանուրներ, հսկիչ-
ներ, հաշւապահներ»:

Մենք ուսուպիստներ չենք: Մենք այն մարդկանցից
չենք, որոնք «երազում են» մի անգամից սկսել եօլա գլ-
նալ առանց որեւէ կառավարչութեան, առանց որեւէ մէ-
կին հպատակւելու: Անարխիստական այդ ցնորժները,
որ պրոլետարական դիկտատորայի խնդիրը չհասկա-
նալուց են բլիսում միանգամայն օտար են մարքսիզմին եւ
իրապէս ծառայում են այն բանին որ սոցիալիստական
յեղափոխութիւնը յետաձգւի մինչեւ որ մարդիկ կը փոխ-
մեն, ուրիշ կը լինեն: Ո՛չ, մենք սոցիալիստական յեղա-
փոխութիւն ուզում ենք հէնց այն ժամանակ, երբ մար-
դիկ այնպէս են, ինչպէս որ կան, այսինքն, երբ նրանք
դեռ եւս չեն կարող եօլա գնալ առանց հպատակւելու,
առանց կոնտրոլի, առանց «հսկիչների եւ հաշւապահ-
ների»:

Սակայն հպատակւել հարկաւոր է բոլոր աշխատա-
ւորների եւ հարստահարւողների աւանդարդ՝ պրոլետա-
րիատին: Պետական չինովնիկների յատուկ իշխանաւո-
րութիւնը կարելի է եւ անհրաժեշտ է անմիջապէս փո-
խարինել հսկիչների եւ հաշւապահների Փունկցիաներով,
որոնք արդէն իսկ այժմ լիովին մատչելի են քաղաքացի-
ներին նրանց զարգացման այժմեան մակարդակի վրայ
եւ որոնք կարող են կատարւել «քանուրական աշխատա-
վարձով»:

Ելակէտ ունենալով այն ինչ որ կապիտալիզմն ար-
դէն ստեղծել է՝ արտադրութիւնը կը կազմակերպենք
մենք ինքներս, բանուրներս, յենւելով մեր բանուրական
փորձի վրայ, հաստատելով ամենախիստ երկաթեայ

դիսցիպլին, որը պահպանւելու է զինւած բանտորների
պետական իշխանութեամբ, իսկ պետական չինովնիկ-
ների գերը կը դառնայ մեր յանձնարարութիւնները կա-
տարող, պատասխանատու, փոխման ենթակայ համեստ
վարձատրութիւն, տացող «հսկիչների եւ հաշւապահ-
ների» (իշարկէ ամեն տեսակի ու աստիճանի տեխնիկ-
ների հետ միասին) հասարակ մի դեր, — ահա մեր պրո-
լետարական խնդիրը, ահա թէ ինչից կարելի է եւ պէտք
է սկսել պրոլետարական յեղափոխութիւն կատարելիս:
Այդ սկզբնաւորութիւնը՝ որ յենւած խոչոր արտադրու-
թեան բազիսի վրայ, տանում է դէպի ամեն տեսակի
չինովնիկութեան աստիճանական «մահացում» դէպի
աստիճանական ստեղծումն այնպիսի կարգի, կարգի ա-
ռանց չակերտների, կարգի, որը նման չէ վարձու ստըր-
կութեան — այնպիսի կարգի, երբ հսկողութեան եւ
հաշւապահութեան գնալով աւելի ու աւելի պարզացող
Փունկցիաները կը կարողանայ կատարել ամեն մարդ հեր-
թով, յետոյ կսկսեն սովորութիւն դառնալ եւ վերջապէս
կը վերանան իբրեւ յատուկ խաւի մարդկանց յատուկ
Փունկցիաները:

Մի շատ սրամիտ սոցիալ-դեմոկրատ, անցեալ դարի
70 ական թւականներին պաստի անւանել է սոցիալիստա-
կան տնտեսութեան օրինակ: Դա շատ ճիշտ է: Այժմ
պոստը մի տնտեսութիւն է, որ կազմակերպւած է ըստ
պետական կապիտալիստական մոնոպոլիայի տիպի: Իմ-
պերիալիզմը աստիճանարար բոլ ը թրըստները այդ տի-
պի կազմակերպութիւններ է դարձնում: Այստեղ էլ աշ-
խատանքով ծանրաբեռնաւծ ու սոված «հասարակ» աշ-
խատաւորների գլխին կանգնած է նոյն բուրժուական
րիւրոկրատիան: Բայց հասարակական տնտեսութեան
մեխանիզմն այստեղ արդէն պատրաստ է:

Խորտակենք կապիտալիստներին, զինւած բանւոր-ների երկաթէ ձեռքով ճնշենք այդ կեղեքիչների դիմադը-րութիւնը, կոտրտենք ժամանակակից պետութեան բիւ-րուկրատիկ մեքենան եւ մեր առաջ կըբացւի «պարագի-տից» ազատած, տեխնիկական տեսակէտից բարձր կանգնած մի մեխանիզմ, որը կարող են բանեցնել իրանք միացած բանւորները՝ վարձելով տեխնիկներ, հսկիչներ, հաշւապահներ, վարձատրելով դրան բոլորի աշխա-տանքը ինչպէս եւ բոլոր պետական չինովնիկների աշ-խատանքը բանւորական աշխատավարձով։ Ահա կոն-կրետ, գործնական խնդիր, որը անմիջապէս կարելի է իրագործել բոլոր թրըստների վերաբերմամբ, որը ա-զատում է աշխատաւորներին հարստահարումից, որը հաշվի է առնում կոմմունի գործնականապէս արդէն սկը-սած (մանաւանդ պետական չինարարութեան գաւա-ռում) փորձը։

Ժողովրդական ողջ տնտեսութիւնը՝ կազմակեր-պւած ինչպէս փոստը այն տարրերութեամբ միայն, որ բոլոր տեխնիկները, հսկիչները, հաշւապահները, ինչ-պէս եւ բոլոր պաշտօնատար անձննք «քանւորական աշ-խատավարձից» աւելի չըստանան եւ զինւած պրոլետա-րիատի կոնսուլի ու գեկավարութեան տակ գտնեն — ահա այս է ամենամերձաւոր նպատակը։ Ահա թէ որ-պիսի պետութիւն է հարկաւոր մեզ եւ որպիսի տնտեսա-կան հիմքերի վրայ հաստատած պետութիւն է հարկա-ւոր մեզ։ Ահա թէ ինչ կըտայ պարլամենտարիզմի ոչըն-չացումն ու ներկայացուցչական հաստատութիւնների պահպանումը։ Ահա թէ ինչը կըփրկէ աշխատաւոր դա-սակարգերը այդ հաստատութիւնների պոռնկացումից, որ կատարում է բուրժուազիան։

4. Ազգի միուրեան կազմակերպութիւնը։

...Աղջային կազմակերպութեան այն կարձ-ուրագծում, որի մշակումը շարունակելու ժամա-նակ չունեցաւ կոմմունը միանգամայն պարզ կեր-նակ պատում է, որ «կոմմունը պէտք է ... անդա՛ ամենափոքր գիտի քաղաքական ձեւը դառնար»... եւ հէնց կոմմունաներից պիտի ընտրւէր Պարիզի «ազգային դեեւգացիան»։

...«Այն սակաւաթիւ, բայց կարեւորագոյն ֆունկցիաները, որ կարող էին բաժին ընկնել կեն-տըրունական կառավարութեան ըլպիտի վերացւէին — այդ պնդումը գիտակցական կեղծում էր — այլ պիտի յանձնուէին կոմմունական, այսինքն խիստ պատասխանատու չինովնիկներին»...»

...«Ազգի միութիւնը ոչ թէ ջնջւելու էր, այլ ընդհակառակը՝ կազմակերպելու կոմմունական կարգի միջոցով։ Ազգի միութիւնը պիտի իսկական դառնար չնորհիւ ոչնչացման այն պետական իշխա-նութեան, որը ցուցաբում էր ինքն իրեն իրեւ-այդ միութիւնն մարմնացում, բայց ուզում էր աղ-ջից անկախ, նրանից բարձր կանգնած լինել։ Եւ ի-րապէս պետական այդ իշխանութիւնը լոկ պարա-գիտային մի յաւելում էր ազգի մարմնի վրայ։ Խնդիրն այն էր, որ հին կառավարչական իշխանու-թեան ձնշիչ օրդանները կտրւէին ու դէն չըրտուէին եւ հասարակութիւնից վեր կանգնած լինելու յա-ւակնութիւն ունելող իշխանութիւն ֆունկցիաները խլէին նրանից ու յանձնուէին հասարակութեան սպասաւորներին»։

Թէ որ աստիճան չեն ըմբռնել, կամ աւելի ճիշտ ա-սած չեն ուղեցել ըմբռնել Մարքսի այս դատողութիւն-

ները ժամանակակից սոցիալ-դեմոկրատիայի օպպու-
տիւնիստները — այդ բանն ամենից լաւ ցոյց է տալիս
ռենեգատ Բերնշտայնի «Սոցիալիզմի նախապայմաններն
ու սոցիալ-դեմոկրատիայի անելիքները» հերոսարատո-
րէն-հոչակաւոր գիրքը:

Մարքսի հէնց վերեւն առաջ բերած խօսքերի առթիւ-
թերնշտայնը գրում էր, որ այդ ծրագիրն իր քաղաքա-
կան բովանդակութեամբ բոլոր էական գծերով Պրու-
դոնի Փեղերալիզմին միծագոյն նմանութիւն է ցուցահա-
նում: Զնայած Մարքսի ու «մանր-բուրժուատ» Պրուդոնի
բոլոր տարածայնութիւններին (Բերնշտայնը «մանր-
բուրժուատ» բառերը չակերտաւորում է, կարծելով որ
այդպիսով հեղնանք է արտայայտում), այնուամենայ-
նիւ այս կէտերում երկուսն էլ իրենց մտածողութեան
ընթացքով իրար շատ մօտ են, որքան որ այդ հնարաւոր
է: Իհարկէ, շարունակում է Բերնշտայնը, մունիցիպալի-
տետների նշանակութիւնը աճում է, բայց ինձ կասկա-
ծելի է թւում այն, որ իբր դեմոկրատիայի առաջն
խնդիրը ժամանակակից պետութիւնների վերացնելն է
(Auflösung-բառացի՝ ցրելը, արձակելը) կամ նրանց
կազմակերպութեան փոփոխելը (Umwandlung-յեղա-
շրջելը) այն ձեւով, ինչպէս Մարքսն ու Պրուդոնն են
պատկերացնում այդ, այսինքն աղղային ժողովը գու-
մարւելու է գաւառական կամ վիճակային ժողովների
դեկտասններից, իսկ այդ ժողովներն իրենց հերթին կոմ-
մունների դեկտասններից պիտի կազմւեն այնպէս, որ
աղղային ներկայացուցչութեան նախկին ողջ սիստեմը
պիտի կատարեալապէս անհետանայ: (Բերնշտայն «Սո-
ցիալիզմի նախապայմաններն ու սոցիալ-դեմոկրատիա-
լի անելիքները» 1899 թ. գեր. հրատ. եր. 134 և 136):

Սա ուզզակի հրէշաւոր մի բան է՝ չփոթե՛լ Մարքսի
հայեցքները «պարագիտ պետական իշխանութեան ո-

չընչացման» վերաբերեալ եւ Պրուդոնի Փեղերալիզմը:
Բայց սա պատահական բան չէ, որովհետեւ օպպորտիւ-
նիզմի մտքովն անգամ չի անցնում, որ Մարքսն այստեղ
ոչ թէ Փեղերալիզմի մասին է խօսում, հակադրելով այն
ցենտրալիզմին, այլ հին բուրժուական, բոլոր բուրժուա-
կան երկներում գոյութիւն ունեցող պետական մեքենայի
փշրման մասին:

Օպպորտիւնիստի մտքովն անցնում է միայն եւ մի-
միայն այն, ինչ որ նա տեսնում է իր շուրջը քաղքենի-
ների ուսորեայ շրջանում «ռեֆորմիստական» ճահճում —
այն է՝ միմիայն «մունիցիպալիտները»: Պրոլետա-
րիատի յեղափոխութեան մասին օպպորտիւնիստը մը-
տածելն անգամ մոռացել է:

Դա ծիծագելի է: Բայց նշանակալից է, որ այդ կէ-
տում Բերնշտայնի հետ չէին վիճում: Բերնշտայնի ա-
սածները շատերն են ջրել, մանաւանդ Պլեխանովը ուսւ
գրականութեան մէջ, կառուցկին եւրոպական գրականու-
թեան մէջ, բայց ոչ մէկը, ոչ միւսը խօսի չեն բացել
Բերնշտայնի կատարած Մարքսի այդ աղաւազման մասին:

Օպպորտիւնիստն այն աստիճան մոռացել է յեղա-
փոխականօրէն մտածելուց, յեղափոխութեան վրայ
խորհելուց, որ «Փեղերալիզմը» վերաբրում է Մարքսին,
չփոթելով նրան անորիխիզմի հիմնագիր Պրուդոնի հետ:
Իսկ օրթոդոքս մարքսիստ լինել եւ յեղափոխական մարք-
սիզմը պաշտպանել կամեցող կառուցկին ու Պլեխանովը
այդ մասին լուսաւ են: Ահա այստեղ են թաղւած մարք-
սիզմի եւ անարխիզմի տարբերութիւններին վերաբերող
հայեցքների այն ծայր՝ հեղ գուհնացման արմատները,
որ յատուկ է կառուցկիականներին ու օպպորտիւնիստ-
ներին եւ որոնց մասին մենք դեռ պիտի խօսենք:

Կոմմունայի փորձին վ'սաբերւող Մարքի մեր առաջ բերած դատողութիւննեցի մէջ Փեղերալիզմի հետք անգամ չկայ: Մարքսը համաձայնում է Պրուդոնի հետ հէնց այն բանում, ինչ որ օպպորտիւնիստ Բերնշտայնը չի տեսնում: Մարքսը Պրուդոնից տարբերւում է այն բանում, որում Բերնշտայնը նմանութիւն է տեսնում:

Մարքսը համաձայն է Պրուդոնի հետ նրանում, որ նրանք երկուսն էլ ժամանակակից պետական մէքենայի «փշրման» կողմնակից են: Մարքսիզմի և անարխիզմի Պրուդոնի Բակունինի այդ նմանութիւնը ոչ օպպորտիւնիստները, ոչ կառուցկանականները չեն ուզում տեսնել, որովհետեւ այդ կէտում մարքսիզմից շատ են հետացել:

Մարքսը համաձայն չէր Պրուդոնի ու Բակունինին հէնց Փեղերալիզմի խնդրում (էլ չեմ ասում՝ պրոլետարիատի դիկտատուրայի մասին): Մնարբուրժուական հայեցքներից Փեղերալիզմը բղխում է սկզբունքորէն: Մարքսը ցենտրալիստ է: Եւ նրա առաջ բերած դատողութիւններում չեղայ ցենտրալիզմի եւ ոչ մի չեղում: Միմիայն այն մարդիկ, որ քաղքենիական «սնահաւատութեամբ» են լցւած դէպի պետութիւնը, միմիայն այդպիսի մարդիկ կարող են բուրժուական մէքենայի ոչնչացումը ցենտրալիզմի ոչնչացում համարել:

Լաւ, իսկ եթէ պրոլետարիատն ու ամենաչքաւոր գիւղացիութիւնը իրենց ձեռքն առնեն պետական իշխանութիւնը բոլորովին ազատ կերպով կոմմուններ կազմակերպեն եւ միացնեն այդ բոլոր կոմմունների գործողութիւնները կապիտալին հարւածելու, կապիտալիստնրի դիմադրութիւնը խորտակելու, երկաթուղիները, ֆարմիկները, հողը եւ այլն իրելու մասնաւոր սկզբանատէրերից ու ողջ ազգին, ողջ հասարակութեան տալու համար — միթէ դա ցենտրալիզմ չի լինի: Միթէ դա

ամենահետեւողական ու դեմոկրատիկ պրոլետարական ցենտրալիզմ չի լինի:

Բերնշտայնը պարզապէս գլխի չի ընկնում, որ հնարաւոր է եւ կամաւոր ցենտրալիզմ, կոմմունների կամաւոր միացում իրեւ մի ազգի պրոլետարական կոմմունների կամաւոր ձուլում բուրժուական տիրապետութիւնն ու բուրժուական պետական մեքենան իորտակելու համար: Բայ Բերնշտայնի, ինչպէս եւ ըստ ամեն մի Փիլիստերի, ցենտրալիզմը պատկերանում է իրեւ միմիայն վերեւից, չինովնիկական եղանակով ու զինուրական ոյժով ժողովրդի վկին փաթաթւող եւ պահպանող մի բան:

Մարքսը դիտմամբ, կարծես թէ նախատեսնելով իր հայեցքների աղճատումն, ընդգծում է, որ գիտակցական զեղծում է այն մեղադրանքը, որ իրը թէ կոմմունը կամենում էր ոչնչացնլ ազգի միութիւնն ու վերացնել կենտրոնական իշխանութիւնը: Մարքսը դիտմամբ զործածում է «ազգի միութիւնը կազմակերպել» նախադասութիւնը, որպէսզի հակադրած լինի գիտակից, դեմոկրատիկ, պրոլետարական ցենտրալիզմը բուրժուական, զինովնիկական ցենտրալիզմին:

Բայց... խուլից էլ վատ է նա, ով չի ուզում լսել: Իսկ ժամանակակից սոցիալ-դեմոկրատիայի օպպորտիւնիստները հէնց լսել էլ չեն ուզում պետական իշխանութեան ոչնչացման մասին, պարազիտին կտրելու եւ գէն գցելու մասին:

5. Պարազիտ — պետութեան ոչնչացումը:

Իսկ արդէն առաջ բեռինք Մարքսի համապատասխան խօսքերը, այժմ պիտի լրացնենք այդ խօսքերը:

....«Նոր պատմական ստեղծագործութեան սովորական հակատագիրն այն է, դրում էր Մարքսը,

որ նրան ընդունում են իրեն հին ու իրենց կեանքն ապրած հասարակական ձեւերի մի նմանութիւն։ Հենց այդպէս էլ այս նոր կոմմունը, որ կոտրում է (bricht—փշրում է) ժամանակակից պետական իշխանութիւնը, նկատում էր իրը յարուցում միջնալրեան կոմմունի... իրո մանր պետութիւնների դաշնակցութիւն (Մոնտեսքիէ, ժիրոնդիստներ) ... իրը արտակարգ ցենտրալիզմի դէմ հնուց մղուղ պայքարի չափազանցութեան հասցրած մի ձեւ...»

«Կոմմունային կարգը կըվերադարձնէր հասարական մարմնին բոլոր այն ոյժերը, որ մինչեւ այժմ լափում էր պարագիտային ուռոյցք՝ պետութիւնը, որ հասարակութեան հաշւին էր սնւում եւ արգելում էր նրա ազատ շարժումը։ Միմիայն դըրանով արդէն առաջ մղուած կը լինէր Փրանսիայի վերածնութեան գործը»...

...«Կոմմունային կարգը գիւղական արտադրողներին ամեն մի չընանի գլխաւոր քաղաքի հոգեւոր ղեկավարութեան կենթարկէր եւ այնտեղ յանձինս քաղաքացի բանտորների կապահովէր նըրանց շահերի բնական ներկայացուցչութիւնը։ Ինքը կոմմունի գոյութիւնն արդէն առաջ էր մղում իրեն հակաշխութեական իշխանութեան, որն այժմ արդէն աւելորդ է դառնում»...

Պետական իշխանութեան ոչնչացում, որը պարագիտային ուռոյց էր, «կտրել», «խորտակել նրան»։ «Պետական իշխանութիւնն արդէն աւելորդ է դառնում»—ահա թէ ինչ արտայայտութիւններ է գործածում Մարքսը պետութեան նկատմամբ երբ գնահատում ու անալիզի է ենթարկում կոմմունի փորձը։

Այդ ամենը գլուած է ընդամենը գրեթէ մի կէս գալ առաջ եւ սակայն այժմ ստիպւած ենք կարծես պեղում—ներ կատարել, որպէս զի մասսաների գիտակցութեան մատչելի դարձնենք չաղճատւած մարքսիզմը։ Այն եղածաւչելի դարձնենք որ արել էր Մարքսը իր տեսած վերակացութիւնները որ արել էր Մարքսը զիտելուց, մոռացել են հէնց ջին մեծ յեղափոխութիւնը զիտելուց, մոռացել են հէնց ջին մեծ յեղափոխութիւնների ըլջանը։

...«Մեկնութեանց այն բազմազանութիւնը, որ առաջ է բերել կոմմունը եւ շահերի այն բազմապիտութիւնը, որ արտայայտւել է նրա մէջ, ցոյց են սուլթանը որ կոմմունը մի վերին աստիճան ձկուն քաղական ձեւ է եղել, մինչդեռ կառավարութեան դարձական նախկին ձեւերն ըստ էութեան ձնշիչ են եղել։ բոլոր նախկին ձեւերն ահա թէ ինչն է եղել։ Նրա իսկական խորհուրդն ահա թէ ինչն է եղել։ բանի հութեամբ նա բանոր դասակարգի կառավարութիւնն է եղել, արտադրող դասակարգի ընդդէմ իւրացնող դասակարգի մղած պայքարի արդիւնքը, վերջապէս նա եղել է այն բացայայտ ձեւը, որի միջնոցին կարող էր կատարւել աշխատանքի տնտեսական աղատումը»...

«Առանց այդ՝ վերջին պայմանի կոմմունական կարգը անհնարութիւն եւ խաբէութիւն կըլինէր»... Ուտոպիստները զբաղւած էին քաղաքական ձեւերի անելով» որոնց միջոցին կարող էր իրականանալ հասարակութեան սոցիալիստական վերաշնուրմը։ Անարխիստները իրանցից գէն էին չպրտում քաղաքական ձեւերի ինդիրն առհասարակ։ Սոցիալ — գեմոկրատիստի սահմաններն ընդունել են բութութեական պարամենտական ղեմոկրատիկ քաղաքական ձեւերն իրը մի սահման, որն անցնելն արգելուած է եւ ծնրադիր իրենց ճակատը փշրել են քարերին խփելով ու աղօթելով այդ

«օրինակին», միեւնոյն ժամանակ անարխիզմը հռչակել այդ ձեւերը կոտրելու ամեն մի ձգտում:

Մարքսը սոցիալիզմի եւ քաղաքական պայքարի ողջ պատմութիւնից այն եղակացութիւնը հանեց, որ պետութիւնը պիտի չքանայ, որ նրա չքացման փոխանցական ձեւը (պետութիւնից անպետութեան անցնելու ձեւը) պիտի լինի «իբրեւ տիրող դասակարգ կազմակերպւած պրոլետարիատը»: Բայց Մարքսը չը ձեռնարկում յայտագործելու այդ ասպազայի քաղաքական ձեւերը: Նա սահմանափակեց ինքն իրան ֆրանսիական պատմութեան ձգրիտ դիտողութեամբ, նրա անալիզով եւ այն եղակացութեամբ դէպի որը բերում է 1851 թիւը՝ բանը բուրժուական պետական մեքենայի խորտակմանն է Հասնում:

Եւ երբ պրոլետարիատի մասսայական յեղափոխական շարժումը բռնկեց, Մարքսը, չնայած այդ շարժման անյաջողութեան, չնյանած նրա կարճատեւութեան ու ակներեւ թուլութեան՝ սկսեց ուսումնասիրել թէ ի՞նչ ձեւեր է յայտագործել նա:

Կոմմունը պրոլետարական յեղափոխութեամբ «վերջապէս յայտագործած» այն ձեւն է, որի միջոցին կարող է կատարել աշխատանքի տնտեսական ազատազրումը:

Կոմմունը — պրոլետարական յեղափոխութեան առաջին փորձն է փշրել բուրժուական պետական մեքենան եւ «վերջապէս յայտագործած» այն ձեւն է, որով հնարաւոր է եւ հարկաւոր է փոխարինել փշրւածը:

Յետազայ շարադրւ թեան ընթացքում մենք կրտեսնենք որ այլ միջավայրում եւ այլ պայմաններում կատարուղ 1905 եւ 1917 թւականների ուսւական յեղափոխութիւնները շարունակում են Կոմմունի գործն ու հաստատում են Մարքսի հանճարեղ անալիզը:

Գ Լ Ո Ւ Խ Ի Վ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ: ԷՆԳԵԼՍԻ ԼՐԱՑՈՒՑԻՉԻ
ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Կոմմունի փորձի նշանակութեան խնդրի նկատմամբ Մարքսը տւել է այն, ինչ հիմնական է: Էնդելուը քանիցս վերադարձել է նոյն թեմային պարզաբանելով Մարքսի անալիզն ու եղակացութիւնները եւ երբեմն նա այն աստիճան գորեղ ու ցայտուն կերպով է լուսաւորել խնդրի միւս կողմերը, որ այդ պարզաբանութիւնների վրայ անհրաժեշտ է առանձնապէս կանգ առնել:

1. «Բնակարանային խնդիր»

Բնակարանային խնդրին նւիրւած իր գրւածքում (1872 թ.) էնդելոն արդէն հաշւի է առնում կոմմունի փորձը եւ մի քանի անգամ կանդ է առնում այն հարցի վրայ թէ որոնք են յեղափոխութեան խնդիրները պետութեան վերաբերմամբ: Հետաքրքրական է, որ կոնկրետ օրինակի վրայ ակներեւ կերպով պարզում են մի կողմից պրոլետարական եւ այժմեան պետութեան նմանութեան գծերը, որոնք հիմք են ծառայում երկու դէպքում էլ խօսելու պետութեան մասին, իսկ միւս կողմից տարբերութեան գծերը, կամ պետութեան ոչնչացման անցնելը»:

«Ի՞նչպէս լուծել բնակարանային խնդիրը: Ժամանակակից հասարակութեան մէջ այդ խնդիրը լուծում է ձիշտ այնպէս ինչպէս եւ ամեն մի ւրիշ հասարակական խնդիր՝ առաջարկի եւ պահանջի տնտեսական աստիճանաւոր հաւասարեցումով, իսկ դա այնպիսի լուծում է, որը ինքը շարունակ ծնում է հարցը նորից, այսինքն ոչ մի լուծում չի տալիս: Թէ ինչ կերպ կըլուծէ այդ խնդիրը սոցիալական

յեղափոխութիւնը — դա կախւած է «չ միայն ժամանակի եւ տեղի պայմաններից այլեւ այն խնդիրներից որոնք շատ աւելի հեռու են գնում եւ որոնց մէջ կարեւորագոյններից մէկն է գիւղի եւ քաղաքի ներհակութեան խնդիրը։ Քանի որ մենք ապագայ հասարակութեան կազմակերպման ուսովիազան սխստեմներ հասրելով չենք զբաղւում, ուստի եւ դրա վրայ կանդ առնելու աւելի քան անիմաստ գործ պիտի լինէր։ Մի բան որ կասկածից գուրս է, դա այն է, որ այժմ արդէն մեծ քաղաքներում բաւականաչափ են բնակութեան յարմար չէնքերը եւ իսկոյն կարելի է բաւարարել բնակարանային իրական կարիքը եթէ միայն այդ չէնքերը օգտագործւին խելացի կերպով։ Այդ իհարկէ կարող է իրականանալ միմիայն ներկայ տէրերին էքսպրոպրիացիայի ենթարկելով եւ այդ տներում անտուն կամ նեղւածքի մէջ ապրող բանորներին բնակեցնելով։ Եւ հէսց որ պլուետարիատը քաղաքական իշխանութեան տէր դառնայ նման մի միջոց որ հրամայւում է հասարակական շահի տեսակէտով նոյնքան հեշտ իրագործելի կըմինի որքան եւ ժամանակակից պետութեան ձեռքով կատարւող ուրիշ էքսպրոպրիացիաներն ու բնակարաններ գրաւելը (1887 թ. գերմ. հրատ. եր. 22)։

Այստեղ պետական իշխանութեան փոփոխումը չի քննւում, այլ միայն նրա գործունէութեան բովանդակութիւնը։ Էքսպրոպրիացիաներն ու բնակարանների գրաւումներն այժմեան պետութեան կարգադրութեամբ էլ են կատարւում։ Պրոլետարական պետութիւնը գործի ձեւական տեսակէտից նոյնպէս «կըկարգադրէ» գրաւել բնակարաններն ու էքսպրոպրիացիայի նեթարկել տները։

Բայց պարզ է որ հին գործադիր ապարատը՝ չին. վնի-
կութիւնը, որ կապւած է բուրժուազիայի հետ, սւզզակի
անպէտք կըլինէր պրոլետարական պետութեան կար-
գադրութիւնները կեանքում իրագործելու համար։

...«Անհրաժեշտ է հաստատել որ աշխատաւոր
ժողովրդի ձեռքով աշխատանքի բոլոր գործիքները
և ողջ ինգուստրին փաստօրէն գրաւելը պըուդոնեան
«վերագնման» հակառակն է։ Վերջին դէպքում
(այսինքն «վերագնման» առանձին բանուրը բնա-
կարանի, զիւղացիական հողաբաժնի, աշխատանքի
գործիքի սեփականատէր է դառնում իսկ առաջին
դէպքում (գրաւման դէպքում) տների, Փարբիկ-
ների եւ աշխատանքի գործիքների հաւաքական սե-
փականատէրը դառնում է «աշխատաւոր ժողովր-
դը»։ Այդ տներից, Փարբիկներից եւ այլն օգտւել
գոնէ սկզբնական փոխանցիկ շրջանում հագիւ թէ
թոյլատրւի անհատներին եւ ընկերութիւններին ա-
ռանց ծախսերի վճարման։ Նմանապէս եւ հողային
սեփականութեան վերացումը հողային ռենտի ո-
չընչացում չի ենթագրում այլ միայն նրա յահնձ-
նումը հասարակութեան թէպէտեւ ձեւափոխած
կերպով։ Ուրեմն այն, որ աշխատաւոր ժողովր-
դը տէք կըդառնայ աշխատանքի բոլոր գործիքնե-
րին բնաւ չի վերացնի վարձելն ու վարձով տալը»։

Այս դատողութեան մէջ շօշափւած խնդիրը, այսինքն
պետութեան ինքն իրեն մահանալու տնտեսական հիմ-
քերի խնդիրը մենք քննութեան կ'առնենք հետեւեալ
գլխում։ Ինգելսը շատ դգոյլ է արտայայւում ասելով
որ պրոլետարական պետութիւնը «հազիւ թէ» առանց
վճարի բնակարաններ բաժանէ «գոնէ սկզբնական փո-
խանցիկ շրջանում»։ Բոլոր ժողովրդին պատկանող բը-

նակարանները առանձին ընտանիքներին վարձով տալը ենթադրում է նաեւ այդ վարձի գանձում, որոշ կոնտրոլ եւ բնակարանների բաժանման որոշ նորմայի մշակում։ Այդ բոլորը պահանջում է որ լինի որոշ պետական ձեւ, բայց բնաւ չի պահանջում որ լինի բիւրոկրատիկ ապարատ եւ պաշտօնատար անձերի յատուկ առանձնաշընորհ գրութիւն։ Իսկ իրերի այն գրութեան անցնելը երբ կարելի կրլինի բնակարանները ձրի բաժանել կապւած է պետութեան կատարեալ «ինքնամահացման» հետ։ Խօսելով այն մասին, թէ ինչպէս բլանկիստները կոմմունից յետոյ նրա փորձի աղղեցութեան տակ ընդունցին ՞արքսկզմի պրինցիպական դիրքը ինդելուը անցողակի ձեւակերպում է այդ դիրքը հետեւեալ կերպով։

...«Անհրաժեշտ է պրոլետարիատի քաղաքական գործողութիւնն ու գիւտատուրան իրեւ մի քայլ դասակարգերի եւ դրանց հետ պետութեան վերացման ացնելու»։ (Եր. 55)

Տառացի քննադատութեան սիրահարներն ու մարքսիզմի բուրժուական «ջնջիչները» երեւի հակասական կըհամարեն որ այսեղ ընդունում է «պետութեան վերացումն» եւ այդ Փորմուրան իրեւ անարխիստական ժիւտում է Անտի-Դիւրինդից վերն առաջ բերած հատածում։ Զարմանալի չէր լինի եթէ օպպորտիւնիստները ինդելուն էլ «անարխիստ» գրէին, — այժմ քանի զնում աւելի ու աւելի է տարածում սոցիալ-շովինիստների շրջանում ինտերնացիոնալիստներին անարխիզմի մէջ մեղադրելը։

Որ դասակարգերի վերացման հետ միասին կըվերացւի եւ պետութիւնը՝ դա մարքսիզն ուսուցել է մէշտ։ Անտի-Դիւրինդի պետութեան ինքնամահացման վերաբերող հանրածանօթ հատածում անարխիստները մէ-

ղաղղրւում են ոչ թէ պարզապէս այն բանում, որ պետութեան վերացման կողմնակից են, այլ այն բանում որ նրանք քարոզում են որ իբր թէ հնարաւոր է պետութիւնը վերացնել «էսօր էգուց»։

Աչքի առաջ ունենալով մարքսիզմի պետութեան վերացման խնդրի եւ անարխիզմի մասին ունեցած տեսակէտի այն կատարեալ աղաւազումը որ տիրում է այժմ այլապահող «սոցիալ-դեմոկրատական» ուսմունքի մէջ առանձնապէս օգտաւէտ կըլինի յիշեցնել Մարքսի եւ էնգելսի անարխիստների դէմ եղած բանակոիւը։

2. Անարխիստների դէմ մշտականիւը։

Այդ բանակոիւը տեղի է ունեցել 1873 թւին։ Մարքսն ու էնգելսը պրուդոնիստ «աւտոնոմիստների» կամ «հակաւատորիստարիստների» դէմ յօդւածներ են տեւ ի-տալական սոցիալիստական ժողովածուին։ Այդ յօդւածների գերմաններէն թարգմանութիւնը լոյս է տեսնել «Neue Zeit»ում միմիսայն 1913 թւին։

...«Եթէ բանտոր դասակարգի քաղաքական պայքարը յեղափոխական ձեւեր է ընդունում, — գրում էր Մարքսը, ծաղրելով անարխիստներին այն բանի համար, որ նրանք ժխտում են քաղաքականութիւնը, — եթէ բանտորները բուրժուազիայի դիկտատուրայի տեղ իրենց յեղափոխական դիկտատուրան են հաստատում՝ նրանք դրանով պրինցիպների անարգման մի սոսկալի մեղք են կատարում, որովհետւ իրնց կողին, ողորմելի օրւայ պահանջներին բաւարարութիւն տալու համար, բուրժուազիայի դիմադրութիւնը ճնշելու համար բանտորները պետութեանը յեղափոխական անցողիկ ձեւ են տալիս, զէնքը ցած դնելու եւ պետութիւնը վերացնելու փոխարէն։ (Neue Zeit 1913—14, 32րդ տարի հ. I, Եր. 40)։

Ահա թէ պետութեան որպիսի «վերացման» դէմ էր, որ բողոքում էր Մարքսը բացառապէս անարխիստներին հերքելիս : Մարքսը բնաւ այն բանի դէմ չէր բողոքում, որ դասակարգերի չքացման հետ միասին պետութիւնն էր կը չքանայ կամ կը վերացւի դասակարգերի վերացման հետ միասին, այլ այն բանի դէմ, որ բանւորները հրաժարւեն զէնքից, կազմակերպւած բոնութիւնից, այսինքն՝ պետութիւնից, որը պիտի ծառայէ «բուրժուազիայի դիմադրութիւնը ճնշելու» նպատակին :

Որպէս զի անարխիզմի դէմ մղած իր պայքարի խսկական իմաստը չաղաւաղեն, Մարքսը դիտմամբ ընդգծում է պետութեան «յեղափոխական եւ անցողիկ ձեւը» որն անհրաժեշտ է պրոլետարիատի համար : Պրոլետարիատին պետութիւնը հարկաւոր է միայն ժամանակաւոր կերպով : Մեր ու անարխիստների մէջ տարբերութիւն չկայ պետութեան վերացման խնդրում, իբրեւ նպատակի : Միայն թէ մենք պնդում ենք, որ այդ նպատակին համար հարկաւոր է ժամանակաւոր կերպով օգտագործել պետութեան զէնքերը, միջոցները եւ գործելակերպը հարստահարողների դէմ, որ դասակարգերը ոչնչացնելու համար անհրաժեշտ է ճնշւած դասակարգի ժամանակաւոր դիմադրութան :

Մարքսը անարխիստների դէմ հարցը դնում է ամենակտրուկ եւ ամենապարզ ձեւով : Թէ կապիտալիստների լուծը թոթափելիս բանւորները «ցած պիտի դնեն իրենց զէնքը» թէ պիտի օգտւեն այդ զէնքից ընդդէմ կապիտալիստների, որպէսզի նրանց դիմադրութիւնը խորտակեն : Իսկ երբ մի դասակարգ սիստեմատիկ կերպով զէնք է բանեցնում մի ուրիշ դասակարգի դէմ ապա ի՞նչ է դա եթէ ոչ պետութեան անցողական ձեւ :

Թող ամեն մի սոցիալ-դեմոկրատ ինքն իրեն հարց տայ թէ արդեօք այդպէ՞ս է դրել ինքը պետութեան հարցը անարխիստների դէմ բանակոիւ մղելիս : Արդեօք այդպէ՞ս է դրել հարցը երկրորդ ինտերնացիոնալի պաշտօնական սօցիալիստական կուսակցութիւնների մեծամասնութիւնը :

Էնդելսը շատ աւելի մանրամասն ու մատչելի կերպով է շարադրում միեւնոյն մտքերը : Ամնից առաջ նա ծաղրում է իրենց «հակասատորիտարիստ» , այսինքն՝ ամեն տեսակ հեղինակութիւն, ամեն տեսակ հպատակում, ամեն տեսակ իշխանութիւն ժխտող անւանող պլըրուզնիստների մտածութեան իսառնակնթորութիւնը : Վեր առէք Փարբիկը, երկաթուղին, նաւը լայնածաւալ ծովում, ասում է էնդելսը, մի՞թէ պարզ չի որ առանց որոշ հպատակումի, հետեւապէս եւ որոշ հեղինակութեան կամ իշխանութեան չեն կարող բանել տեխնիքական այն բարդ ձեռնարկութիւնները, որոնք հիմնւած են մեքենաների գործադրութեան եւ բազմաթիւ մարդկանց պլանաշափ աշխատակցութեան վրայ :

...«Երբ ես, գրում է էնդելսը, ընդդէմ ամենածայրայեղ հակասատորիտարիստների, առաջ եմ բերում այդպիսի արգումենտներ՝ նրանք ինձ միմիայն այսպէս կարող են պատասխանել . . . հա՛, դա ճիշտ է, բայց այստեղ խօսքը այն հեղինակութեան մասին չի, որը մենք չնորհում ենք մեր դելեգատներին, այլ որոշ յանձնարարութեան մասին : Այդ մարդիկ կարծում են թէ մենք մի բան փոխած կը լինենք եթէ վերցնենք ու փոխենք այդ բանի առունը . . .

Եւ այդպիսով ցոյց տալով, որ հեղինակութիւնն ու աւտոնոմիան յարաբերական հասկացողութիւններ են, որ

նրանց գործադրութեան ըլջանը փոխւում է հասարակական Փաղերի հետ միասին, որ նրանց աբսոլիւտ համարելն անհեթեթութիւն է, նաեւ աւելացնելով, որ մեքենաների եւ խոչոր արտադրութեան ըլջանը գնալով լայնանում է, էնդեւսն աւտորիտետին վերաբերող ընդհանուր դաշտութիւններից անցնում է պետութեան ինդրին:

...«Եթէ աւտոնոմիստները, — զեռում է նա, կամենում են ասել, որ ապագայի սոցիալական կազմակերպութիւնը հեղինակութիւն թոյլ կըտայ միմիայն այն սահմաններում, որոնք անհրաժեշտորէն դժում են արտադրութեան պայմանները, այդ դէպքում նրանց հետ կարելի է խօսքի գալ: Բայց նրանք կոյր են մնում այն բոլոր փաստերի նկատմամբ, որոնք անհրաժեշտ են դարձնում հեղինակութիւնը եւ եռանդապին պայքար են մղում բառի դէմ:

«Ի՞նչից է, որ հակաաւտորիտարիստները քաղաքական հեղինակութեան դէմ, պետութեան դէմ աղաղակելով չեն սահմանափակում իրենց: Բոլոր սոցիալիստները համաձայն են այն բանում, որ պետութիւնը եւ նրա հետ միասին քաղաքական հեղինակութիւնը կրչքանայ ապագայ սոցիալ կան յեղափոխութեան հետեւանքով, ուրեմն հասարակական ֆունկցիաները կըկորցնեն իրենց քաղաքական բնոյթն ու կըդառնան սովորական վարչական ֆունկցիաները, որոնք սոցիալական շահերն են նկատի առնում: Բայց հակաաւտորիտարիստները պահանջում են, որ քաղաքական պետութիւնը վերացւի մի հարւածով, աւելի վաղ քան կըվերացւեն այն սոցիալիստան յարաբերութիւնները, որոնք

ծնել են այդ պետութիւնը: Նրանք պահանջում են, որ սոցիալական յեղափոխութեան առաջին խոկ ակտը աւտորիտետի վերացումը լինի:

Արդեօք երբեւիցէ յեղափոխութիւն տեսած կա՞ն այդ պարանձերը: Անտարակոյս յեղափոխութիւնը ամենաաւորիտար բանն է: Յեղափոխութիւնը մի ակտ է, որով բակչութեան մի մասը հրացանների, սւինների, թնդանօթների այսինքն՝ ծայր աստիճան աւտորիտար միջոցներով իր կամքը բնակչութեան միւս մասի վզին է փաթաթում եւ յաղթող կուսակցութիւնը անհրաժեշտաբար ստիպւած է լինում պահպանել իր տիրապետութիւնը այն ահի միջոցով որ զէնքն է ներշնչում յետաղիմականներին: Եթէ Պարիզի Կոմմունը ընդդէմ բուրժուազիայի յենւած չկինէր զինւած ժողովրդի աւտորիտետի վրայ միթէ կարող էր մի օրից աւելի կեանք ունենալ: Եւ արդեօք մենք ընդհակառակը իրաւունք չունե՞նք նաև խատելու կոմմունը այն բանի համար որ նա չափից գուրս քիչ էր օգտուում այդ հեղինակութիւնից: Արդ՝ կամ հակաաւտորիտարիստները իրենք էլ չըգիտեն թէ ինչ են ասում եւ այդ դէպքում նրանք իսպանացիոն մտքեր են տարածում կամ նրանք գիտեն թէ ինչ են ասում եւ այդ դէպքում դաւաճանում են պրոլետարիատի գործին: Երկու դէպքում էլ նրանք ոչակցիային են ծառայում» (Եր. 39):

Այս դատողութեան մէջ չօշափուում են այն խնդիրները, որոնք պէտք է քննութեան առնել պետութեան «ինքն իրեն մահանալու» խնդրի հետ քաղաքականութեան եւ էկոնոմիայի յարաբերութիւնների խնդիրը՝ քննելիս: (Այդ թեմային նորուած է հետեւեալ գլուխը): Քաղաքական ֆունկցիաների հասարակ վարչական ֆունկցիաներ

դառնալու եւ «քաղաքական պետութեան» խնդիրն այդ է : «Քաղաքական պետութիւն» դարձւածը, որ առաւել կերպով կարող է թիւրիմացութիւն առաջ բերել, ցոյց է տալիս պետութեան ինքն իրեն մահանալու պրոցեսը : «Ինքն իրան մահացրդ», պետութիւնը որոշ աստիճանի վրայ կարելի է անքաղաքական պետութիւն անւանել :

Էնգելսի այս դատողութեան մէջ առաւելապէս նշանաւոր է այն, թէ ինչ ձեւով է գրւում հարցը անարիստների դէմ : Այն սոցիալ-դեմոկրատները, որոնք ուղարկում ն էնգելսի աշակերտները լինել 1873 թւից սկսած միլիոն անդամ վէճ են սկսել անարիստների հետ, բայց վէճը տարել են ոչ այնպէս, ինչպէս կարելի էր եւ կարեւոր էր մարքսիստների համար : Պետութեան մերացումն անարիստները պատկերացնում են շվոթ ու ոչ յեղափոխական կերպով, ահա թէ ինչպէս էր դնում հարցըն էնգելսը : Հէնց յեղափոխութիւնն է որ անարիստները չեն ուղում տեսնել, յեղափոխութիւնն ու իր յատուկ վերաբերմունքը դէպի բռնութիւնը, դէպի իշխանութիւնն ու դէպի պետութիւնը :

Ժամանակակից սոցիալ-դեմոկրատների անարիստումի սովորական քննադատութիւնը քաղքենիների խսկ որ գուհիկ մի դատողութիւն է դարձել՝ «մենք պետութիւնն ընդունում ենք, խսկ անարիստները» ոչ» : Պարզ է որ այդ գուհիկ դատողութիւնը չի կարող չըվանել քիչ թէ շատ մտածելու ընդունակ եւ յեղափոխական բանւորներին : Էնգելսն ուրիշ բան է ասում . նա ընդգծում է, որ բոլոր սոցիալիստներն էլ ընդունում են պետութեան չըքացումն իրեւ սոցիալիստական յեղափոխութեան հետեւանք : Եւ յետոյ, նա կոնկրետ կերպով է դնում յեղափոխութեան խնդիրը, այն խնդիրը, որ սովորաբար սոցիալ-դեմոկրատները օպպորտինիզմից պրդւած լր-

ոութեան են մատնում թողնելով որ այդ հարցը բացառապէս անարիստները «մշակեն» : Եւ այդ հարցը դնելով էնգելսը բանի էութեանն է անցնում՝ արդեօք կոմմունան պետութեան, այսինքն իրեւ տիրող գասակարդ կաղմակերպւած պրոլետարիատի յեղափոխական իշխանութեամբ աւելի ըլպիտի օգտւէր :

Տիրող պաշտօնական սոցիալ-դեմոկրատիան սովորաբար այն հարցին՝ թէ ո՞րն է պրոլետարիատի կոնկրետ անելիքը յեղափոխութեան ընթացքում պատասխանում էր կամ ուղղակի Փիլիստերի հեղնանքով կամ լաւագոյն դէպքում ծուռ ու մուռ սովիստական ֆրազով թէ՝ «այդ իր ժամանակին կերեւայ» : Եւ անարիստներն իրաւունք էին ստանում ասելու այդ սոցիալ-դեմոկրատիայի հասցէին որ նա դաւաճանում է բանւորներին յեղափոխականօրէն դաստիարակելու խնդրին : Էնգելսն օգտագործում է վերջին պրոլետարական յեղափոխութեան փորձը հէնց այն բանի համար որ կոնկրետ կերպով ուսումնասիրէ թէ ի՞նչպէս եւ ի՞նչ պիտի անի պրոլետարիատը բանկերի եւ պետութեան վերաբերմամբ :

3.— Նամակ Բէրէլին

Եթէ ոչ ամենանշանաւորը, ապա ամենանշանաւոր դատողութիւններից մէկն է Մարքսի եւ էնգելսի պետութեան խնդրին նորիուած գրւածքներում հետեւեալ հատւածը, որ գտնում ենք էնգելսի 1875 թւի մարտի 18—28-ին Բէրէլին գրած նամակում : Փակագծի մէջ նիշներ, որ այդ նամակը որքան մեզ յայտնի է, առաջին անգամ տպագրել է Բէրէլը իր մեմուրարների երկրորդ հատորում («Իմ կեանքից») որը լոյս է տեսել 1911 թւին, այսինքն այդ նամակը գրւելուց եւ լուղարկուելուց 36 տարի անց :

Քննադատելով հէնց նոյն Գոթեան ծրագրի նախագիծը, որը քննադատել է եւ Մարքսը Բրակէին գրած

Հոչակաւոր նամակում՝ էնդելսը յատկապէս պետութեան խնդրին դառնալով գրում էր Բէրէլին հետեւեալը:

Ազատ ժողովրդական պետութիւնը դարձաւ ազատ պետութիւն։ Բայ այդ խօսքերի քերականական իմաստի ազատ է իր քաղաքացիների նկատմամբ, այսինքն բոնակալական կառավարութիւն ունեցող պետութիւնը։ Պէտք էր թողնել այդ ողջ գատարկաբանութիւնը, մանաւանդ Կոմմունից յետոյ, որը արդէն խսկական իմաստով պետութիւն չէր։ «Ժողովրդական պետութեամբ» անարիխստները աւելի քան բաւականաչափ մեր աչքն են ծակել, թէեւ արդէն Մարքսի գրւածքը Պրուդոնի դէմ եւ ապա «կոմմունիստական» Մանիֆեստը» ուղղակի ասում են, որ սոցիալիստական հասարակարգը մտցնելուց յետոյ պետութիւնն ինքն իրան (sich auflost) լուծում է։ Քանի որ պետութիւնը լոկ անցողական մի հաստատութիւն է, որից պրոյետարիատն ստիպւած է օգտևել պայքարի, յեղափոխութեան ընթացքում իր հակառակորդներին բոնութեամբ ճնշելու համար՝ ուստի ազատ ժողովրդական պետութեան մասին խօսելը զուտ անմտութիւն է։ Քանի որ պրոյետարիատը դեռ կարիք ունի պետութեան, նա այդ կարիքն զում է ոչ թէ ազատութեան համար, այլ իր հակառակորդներին ճնշելու համար, իսկ եթիւ ազատութեան մասին խօսելը հնարաւոր է դառնում, այն ժամանակ պետութիւնն իրեւ այդպիսին դադարում է գոյութիւն ունենալուց։ Ուստի մենք կառաջարկէինք ամեն տեղ պետութիւն խօսքի տեղ դնել՝ «Համայնք» (Gemeinwesen) գեղեցիկ, հին գերմանական մի խօսք, որ համապատասխան է

Փրանսիական կոմմուն բառին։ (գերմ. բնագրի 322 էր.)

Պէտք է աչքի առաջ ունենալ, որ այս նամակը վերաբերում է կուսակցական այն ծրագրին, որը Մարքսը քննադատում էր այս նամակից միայն մի քանի շաբաթ յետոյ զլած իր նամակում (Մարքսի նամակը — 1875 թւի մայիս 5) եւ որ էնդելսը այն պահին Մարքսի հետ միասին էր ապրում Լոնդոնում։ Ուստի վերջին Փրազում «մենք» ասելով էնդելսն անտարակոյս իր եւ Մարքսի անունից է որ առաջարկում է գերմանական բանտորական կուսակցութեան առաջնորդին դուրս գցել ծրագրից «պետութիւն» բառն ու փոխարինել այն «Համայնք» բառով։

Որպիսի վայնասուն պիտի բարձրացնէին «անարիխիզմի»։ մասին օպպորտիւնիզմին յարմաքեցրած «մարքսիզմի» այժմեան կեղծարար դիմաւորները, եթէ նրանց առաջարկւէր մի այդպիսի ուղղում մտցնել ծրագրում։

Թող ոռնան։ Այդ բանի համար բուրժուազիան նրանց կը գովէ։ Իսկ մենք մեր գործին կը նայենք։ Մեր կուսակցութիւնը յութեան ծրագրը վերաբննելիս Մարքսի եւ էնդելսի խորհուրդը պէտք է ի նկատի առնել, որ սկսզի ճշմարտութեան աւելի մօտ լինենք, որպէսզի աղջատումներից ազատելով վերականգնենք մարքսիզմը, որպէսզի աւելի ուղիղ գծով առաջ տանենք բանուր գասակարգի պայքարը յանուն իր ազատման։ Բոլչեւիկների մէջ հաւանօրէն Մարքսի եւ էնդելսի խորհրդի հակառակորդ չի գրանցել։ Տերմինի հարցն է միայն որ թերեւս որոշ գժւարութիւն առաջանչ։

Գերմաներէն երկու բառ կայ «Համայնք» նշանակութեամբ, էնդելսն այդ երկու բառից ընտրել է այն, որը նշանակում է ոչ թէ առանձին համայնք, այլ համայնքների գումար, համայնքների սեստեմ։ Ռուսերէն

այդպիսի բառ չկայ եւ դուցէ հարկ լինի վերցնել ֆրանսերէն «կոմմուն» բառը, թէ եւ դա եւս իր անյարմարութիւնն ունի:

«Կոմմունը բուն իմաստով պետութիւն չէր» ահա էնգելսի կարեւորագոյն տեսական պնդումը: Վերն ասածներից յետոյ այս պնդումը միանդամայն հասկանալի է: Կոմմունը պետութիւն լինելուց դադարում էր որ չափով որ նա հարկագրւած էր ճնշել ոչ թէ բնակչութեան մեծամասնութիւնն, այլ լոկ փոքրամասնութիւնը (հարստահարիչներին): Բուրժուական պետական մեքենան նա փշեց: Ճնշման յատուկ ոյժի փոխարէն հանդէս էր դալիս ինքը բնակչութիւնը: Այդ բոլորը — չեղումներ են պետութիւնից բառի բուն իմաստով: Եւ եթէ կոմմունը ամրապնդէր՝ նրա մէջ իրենք իրենց «կըմահանային» պետութեան հետքերը և հարկ չէր լինի որ նա «վերացնէ» պետութեան հաստատութիւնները: Այդ հաստատութիւններն իրենք իրենց կըդադարէին գործելուց, քանի որ անելու բան չին ունենայ:

«Անարխիստները «ժողովրդական պետութեամբ» մեր աչքը ծակում են»: Այս ասելիս ինգելսն ամենից առաջ աչքի առաջ ունի Բակունինին եւ նրա յարձակումները գերմանական սոցիալ-դեմոկրատների վրայ: Էնգելսն այդ յարձակումներն ուղիղ է համարում այն չափով, որ չափով որ ժողովրդական պետութիւնը նոյնքան անիմաստ եւ սոցիալիզմից չեղւող մի բան է, որքան եւ «ազատ ժողովրդական պետութիւնը»: Էնգելսը աշխատում է շտկել գերմանական սոցիալ-դեմոկրատների պայքարը անարխիստների դէմ, այդ պայքարը ուղիղ սկզբունքի վրայ դնել, ազատ պայքարը «պետութեան» վերաբերեալ օպպորտիւնիստական նախարարական բումներից: Աւա՞զ: Էնգելսի նամակը 36 տարի փակւած

մնաց: Ներքեւում մենք կըտեսնենք որ այդ նամակի հըրատարակութիւնից յետոյ եւս կառցէին յամառ կերպով կրկնում է իրապէս նոյն սխալները, որոնցից նախազգուշացնում էր ինգելսը:

Բէրէլը պատասխանել է ինգելսին 1875 թ. սեպտ. 21 ին զրած իր նամակով, ուր ի միջի այլոց ասում է թէ ինքը «միանդամայն համաձայն է» ինգելսի ծրագրի նախագծին վերաբերող դատողութեանը եւ որ ինքը նախատել է Լիրկնեխտին սրա զիջողականութեան համար (Բէրէլի մեծուարների գերմ. հրատ. II հ. եր. 304):

Բայց եթէ վեր առնենք Բէրէլի «Մեր նպատակները» բրոշիւրը կըտեսնենք որ այդտեղ նա բոլորովին սխալ դատողութիւններ է տալիս պետութեան մասին. «Պետութիւնը պէտք է դասակարգային տիրապետութեան վրայ հիմնած պետութիւնից ժողովրդական պետութիւն դարձնել («Unsere Ziele» 1886 եր. 14):

Այդպէս է տպւած Բէրէլի բրոշիւրի 9րդ (իններո՞րդ) հրատարակութեան մէջ: Զարմանալի չէ որ պետութեան վերաբերեալ այդ յամառ կրկնուղ օպպորտիւնիստական դատողութիւնը ներս է ծծել գերմանական սոցիալ-դեմոկրատիան, մանաւանդ որ ինգելսի բացատրութիւնները ծալած ու պահւած էին մնում, իսկ ողջ կենսական միջավայրը յեղափոխութիւնից «յետ էր սովորեցնում»:

4. Էրֆարբենդ ծրագրի նախագծի հնադատաւրինք:

Երբ քննութեան է առնուում մարքսիզմի ուսմունքը պետութեան մասին՝ չի կարելի անուշադիր թողնել իր-Փուրտեան ծրագրի նախագծի այն քննադատութիւնը, որ ինգելսը 1891 թւի յունիս 29 ին ուղարկել է Կառցէկուն, բայց որը լոյս է ընծայւել «Neue Zeitung» միմիայն դըրանից տասը տարի յետոյ: Զի կարելի անուշադիր թողնել այդ նրա համար, որ նա սոցիալ գերմոկրատիայի

Հէնց պետական շինարարութեան խնդրին վերաբերող
օպպորտիւնիստական հայեացքների քննադատութեան է
նւիրւած:

Թռուցիկ կերպով կարելի է նիշել եւ այն, որ էկոնո-
միայի խնդրի վերաբերմամբ եւս էնդելսը տալիս է մի
վերին աստիճան գնահատելի ցուցմունք, որը ցոյց է տա-
լիս, թէ որքան ուշադիր եւ խոհուն կերպով է հետեւելիս
եղել նա հէնց նորագոյն կապիտալիզմի ձեւափոխումնե-
րին եւ դրա համար ինչպէս կարողացել է որոշ չափով
նախագուշակել մէր, իմպերիալիստական շրջանի խըն-
դիրները: Ահա այդ ցուցմունքը:

Կապիտալիզմը բնորոշելու համար ծրագրի նախա-
գծում գործածւած «ալանաչափութեան» բացակայու-
թեան (Planlosigkeit) դառձւածի առթիւ էնդելսը դը-
րում է.

«Եթէ մէնք ակցիոներական ընկերութիւններից
անցնում ենք թրըստներին, որոնք հպատակեցնում
են իրենց եւ մոնոպոլիզացիայի են ենթարկում ար-
դիւնաբերութեան ամբողջ ճիւղեր, ահա այստեղ
վերանում է ոչ միայն մասնաւոր արտադրութիւնը,
այլ եւ պլանաչափութեան բացակայութիւնը». (Neue Zeit, 20 տարի, հատ. I, 1901—2 էր. 8):

Այստեղ նորագոյն կապիտալիզմի, այսինքն իմպե-
րիալիզմի տեսական գնահատութեան հիմնական գիծն է
վերցրւած, այսինքն այն, որ կապիտալիզմը դառնում է
մոնոպոլիստական կապիտալիզմ: Վերջին բառը հար-
կադրւած ենք ընդգծել, որովհետեւ ամենատարածւած
սիալը այն բուրժուական – ուժորմիստական պնդումն
է, որ իր թէ մոնոպոլիստական կամ պետական մոնո-
պոլիստական կապիտալիզմն արդէն կապիտալիզմ չէ,
արդէն կարող է «պետական սոցիալիզմ» անւանել եւ

այլն: Կատարեալ պլանաչափութիւն թրըստներն իհարկէ
չեն տւել, մինչեւ այժմ չեն տալիս եւ չեն կարող տալ:
Բայց, որ չափով որ նրանք տալիս են պլանաչափու-
թիւն, որ չափով որ կապիտալի մագնատները ազգային
կամ միջազգային մասշտաբով հաշւի են առնում ար-
տադրութեան քանակը, որ չափով որ կանոնաւորում են
այն պլանաչափ ձեւով, այնչափ մենք դեռեւս կապիտա-
լիզմի շրջանում թէպէտև նրա նոր բայց այնուա-
մենայնիւ կապիտալիզմի շրջանում ենք գտնուում: Այն
բանը որ այդ կապիտալիզմը «մօտիկ» է սոցիալիզմին
պրոլետարիատի իսկական ներկայացուցիչների համար
ապացոյց պիտի ծառայէ սոցիալիստական յեղափոխու-
թեան մօտիկութեան, հեշտութեան, իրագործելիու-
թեան, անյետաձգելիութեան եւ ոչ թէ ապացոյց որ
պէտք է համբերատար վերաբերել այդ յեղափոխու-
թեան ժխտմանը եւ կապիտալիզմի գունազարդելուն,
որով զբաղւում են բոլոր ուժորմիստները:

Բայց դառնանք պիտութեանն խնդրին:

Էնդելսը երեք տեսակ առանձնապէս գնահատելի
ցուցմունքներ է տալիս. — նախ՝ հանրապետութեան
խնդրի մասին, երկրորդ՝ պետութեան կազմակերպման և
ազգային ինդրի միջնեւ եղած կապի մասին եւ երրորդ՝
տեղական ինքնավարութեան մասին:

Ինչ վերաբերում է հանրապետութեան՝ էնդելսն այդ
դարձրել է էրֆուրտեան ծրագրի իր քննադատութեան
ծանրութեան կենարոնը: Խսկ եթէ մէնք մտարերենք թէ
ինչ նշանակութիւն ունի էրֆուրտեան ծրագիրը ո՞ջ մի-
ջազգային սոցիալ – դեմոկրատիայի մէջ, թէ ինչպէս
նա օրինակ է դարձել ողջ երկրորդ ինտերնացիոնալի
համար, ապա առանց չափազանցութեան հասնելու կա-

րող ենք ասել, ինդելսն այստեղ ողջ երկրորդ ինտերնացիոնալի օպպորտիւնիզմն է քննադատում:

«Նախագծի քաղաքական պահանջների մէջ մեծ թերութիւն կայ: Այդտեղ չըկայ այն (նոտրգիրը ինդելսինն է) ինչ որ իրապէս ոկտաք էր ասել»:

Եւ ապա բացատրում է, որ գերմանական սահմանադրութիւնը իրօք 1850 թւականի ամենառէակցիոն սահմանադրութեան պատճէնն է, որ ոայխստագը, ինչպէս Վելչէլմ Լիբլինեխտն է ասել, արարիւտիզմի թզենուտերեւն է եւ որ հիմք ունենալ այն սահմանադրութիւնը, որ օրինակական է գարձնում բոլոր մանր պետութիւններն ու գերմանական մանր պետութիւնների դաշնակցութիւնը, կամենալ իրազործել «աշխատանքի բոլոր գործիքների ընդհանրութեան սեփականութիւն դարձնելը»— «ակնրախ անմտութիւն է»:

«Այդ թեման չօշափելը վտանգաւոր բան է»— աւելացնում է ինդելսը լաւ լիմանալով որ Գերմանիայում ծրագրում լեգալ կերպով դնել հանրապետութեան պահանջը չի կարելի: Բայց ինդելսը պարզէ ի սլարդ չի հաշտում այդ ակնյայտ նկատումի հետ, որով «բոլորը» բաւականանում են: Ինդելսը շարունակում է. «բայց այնուամենայնիւ գործը պէտք է առաջ տանել: Թէ որ աստիճան դա անհրաժեշտ է, ցոյց է տալիս այն օպպորտիւնիզմը, որ հէնց այժմ ծաւալում է (eireissende) սոցիալ — գերմանական մամուլի խոշորագոյն մասի էջերում: Վախենալով որ կը վերականգնել սոցիալիստների դէմուլցած օրէնքը կամ մտարեկելով այդ օրէնքի ափբազետութեան ժամանակարւածվաղաժամ յայտարարութիւնները՝ այժմ ուղում են, որ կուսակցութիւնը Գերմանիայի այժմէան օրինակարգը

բաւարար ընդունէ իր բոլոր պահանջները խաղաղ միջնով իրագործելու համար»...

Այն, որ գերմանական սոցիալ-գեմոկրատները բացառիկ օրէնքի վերականգնումից վախենալով էին գործում, այդ հիմնական փաստն ինդելսը առաջ է քաշում եւ առանց տատանւելու դա օպպորտիւնիզմ է անւանում եւ հէնց Գերմանիայում հանրապետութեան եւ ազատութեան բացակայութիւնն աչքի առաջ ունենալով յայտարարում է, որ բոլորովին անմիտ են «խաղաղ» ճանապարհով գործելու երազները: Ինդելսը հարկ եղածին չափ զգոյշ է եւ իրան չի կաշկանգում: Նա ընդունում է, որ այն երկիրներում ուր հանրապետութիւն կայ կամ լայն ազատութիւն «կարելի է պատկերացնել» (միայն «պատկերացընել») խաղաղ զարդացում դէպի սոցիալիզմը, բայց Գերմանիայում կրկնում է նա՝

...«Գերմանիայում, ուր կառավարութիւնը գըեթէ ամենակարող է, իսկ ոայխստագն ու բոլոր միւս ներկայացուցչական հաստատութիւնները իրական իշխանութիւնից զուրկ են, յայտարարել մի այդպիսի բան Գերմանիայում եւ այն առանց կարիքի, կ'նշանակէ արսովիւտիզմի վրայից պոկել թզենուտ տերեւը եւ անձամբ ծածկել նրա մերկութիւնը»...

Եւ իրօք գերմանական սոցիալ-գեմոկրատիայի պաշտօնական առաջնորդներն ահազին մնեամասնութեամբ աբսոլիւտիզմի մերկութիւնը ծածկողներ հանդիսացան, սոցիալ-գեմոկրատիայի այն առաջնորդները որոնք ծալեցին ու պահեցին «մահուդի տակ» ինդելսի այս ցուցմունքները:

... «Նման քաղաքականութիւնը վերջ ի վերջոյ կարող է լոկ սիալ հանապարհի վրայ գնել կուսակցութիւնը: Առաջ են բաշում ընդհանուր, աբստրական քաղաքական խնդիրները եւ այդ ձեւով ծածկում են

մերձաւոր, կոնկրետ խնդիրները, որոնք առաջին իսկ խոչոր անցքի, առաջին իսկ քաղաքական կրիպտոի միջոցին իրենք-իրենց օրւայ հերթական խնդիրներ են դառնում: Դրանից ի՞նչ կարող է գուրս գալ եթէ ոչ այն, որ յանկարծ վճռական բոպէին կուսակցութիւնն անօդնական պիտի լինի, որովհետեւ վճռական խնդիրներում նրա շարքերում անորոշութիւն ու անմիաբանութիւն է տիրում, որովհետեւ այդ խնդիրները երբէք քննութեան չեն ենթարկւել...

«Մէծ, հիմնական նկատումների այդ մոռացումը, յանուն օրւայ բոպէական շահերի, այդ բոպէական յաջողութիւնների յետեւից ընկնելն ու նրանց համար պայքար մղելը առանց դրանց գալիք հետեւանքերի մասին մտածելու, այդ գալիք շարժումը ներկային զոհաբերելը դուցէ եւ «աղնիւ» դրդումներից է բղիսում: Բայց դա օպպորտիւնիզմ է եւ օպպորտիւնիզմ էլ կը մնայ, իսկ «աղնիւ» օպպորտիւնիզմը թերեւս աւելի վտանգաւոր է քան միւսները...

«Եթէ կայ մի բան որ ամէն կասկածից դուրս է, այդ այն է, որ մեր կուսակցութիւնն ու բանւոր դասակարգը իշխանութիւն կարող են ձեռք բերել միմիայն այնպիսի քաղաքական մի ձեւում, որպիսին դիմոկրատիկ հանրապետութիւնն է: Այդ վերջինն, ինչպէս արդէն ցոյց է տւել Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը, սպեցիֆիկ ձեւ է պրոլետարիատի դիկտատորայի համար»...

Սյստեղ ինդելան առանձնապէս ցայտուն կերպով է կրկնում այն հիմնական գաղափարը, որը կարմիր գծի նման անցնում է Մարքսի բոլոր երկերում, այսինքն այն, որ դիմոկրատիկ հանրապետութիւնը ամենից շատ է մերձեցնում մեզ պրոլետարիատի դիկտատորային: Որովհետեւ այլպիսի հանրապետութիւնը բնաւ չվերացնելով

կապիտալի իշխանութիւնը, հետեւապէս եւ մասսաների ճնշումն ու գասակարգային պայքարը, անխուսափելի կերպով տանում է դէպի այդ պայքարի այնպիսի ընդարձակում, ծաւալում եւ սրացում, որ եթէ արդէն հնարաւորութիւն է առաջ դալիս բաւարարելու ճնշած մասսաների հիմնական շահերը, ապա այդ հնարաւորութիւնն անխուսափելի կերպով եւ միմիայն պրոլետարիատի դիկտատուրայի մէջ է ֆրականանում, երբ մասսաների դեկալիա պրոլետարիատն է հանդիսանում: Ողջ երկրորդ կավարը պրոլետարիատն է հանդիսանում: Ողջ երկրորդ ինտերնացիոնալի համար որանք եւս մարքսիզմի «մոռացուած խօսքեր» են եւ այդ մոռացումը շատ վառ կերպուած լիուդնութեց մենչեւիկների կուսակցութեան պատմուպով դրսեւորեց մենչեւիկների կուսակցութեան պատմութիւնը 1917 թւի ոռուսական յեղափոխութեան առաջին կիսմեակի ընթացքում: Բնակչութեան ազգային կազմի հետ կախուած ֆեդերատիվ հանրապետութեան ինդրի մասին ինդելալը գրում էր՝

...«Ի՞նչ պիտի գրի ի մոխարէն այժմեան Գերմանիայի» (նրա ոչակցիոն միապետական սահմանադրութեամբ եւ նոյնքան ոչակցիոն բաժանումով մանր պետութիւնների, մի բաժանումով, որը յաւերժացնում է «պրուսականութեան» առանձնայատկութիւնները փոխանակ այն մի ամբողջութիւն կազմող Գերմանիայի մէջ ձուլելու): «Բայ իս անբաժան հանրապետութեան ձեւն է միայն որ կարող է գործադրել պրոլետարիատը: Ֆեդերետիվ հանրապետութիւնը դեռ այժմս էլ ընդհանուր առմամբ անհրաժեշտութիւն է ներկայացնում Միացեալ Նահանգների հակայական տերրիտորիայի վրայ, թէեւ արեւելքում նա արդէն արգելը է հանդիսանում: Ֆեդերատիվ հանրապետութիւնը առաջդիմութեան մի գերատիւ հանրապետութիւնը առաջդիմութեան մի քայլ կը լինէր Անդիմայում, ուր երկու հղող վրայ չորս ազգ է ապրում եւ չընայած որ պարլամենտը

մի է՝ իրար կողքի գոյութիւն ունեն օրէնսդրական երեք սխտեմ։ Նա (Փեղեր, Հանրապետ.) վազուց արդէն արդելք է դարձել փոքրիկ Զւիցարիայում եւ եթէ դեռ եւս կարելի է տանել այնտեղ Փեղերատիւ Հանրապետութեան գոյութիւնը — միմիայն նրա համար, որ Զւիցարիան եւրոպական պետական սխտեմի մէջ գուտ պասսիւ անդամի գերով է բաւականանում։ Գերմանիայի համար նրա Փեղերալիստական զւիցարացումը յետադիմութեան մի խոշոր քայլ կը լինէր։

«Երկու կէտ կայ, որ զանազանում է զաշնակցական պետութիւնը միտնգամայն մի պետութիւնից — դա այն է, որ նախ՝ զաշնակցութեան մէջ մտնող պետութիւններից ամեն մէկն իր յատուկ քաղաքացիական եւ քրէական օրէնսդրութիւնն ունի, իր յատուկ գատարանական կազմը եւ ապա այն՝ որ, ժողովրդական ներկայացուցչութեան պալատի կողքին զոյտութիւն ունի պետութիւնների ներկայացուցչութեան պալատը եւ այդտեղ ամեն մի կանան ձայն է տալիս իրեւ այդպիսին, անկախ այն բանից փոքր է այդ կանոննը թէ մեծ։ Գերմանիայում զաշնակցական պետութիւնը փոխանցում է դէպի միանդամայն մի, պետութիւնը եւ 1866 ու 1870 թւականների «ի վերուստ կատարւած յեղափոխութիւնը» ոչ թէ պէտք է յետ դարձել այլ լրացնել «յեղափոխութեամբ ի ներքուստ»։

Էնդելը պետութեան ձեւի խնդրի նկատմամբ ոչ մի այն անտարերութիւն չի արտայայտում, այլ ընդհակառակը՝ ջանում է առանձնապէս մանրազնին անալիզի ենթարկել հէնց փոխանցիկ ձեւերը, որպէսզի ամեն մի առանձին դէպի կոնկրետ պատմական յատկութիւնն աշ-

քի առաջ ունենալով հաշւի առնի թէ ինչից դէպի ինչն է տանում տւեալ փոխանցիկ ձեւը։

Էնդելը ինչպէս եւ Մարքսը պրոլետարիատի եւ պրոլետարական յեղափոխութեան տեսակէտից պաշտպան է կանդնում դեմոկրատիկ ցենտրալիզմին (կենտրոնականութեան), մի՛ եւ անրաժան հանրապետութեան։

Ենդերատիւ հանրապետութիւնը նա քննում է կամ իրը բացառութիւն ու արգելք զարգացման համար կամ իրը փոխանցում («պէրէխուս») միապետութիւնից դէպի ցենտրալիստական հանրապետութիւնը, իրեւ «մի քայլ դէպի առաջ» որոշ յատուկ պայմաններում։ Եւ այդ յատուկ պայմանների շարքում առաջ է բերում ազգային խնդիրը։

Ոչ էնդելը, ոչ էլ Մարքսը՝ չընայած այն անխնայ քննադատութեան, որին ենթարկում են նրանք մանր պետութիւնների ու կակցիոնութիւնը եւ այդ ու կակցիոնութեան քողարկումը ազգային խնդրով որոշ կոնկրետ դէպի քերում, ոչ մի տեղ եւ երրէք ազգային խնդիրն իրենց զլիսից ուագ անելու ձգտման ստեհր անդամ ցոյց չեն տըւել, ձգտման, որով միզանչում են յաճախ հոլլանդական եւ լէհական մարքսիստները, որոնք ելակէտ ունեն ամենաօրինական պայքարը ընդդէմ «փենց» փոքրիկ պետութիւնների քաղքենիօրէն-նեղ նացիոնալիզմի։

Անդամ Անգլիայում, ուր թւում էր, ե՛ւ աշխարհագըրական պայմանները, ե՛ւ լեզւի ընդհանրութիւնը, ե՛ւ յատհարիւրամեակների պատմութիւնը «վերջ են դրել» Անգլիայի առանձին մանր հատւածների ազգային խնդրին, ոնցինիւ այստեղ էնդելը հաշւի է առնում այն պարզ փասուը, որ ազգային խնդրը գեռ եւս ապրած-անցած չէ եւ դրա համար Փեղերատիւ հանրապետութիւնը «յառաջադիմութեան մի քայլ» է համարում։ Հասկանալի է որ այստեղ Փեղերատիւ հանրապետութեան քննադատութիւ-

նից եւ ցենտրալիստական-դեմոկրատիկ հանրապետութեան ամենալճական սրոպազանդից հրաժարվելու ստերն անդամ չկայ:

Բայց գեմոկրատիկ ցենտրալիզմն էնդելսը բնաւ այն բիւրոկրատիկ իմաստով չի ըմբռնում, որպիսի իմաստով դործածում են այդ հասկացողութիւնը մանր-բուրժուական իդէոլոգներն ու դրանց թւում անարխիստները: Ցենտրալիզմն ըստ էնդելսի չի բացասում այնպիսի լայն ինքնավարութիւն, որը «կոմմունների» եւ շրջանների կողմից պետութեան միութիւնը պաշտպանելու հետ միասին վերացնում է ամեն տեսակի բիւրոկրատիզմն ու ի վերուստ «հրամանատութիւնը»:

«Աւրեմն — մի, հանրապետութիւն» — պրում է էնդելսը, զարգացնելով մարքուզմի հայեացքները պետութեան մասին, «բայց ոչ թէ այժմեան ֆրանսիական հանրապետութեան իմաստով, ֆրանսիական հանրապետութեան, որն իրենից ներկայացնում է ոչ աւել մի լան, քան 1798 թւին հիմնւած մի կայսրութիւն (իմպերիա) առանց կայսեր (իմպերատորի): 1792 թւից մինչև 1798 թւին ամեն մի ֆրանսիական գեպարտամենդ, ամեն մի համայնք (Gemeinde) լիակատար ինքնավարութիւն էր վայելում ըստ ամերիկեան օրինակի և այդ պէտք է ունենանք և մենք: Թէ ինչպէս պէտք է կազմակերպել ինքնավարութիւնը եւ ինչ կերպ կարելի է եօլա զնալ առանց բիւրոկրատիայի — այդ ցոյց են տել մեզ եւ ապացուցանել են Ամերիկան եւ ֆրանսիական առաջին հանրապետութիւնը եւ այժմ էլ զեռ ցոյց են տալիս Կանադան, Աւստրալիան եւ միւս անդիմական կոլոնիաները: Եւ այդ ձեւի զաւառական (շրջանային) եւ համայնական ինքնավարութիւնն աւելի աղատ մի հաստատութիւն է, քան օրինակի համար, դիցարական ֆեդերալիզ-

մը, ուր ճիշտ է՝ կանոննը շատ անկախ է բունդի (այսինքն ամբողջ ֆեդերատիւ պետութիւն) նկատմամբ, բայց անկախ է նաև գաւառի (բեցիրկի) նըկատմամբ եւ համայնքի նկատմամբ: Կանտոնական կառավարութիւնները նշանակում են գաւառապետներ (շտատհալտերներ) եւ պրեֆեկտներ — մի բան, որ բնաւ զոյւթիւն չունի անդիմական լեզով խօսող երկրներում եւ որը մենք մեզ մօտ նոյնպէս վճռական կերպով պիտի վերացնենք, ինչպէս եւ պրուսական լանդգրաններին ու սեգիբունդուրատներին» (կոմիւսարներին, գաւառապետներին, նահանգապետներին, առհասարակ՝ վերեւից նշանակուած չինովնիկներին): ինդելսն առաջարկում է այդ բանին համապատասխան՝ ծրագրի ինքնավարութեան վերաբերուղ կէտը ձեւակերպել հետեւեալ կերպով: «Իմաստար ինքնավարութիւն—շրջանում (նահանգում, երկրամասում) գաւառում եւ համայնքում ընդհանուր ձայնութեամբ ընտրւած չինովնիկների միջոցով, վերացում բոլոր ակզական-շրջանային իշխանութիւնների, որոնք պետութիւնից են նշանակած»:

Կերենսկու եւ միւս «սոցիալիստ» մինիստրների ձեռքով փակւած «Պրաւգա» («ձշմարտութիւն») թերթում (1917թ. Մայիսի 28-ին թիւ 68) ես արգէն առիթ եմ ունեցել մատնանիշ անելու թէ ինչպէս այդ կէտում — եւ իհարկէ ոչ միմիայն այդ կէտում — մեր իրը թէ յեղափոխական գեմոկրատիայի, իրը թէ սոցիալիստ ներկայացուցիչները գեմոկրատիզմից աղաղակող շեղումներ էին կատարում:

Եւ պարզ է որ այն մարդիկ, որ «կոաւեցիայով» իրենց կապել էին իմպերիալիստական բուրժուազիայի հետ պիտի խուլ մնային այդ ցուցմունքների նկատմամբ:

Շատ կարեւոր է նիշել, որ ինդելսը, փաստերը ձեռին, ամենաճշղրիտ օրինակով հերքում է այն չափից դուրս տարածւած (մանաւանդ մանր բուրժուական գետնկրատիայի մէջ) նախապաշարմունքը, որ իր թէ ֆեղերատիւ հանրապետութիւնը աւելի ազատ է քան ցենտրալիստականը: Դա սխալ է: Այն փաստերը, որ առաջ է բերում ինդելսը 1792—1798 թւականների ցենտրալիստական Ֆրանսիական եւ ֆեղերալիստական Զւցարական հանրապետութեան վերաբերմամբ՝ հերքում են այդ նախապաշարմունքը: Իսկապէս զեմոնկրատիկ-ցենտրալիստական (կենտրոնացած) հանրապետութիւնն աւելի է ազատութիւն տուել, քան ֆեղերալիստականը (դաշնակցականը): Կամ այլ խօսքով՝ ամենալայն տեղական, շրջանային, եւ այլն ազատութիւնը որ տրւել է երբեւիցէ պատմութեան մէջ՝ տուել է ցենտրալիստական, ոչ թէ ֆեղերալիստական հանրապետութիւնը:

Այս փաստի վրայ ինչպէս եւ առհասարակ ֆեղերատիւ եւ ցենտրալիստական հանրապետութեան եւ տեղական ինքնավարութեան ինդրի վրայ մեր կուսակցական պրոպագանդի եւ աղիստացիայի ժամանակ բաւականաչափ ուշադրութիւն չի դարձել եւ չի դարձւում:

5.— Մարքսի «Քաղաքացիական պայքարը Ֆրանսիայում» գրքի
1891 թւականի հրատարակութեան առաջարանը:

1891 թ. Մարտի 18 թւակիր առաջարանում, որ գըրած է եղել «Քաղաքացիական պայքարը Ֆրանսիայում» գրքի Յ. Յ. Հրատարակութեան համար, բայց նախ լոյս է տեսել «Neue Zeit» (Նոր Ժամանակ) ամսագրում՝ ինդելսը պետութեան վերաբերմամբ բռնելիք դիրքի խնդրի հապւած մի շարք ինդիրների նկատմամբ հետաքրքրական թոռուցիկ դիտողութիւնների հետ միասին:

տալիս է նաև կոմմունի տւած զասերիմիվերին աստիճան ցայտուն ամփոփում: Այդ ամփոփումը՝ խորացած հեղինակին կոմմունի օրերից բաժանող քսանամեայ շրջանի վերաբիշ չնորհիւ, ուղղւած է յատկապէս պետութեան վերաբերմամբ Գերմանիայում տարածւած «Անհաճաւատութեան» դէմ եւ իրաւամբ կարող է համարւել մարքսիզմի վերջին խօսքը մեր քննութեան ենթակայ խնդրի նկատմամբ:

Ինդելսը նկատում է որ Ֆրանսիայում ամեն մի յեղափոխութիւնից յետոյ բանուղները զինւած էին յինում: «Որա համար պետութեան զեկի մօտ կանգնած բուրժուաների առաջին պատղամն էր, զինաթափ անել բանուղներին: Եւ այստեղից է, որ բանուղների ձեռքով նւաճած ամեն մի յեղափոխութիւնից յետոյ ծագում էր նոր պայքարը, որի վերջում բանուղները յաղթում էին»...

Նոյնքան կարճարութեան եւ նոյնքան արտայայտիչ է բուրժուաների յեղափոխութիւնների փորձի հաշեյարդարը: Բանի էութիւնը, — ի միջին այլոց եւ պետութեան խնդրի նկատմամբ — (արգեօք զէնք ունի՞ ճնշւած դասակարգը) — ըմբռնւած է այսեղ հրաշալի կերպով:

Ահա Հէնց այդ էութիւնն է որ ամենից յաճախ են լըսութեան մատնում թէ պրոֆեսուրները, որ բուրժուական իդէոլոգիայի աղղեցութեան տակ են գտնուում, թէ մանր-բուրժուական զեմոնկրատները: 1917 թւականի ոռւսական յեղափոխութեան մէջ «մենչեւիկ», «Եւս մարքսիստ» Ծերեթելիին բուրժուական յեղափոխութիւնների այդ զաղանիքը գուրս տալու պատիւն ընկաւ (Կաւենեալի՛ պատիւ): Իր Յունիսի 9-ին արտասանած պատմական գիրքը՝ Պիտեր Ֆիտերի (Պիտերբուրգի) բանգիան վճռական պիտի լինի Պիտերի (Պիտերբուրգի) բանուղներին զինաթափ անելու գործում եւ այդ վճիռը նա

իր վճով եւ առհասարակ «պետական» անհրաժեշտութեան տեղ էր ծախում :

Ծերեթելիի Յունիսի 9-ին արտասանած պատմական ժառը 1917 թւի յեղափոխութեան ամեն մի պատմագրի համար ամենաբացայաց մի իլլիւսորացիա պիտի ծառայի այն բանի թէ ինչպէս Ծերեթելիի առաջնորդած էսէրների եւ մենչեւիկների պլոկը անցաւ պուրժուազիայի կողմը բնդում յեղափոխական պրոլետարիատի:

Էնդեւսի միւս անցողակի նկատողութիւնը, որ նոյնպէս կապ ունի պետութեան խնդրի հետ, կրօնին է վերաբերում :

Յայտնի է որ գերմանական սոցիալ-գեմոկրատիան քանի գնում ներւում էր եւ գառնալով աւելի ու աւելի օպպորտիւնիստական՝ ինում էր դէպի «կրօնը մասնաւոր գործ յայտարարելու» հոչակաւոր Փորմուլի ֆիլիստերական ծուռ մեկնութիւնը :

Այսինքն՝ այդ Փորմուլը մեկնարանւում էր այնպէս, որ գուրս էր գալիս թէ յեղափոխական պրոլետարիատի կուսակցութեան համար եւս կրօնը մասնաւոր գործ է : Ահա, պրոլետարիատի յեղափոխական ծրագրին կատարեալ գաւաճանելու դէմ էր, որ ծառացաւ ու բողոքեց Էնդեւսը, որը 1891 թւին դիտում էր իր կուսակցութեան շարքերում օպպորտիւնիզմի ամենաթոյլ ծիլերը եւ որն այդ պատճառով շատ զգոյշ էր արտայայտուում :

«Քանի որ Կոմմունի-մէջ նստած էին բացառապէս բանւորներ կամ բանւորական ճանաչւած ներկայիչներ՝ նրա (Կոմմունի) բոլոր վճիռները լիովին պրոլետարական բնոյթ էին կրում : Այդ կոմմունը կամ գեկրետներ է արձակում այնպիսի ուժի գորմների մասին, որոնցից հանրապետական բուրժուազիան հրաժարւեց միմիայն իր ստոր վախկո-

տութեան պատճառով եւ որոնք բանւոր դասակարգ ազատ գործունէութեան անհրաժեշտ չիմքն են կազմում : Ահա այդպիսին՝ այն սկզբունքի իրականացումն է թէ՝ պետութեան վերաբերմամբ կը բոնը սոսկ մասնաւոր գործ է : Կամ թէ չէ Կոմմունը հրատարակում է այնպիսի գեկրետներ, որոնք ուղղակի բանւոր դասակարգի շահերի պահանջից էին բղուում եւ որոնք մասամբ խոր կերպով մտնում էին համարակութեան ճեղքածքի մէջ :

Էնդեւսը «պետութեան վերաբերմամբ» խօսքը դիտմամբ ընդգծել է ուղղելով իր հարւածը շեշտակի կերպով դէպի գերմանական օպպորտիւնիզմը, որ կրօնը անհատական գործ էր յայտարարում կուսակցութեան վերաբերմամբ եւ այդպիսով ցած էր իջեցնում յեղափոխական պրոլետարիատի կուսակցութիւնը, հաւասարեցնելով նրան գուեհիկ «ազատամիտ» քաղքենութեան, որը պատրաստ էր ընդունելու կրօնական ազատ կացութիւնը եւ հրաժարաւելու ժողովրդին յիմարացնող կրօնական ափիոնի դէմ կուսակցականօրէն պայքար մզելուց :

Գերմանական սոցիալ-գեմոկրատիայի ապագայ պատմագիրը, այդ կուսակցութեան 1914 թւականի անկման արմատները հետախուզելիս՝ հետաքրքրութեան արժան շատ առատ նիւթ պիտի գտնի սկսած կուսակցութեա իդէական առաջնորդ կառւցկու յօդւածներում գրւած ծուռ ու մուռ, օպպորտիւնիզմի առջեւ գոները լայն բաց անող յայտարարութիւններից մինչեւ կուսակցութեան վերաբերմունքը դէպի «Los-von-Kirche-Bewegung»—(եկեղեցուց անջատման ձգող շարժումը), 1913 թւին :

Սակայն առաջ անցնենք եւ տեսնենք թէ Էնդեւս ինչպէս էր Կոմմունից քսան տարի անց նոյն Կոմմունի

տւած դասերի հաշւեյարդար կատարում մարտնչող պերոլետարիատի համար :

Եւ ահա թէ այդ դասերից ոքն էր առաջ քաշում նա :

»Նախկին սոցիալիստական կառավարութեան ձնշիչ իշխանութիւնը՝ զօրքը, քաղաքական ոստիկանութիւնը, բիւրոկրիտիան, որ Նապոլէոնն ըստեղծեց 1798 թւին եւ որն այդ օրւանից սկսած ընդունել է ամեն կառավարութիւն իրեւ մի ցանկալի գործիք եւ օգտագործել է այդ գործիքն ընդդէմ իր հակառակորդների, հէնց այդ իշխանութիւնը պիտի տապալւէր Ֆրանսիայի բոլոր կողմերում, ինչպէս տապալւեց Պարիզում» :

«Կոմմունն սկզբից իսկ պիտի ընդունէր, որ բանուր դասակարգը տիրող դառնալով չի կարող այեւս տիրութիւն անել հին պետական մեքենայի օգնութեամբ, որ բանուր դասակարգը իր նոր ձեռք բերած տիրապետութիւնը նորից չկորցնելու համար պիտի մի կողմից վերացնի ձնշման ողջ հին մեքենան, որը մինչ այդ գործադրւել է իրա, բանւոր դասակարգի գէմ, իսկ միւս կողմից պիտի ապահովէ ինքնի իրեն իր սեփական ներկայացուցիչներից եւ չինովնիկներից յատարարելով որ նրանք բոլորը, առանց որեւէ խարութեան, ամեն բոպէ կարող են փոխարինել»...

Էնգելսը նորից ու նորից ընդգծում է, որ ոչ միայն ժիապետութեան ժամանակ, այլև դեմոկրատիկ հանրապետութեան ժամանակ պետութիւնը մնում է պետութիւն, այսինքն՝ պահպանում է իր յատկանիշը, այն է՝ պաշտօնատար անձանց, «հասարակութեան ծառաներին» նրա օրգաններին — նրա տէրերը դարձնելը :

Մինչ այժմ գոյութիւն ունեցած բոլոր պետութիւններում անխուսափելի է եղել այդ պետութեան օրգանների, հասարակութեան ծառաների — հասարակութեան տէրեր գառնալը եւ կոմմունը դըա դէմ գործածեց երկու անսխալ միջոց։ Նախ՝ նա թէմ գործածեց երկու անսխալ միջոց։ Նախ՝ նա թէ՛ թէ՛ վարչական, թէ՛ դատաստանական, թէ՛ բոլոր թէ՛ վարչական, թէ՛ դատութեան պաշտօնների համար ժողովրդական կրթութեան պաշտօնների համար նշանակում էր ընդհանուր ընտրական իրաւունքի հիմամբ ընտրւած անձանց եւ միաժամանակ իրաւունք տւեց ընտրողներին նրանց ուղած բոպէին յետ կոչել իրենց ընտրեալին։ Եւ երկրորդ՝ նա բոլոր թէ՛ կոչել իրենց ընտրեալին։ Միաժամանակ վճարում է բարձր, թէ՛ ստորին պաշտօններին նորից վարձը, որ բանւորներն էին ստանում։ Կոմմունի վճարած ամենաբարձր ոսճիկը վեց հազար ֆրանք էր*):

Այդպիսով յուսալի խոչնդուս ստեղծեց ընդդէմ կարիերիզմի եւ պաշտօնների ձգտման եւ այն՝ անկախ ներկայացուցչական հաստատութիւնների պետուտաններին տրող համայական մանդատներից, որ բացի այդ մտցրել էր կոմմունը։

Այսուեղ ինդեսը մօտենում է այն հետաքրքրական սահմանագին, ուր հետեւղական դեմոկրատիան մի սոցիալիզմ է սոցիալիզմ իսկ միւս կողմից պակողմից դառնում է սոցիալիզմ։ Որովհետեւ պետութիւնը ոչընհանջում է սոցիալիզմ։

*) Նոմինալ արժեքով գա հաւաար է՝ 2400 ր., իսկ այժմեան կուսում մօն 6000 ր.։ Միանգամայն աններելի բան անում են այն կուտեւիկները, որոնք առաջարկում են օրինակ բաղաբային խոր-բուրգներում 9000 ր. ոռինկ տալ փոխանակ առաջարկելու որ ողջ պետութեան մէջ մաքսիմումը լինի 6000 ր. — մի գումար, որ լին վին բաւարար է։

չամար պետական ծառայութեան Փունկցիաները պէտք է դառնան հսկողութեան եւ հաշվի այնպիսի հասարակ գործողութիւններ, որոնք մատչելի են ժողովրդի ահազին մեծամասնութեան իսկ ապա եւ բոլոր ժողովրդին։ Իսկ կարիերիզմի կատարեալ վերացման համար պահանջում է, որ «պատւաւոր» ու թէկուզ անշահաւէտ պետական պաշտօնը կամուրջ չըծառայէ դէպի բանկերի եւ ակցիոներական ընկերութիւնների շատ շահաւէտ պաշտօններն անցնելու համար, ինչպէս այդ տեղի է ունենում շարունակ ամենազատ կապիտալիստական երկրներում։

Բայց ինգելսը չի անում այն սխալը, որն անում են մարքսիստներից ոմանք ազգերի ինքնորոշման ինդրի նկատմամբ, ասելով որ կապիտալիզմի ըրջանում այդ անհնար է, իսկ սոցիալիզմի ժամանակ՝ աւելորդ։ Այդ իրոք թէ սրամիտ, իսկ իրօք սխալ զատողութիւնը կարելի է կրկնել ամեն մի դեմոկրատիկ հաստատութեան կատմամբ, ի թիւս որոց եւ չինովնիկների համեստ ոռնիկի նկատմամբ, որովհետեւ մինչեւ վերջը հետեւողական դեմոկրատիզմը կապիտալիզմի ժամանակ անհնար է, իսկ սոցիալիզմի ժամանակ ամեն դեմոկրատիա ինքնիրեն կը մահանայ։

Դա սոֆիզմ է որ նման է այն հին կատակին թէ արդեօք մարդը ճաղատ կը դառնա՞յ եթէ նրա գլխի մազերից մինը պակսի։

Դեմոկրատիայի զարգացումը մինչեւ վերջը, այդ զարգացման մեւերի դառնելը, նրանց գործնականում փորձելը եւայլն — այդ բոլորը սոցիալական յեղափոխութեան համար մշտի պայքարի բաղկացուցիչ խընդիրներն են կազմում։ Առանձին առնւած ոչ մի դեմոկրատիզմ սոցիալիզմ չի տայ, բայց կեանքում դեմոկրա-

տիզմը բնաւ «առանձին չի առնելի», այլ «կառնւի միասին», որ իր ազգեցութիւնը գործէ և տնտեսականի վրայ, առաջ հրէ նրա զարգացումը, ենթարկւի տնտեսական զարգացման ազգեցութեան եւայլն։ Այդ է կենդանի պատմութեան դիմակտիկան։

Ինգելսը շարունակում է.

...Հին պետական մեքենայի այդ պայթեցումը (Sprengung) եւ նրան նորով փոխարինելը, որը ճշմարիտ որ դեմոկրատիկ պիտի լինի — այդ մանրամասն նկարագրւած է «Քաղաքացիական պատերազմի» երրորդ բաժնում։

Բայց այսուղ անհրաժեշտ է համառօտ կերպով մի անգամ եւս կանդ առնել այդ փոխարինման մի քանի գծերի վրայ, որովհետեւ հէնց Գերմանիայում է, որ սնոտի հաւատը դէպի պետութիւնը փիլսոփայութիւնից փոխանցել է բուրժուազիայի եւ նոյնիսկ շատ բանւորների ընդհանուր գիտակցութեան մէջ։ Ըստ փիլիսոփաների ուսմունքի պետութիւնը «իդէայի իրականացումն է» կամ եթէ փիլիսոփայական լեզով թարգմանենք՝ աստուծոյ արքայութիւնն է երկրի վրայ։ Պետութիւնն այն ասպարէզն է, ուր պիտի իրականանայ յաւիտենական ճշմարտութիւնն ու արդարութիւնը։ Եւ այստեղից բղխում է սնոտի ակնածութիւնը դէպի պետութիւնը եւ դէպի այն ամենը ինչ որ կապ ունի պետութեան հետ, — սնոտի մի ակնածութիւն որ արքատանում է շատ հեշտ կերպով չնորհիւ այն բանի, որ մարդիկ մանկութիւնից սովորում են մըտածել այնպէս, որ իրը թէ ողջ հասարակութեան վերաբերող գործերը չեն կարող կատարեալ ու իրագործել որեւէ այլ կերպով, քան նախկին ձեւով

այսինքն՝ պետութեան եւ նրա շահաւէտ պաշտօն-
ներով վարձատրւած չինովնիկների միջոցով:

Մարդիկ երեւակայում են թէ շատ մեծ պդա-
ջապիմութիւն են անում ազատազրւելով ժառան-
գական միապետութեան դաւանանքից եւ դեմոկրա-
տիկ հանրապետութեան կողմնակից դառնալով: Իսկ
իրօք պետութիւնը ոչ այլ ինչ է եթէ ոչ մի մեքենայ,
որի միջոցով գասակարգը ճնշում է գասակարգին
եւ դեմոկրատիկ հանրապետութեան մէջ ոչ սակաւ
քան միապետութեան մէջ: Եւ լաւագոյն դէպքում
պետութիւնը մի չարիք է որ ժառանգաբար անց-
նում է պրոլետարիատին, որը դասակարգային
տիրապետութեան համար մղուղ պայքարում յաղ-
թող է հանդիսացել: Յաղթող հանդիսացած պրո-
լետարիատը ինչպէս եւ կոմմունը հարկադրւած
պիտի լինի անմիջապէս կտրել ու դէն չպրաել այդ
չարիքի վատագոյն կողմերը մինչեւ որ նոր, ազատ
հասարակական կարգերում մեծացած սերունդը
կարող կլինի դուրս նետել պետականութեան այդ
ողջ զիբիւր:

Էնգելսը նախազգուշացնում էր գերմանացիներին, որ
նրանք միապետութիւնը հանրապետութեամբ փոխարի-
նելու դէպքում մոռացութեան ըստան սոցիալիզմի հի-
մունքները առհասարակ պետութեան ինդրի նկատմամբ:
Նրա նախազգուշացնումները այժմ կարդացւում են որ-
պէս ուղղակի դաս պ. պ. Ծերեթելիներին ու Զերնով-
ներին, որոնք իրենց կուլիցիոն պրակտիկայում սնոտի
հաւատ ու ակնածութիւն են ցուցադրում դէպի պետու-
թիւնը:

Երկու նկատողութիւն եւս: 1) Եթէ էնգելսն ասում
է, որ գեմոկրատիկ հանրապետութեան մէջ պետութիւնը

նոյնչափ մնում է գասակարգային ճնշման մեքենայ, այդ
բնաւ չի նշանակում որ ճնշման ձևը պրոլետարիատի
համար անհան մի բան է, ինչպէս որ անարիխիստներից
ոմանք են ուսուցանում: Դասակարգային պայքարի եւ
դասակարգային ճնշման աւելի ազատ, աւելի բացայայտ
ձեւը հսկայական չափով թեթեւացնում է պրոլետարիատի
գործը գասակարգերի վերացման համար մղող նրա կըո-
ւում: 2) Թէ ինչո՞ւ միմիայն նոր սերունդն է, որ կարող
կըլինի միանգամայն դէն չպրաել պետականութեան զի-
րիւը՝ այդ հարցը կապ ունի դեմոկրատիայի գերազանց-
ման ինդրի հետ, որին մենք այժմ կանցնենք:

6. Էնգելսը դեմոկրատիայի գերազանցման մասին:

Այս ինդրի մասին էնգելսն արտայայտել է «սոցիալ-
դեմոկրատ» անւան գիտականօրէն անձիւտ լինելը քըն-
նելիս: Իր 70-ական թւականներին զանազան, գլխաւո-
րապէս «միջազգային» թեմաների նիրուած («Internationales aus dem Volksstaat») յօդւածների հրատարա-
կութեան առաջարանում, որի տակ դրւած է 1894 թ.
կութեան առաջարանում, որի հետեւապէս գրւած է եղել իր մահա-
յից տարի ու կէս առաջ, էնգելսը գրում էր որ բոլոր
յօդւածներում «կոմմունիստ» բառն է գործածում եւ
ոչ թէ «սոցիալ-դեմոկրատ» բառը, որովհետեւ այն ժա-
մանակ իրենց սոցիալ-դեմոկրատ էին անւանում պրո-
դոնիստները ֆրանսիայում եւ լասուալականները Գեր-
մանիայում:

...«Թէ Մարքսի եւ թէ ինձ համար, շաբունա-
կում է էնգելսը, մեր յատուկ տեսակէտը նիշելու
համար մի այդ աստիճան առանձգական դարձածք
գործածելը կատարելապէս անհնար էր: Այժմ ի-
րերի դրութիւնն այլ է եւ այդ բառը («սոցիալ-դե-

մոկասու») թերեւս կարող է անց կենալ (mag passieren) թէպէտեւ նա մնում է անձգրիտ (unpassend – անյարժար) մի այնպիսի կուսակցութեան համար, որի տնտեսական ծրագիրը հանդիսանում է ոչ թէ պարզ սոցիալիստական առհասարակ, այլ ուղղակի կոմմունիստական, մի կուսակցութեան համար, որի քաղաքական վախճանական նպատակն է պետութեան գերազանցումը և հետեւապէս եւ դեմոկրատիա յի գերազանցումը: Սակայն իսկական (նոտրգիրն ինգելսինն է) քաղաքական կուսակցութիւնների անունը բնաւչի համապատասխանում նրանց լիովին: Կուսակցութիւնը զարգանում է, անունը՝ մնում:

Դիակլետիկ ինգելսը իր կեանքի վերջալուսին էլ հաւատարիմ է մնում գիալեկտիկային: Ես ու Մարքսը, ասում է նա, ունէինք կուսակցութեան գեղեցիկ, գիտականօրէն ճշգրիտ անուն, բայց չունէինք իսկական, այսինքն մասսայակա պրոլետարական կուսակցութիւն: Այժմ (19-րդ դարի վերջում) կայ իսկական կուսակցութիւն, բայց նրա անունը գիտականօրէն ուղիղ չէ: Վնաս չունի, «եօրա կըգնայ» միայն թէ կուսակցութիւնը զարգանայ, միայն թէ նրա անւան գիտականօրէն անձգրիտ լինելը իրենից թագուն չմնայ եւ չխանդարի որ նա ուղիղ գծով զարգանայ:

Ով գիտէ, գուցէ մի որեւէ հանաքչի սկսի մեզ «բուշեկիներիս» եւս ինգելսի նման մխիթարել ասելով, որ մենք ունենք իսկական կուսակցութիւն, որը զարգանում է հրաշալի կերպով եւ վնաս չունի, եօյա կըտանի եւ «բուշեւիկ» բառի նման մի այլանդակ բառ որը ոչինչ չի արտայայտում, բացի այն միանդամայն պատահական բանից, որ 1903 թւի Բրիւսել-Լոնդոնիան համագումա-

րում մենք մեծամասնութիւն ենք կազմելիս եղել... գուցէ այժմ, յուլիսին ու օգոստոսին մեր կուսակցութիւնը հանրապետականների եւ «յեղափոխական» քաղաքականը դեմոկրատիայի հալածանքներին ենթարկելուց յեղենի դեմոկրատիայի համաժամանական առհասարակ, այլ ուղղակի կոմմունիստական վախճանական նպատակն է պետութեան գերազանցումը և հետեւապէս դեմոկրատիայի գարձագրման բառը, որի գուցէ ես ինքս էլ այժմ խոշոր, պատմական քայլ, որ գուցէ ես ինքս էլ այժմ տատանելիս լինեմ պնդելու իմ ապրիլիսն առաջարկութեան վրայ, այսինքն՝ կուսակցութեան անունը փոխելու առաջարկութեան վրայ եւ առաջարկեմ իմ ընկերներին մի «կոմպլումիս»— այն է՝ կոչել մեր կուսակցութիւնը կոմմունիստական կուսակցութիւն, բայց վակագծի մէջ թողնել «բուշեւիկ» բառը: Սակայն կուսակցութեան անւան խնդիրը անհամեմատ աւելի քիչ կարեւորութիւն ունի, քան թէ յեղափոխական սլորենտարիտի գէպի պետութեան խնդիրն ունեցած վերաբերմունքը:

Գետութեան վերաբերուղ սովորական դատողութիւնների մէջ շարունակ արւում է այն սխալը, որից նախազգուշացնում է այստեղ ինգելսը եւ որը մենք թողնելի կերպով նիշեցինք վերը:

Դա այն է, որ շարունակ մոռացութեան է տրում թէ պետութեան ոչնչացումը նաեւ գեմոկրատիայի ոչնչացումն է, թէ պետութեան մահացումը գեմոկրատիայի մահացումն է: Առաջին հայեացքից այդ պնդումը շատ տարօրինակ ու անհասկանալի է թւում: Ոմանց մէջ գուցէ նոյնիսկ վախ ծավի թէ արդեօք մենք չենք ակնկալում չի այնպիսի շրջան, երբ չպիտի գործադրուի իրեւ ըսկը ու պարամասնութեան հպատակումը մեծամաս-

նութեան, որովհետեւ չէ՞ որ գեմոկրատիան էլ հէնց այդ է, այդ սկզբունքի ընդունելն է:

Ո՞չ: Դեմոկրատիան ու փոքրամասնութեան մեծամասնութեանը հպատակւելը նոյնութիւններ չեն: Դեմոկրատիան փոքրամասնութեան մեծամասնութիւնը հպատակւելու սկզբունքն ընդունող մի պետութիւն է, այսինքն՝ մի կազմակերպութիւն, որի միջոցով մի դասակարգ սիստեմատիկ կերպով բռնութիւն է գործ դնում մի ուրիշ դասակարգի վրայ կամ բնակչութեան միւս մասի վրայ:

Մեր վերջնական նպատակն է՝ ոչնչացնել պետութիւնը, այսինքն՝ ամեն տեսակ կազմակերպւած եւ սիստեմատիկ բռնութիւն, մարդկանց վրայ գործ գրւող ամեն տեսակ բռնութիւն: Մենք չենք սպասում որ զայ մի այնպիսի հասարակակարգ երբ չի գործադրւելու փոքրամասնութեան մեծամասնութեանը հպատակւելու ըսկզբունքը: Սակայն ձգտելով դէպի սոցիալիզմ մենք համոզւած ենք որ նա աճելու է եւ դառնալու է կոմմունիզմ եւ դրա հետ միասին կսկսի անհետանալ մարդկանց վըրայ բռնանալու հարկն առհասարակ, մի մարդու միւսին հպատակւելու, հասարակութեան մի մասին միւսին հըպատակւելու կարիքը, որովհետեւ մարդիկ արդէն ընտելացած կըլինեն ընկերական կեանքի տարրական պահանջները կատարելու առանց որեւէ բռնութեան, առանց որեւէ հպատակման:

Այդ ընտելացման տարրն ընդգծելու համար է որ էնդեւը խօսում է նոր սերմիկ մասին, որը «մեծացած կըլինի նոր ազատ հասարակական պայմաններում, որը կարող կըլինի դէն շպրտել ամեն տեսակ պետականութեան ողջ դիրիւը, ամեն տեսակ պետականութեան

— ուրեմն նոյն թւում եւ դեմոկրատիկ հանրապետական — պետականութեան «զիրիլը»:
Այդ բանը պարզաբանեու համար անհրաժեշտ է քըն-նել պետութեան մահացման տնտեսական հիմունքները:

Գ Լ Ո Ւ Խ V.

ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՀԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ:

Այդ հարցի ամենաբազմակողմանի լուսաբանութիւնը Մարքսը տեսէ իր «Գոթի ծրադրի քննադատութեան» մէջ (նամակ Բրակիէին, գրւած 1875 թւի մայիսի 5 ին եւ տպագրւած միմիայն 1891 թւին «Neue-Zeit»-ում X, I, որ ոռւսերէն լոյս է տեսել առանձին հրատարակութեամբ): Լասուալիզմի քննադատութեան նմիրւած այդ նշանաւոր գրւածքի պողեմիկական մասը փոխարինել է նրա այսպէս սասած դրական մասը, այն է՝ պետութեան մահացման եւ կոմմունիզմի զարգացման կապակցութեան անալիզը:

1. Ի՞նչպէս է դնում հարցը Մարքսը:

Մարքսի 1875 թւի մայիսի 5 ին Բրակիէին ուղղած նամակն ու վերը քննութեան առած ինդելսի 1875 թւի մարտի 28 ին Բէրէլին ուղղած նամակը երնսանց համեմատելիս կարող է թւալ, որ Մարքսն աւելի «պետական» է, քան թէ ինդելսը եւ որ այդ երկու հեղինակների պէտք է, քան թէ ինդելսը եւ ուղղած կարծիքների մէջ եղած տարրութիւնը բաւական խոշոր է:

Էնդեւը առաջարկում է Բէրէլին թողնել պետութեան վերաբերող դատարկ զրոյցները, ծրագրից բոլորովին դուրս նետել պետութիւն բառը, փոխարինելով

այն «համայնք» բառով։ Էնդելսը մինչեւ անգամ յայտարարում է, որ կոմմունն արդէն բառի բուն իմաստով՝ պետութիւն չի եղել։ Մինչդեռ Մարքսը խօսում է նոյնիսկ «կոմմունիստական հասարակութեան ապագայ պետականութեան» մասին, այսինքն՝ կարծես թէ ընդունում է պետութեան անհրաժեշտութիւնը նոյնիսկ կոմմունիզմի ժամանակ։

Բայց այդ կարծիքը հիմնովին սխալ պէտք է համարել։ Մերձաւոր քննութիւնը ցոյց է տալիս, որ Մարքսի եւ էնդելսի հայեցքները պետութեան մահացման վրայ միանգամայն իրար համապատասխան են, իսկ Մարքսի վերն առաջ բերած դարձւածքը հէնց այդ մահացող պետականութեանն է վերաբերում։

Պարզ է, որ ապագայ «մահացման» մոմենտը որոշելու մասին խօսք անգամ չի կարող լինել, մանաւանդ որ դա ակնյայտ կերպով տեւական մի պրոցես է լինելու։ Մարքսի և էնդելսի միջև եղած երեսյթական տարբերութիւնը բացատրում է նրանով, որ տարբեր են նրանց թեմաներն ու իրենց առաջարրած խնդիրները։ Էնդելսի նպատակն էր ակներեւ, կտրուկ կերպով, խոչոք գծեքով։ յց տալ թէրէլին պետութեան մասին տարածւած սովորական նախապաշարմունքների (որոնց մէծ չափով ենթակայ էր եւ Լասոսալը) անհեթեթութիւնը։ Մարքսը լոկ թուոցիկ կերպով է շօշափում այդ խնդիրը, հետաքրքրւելով մի այլ թեմայով, այնէ՝ կոմմունիստական հասարակութեան զարգացման թեմայով։

Մարքսի ողջ թէորիան զարգացման թէորիայի գործադրութիւնն է կապիտալիզմի վերաբերմամբ եւ այն այդ թէորիայի գործադրութիւնն իր ամենահետեւողական, ամենալիիակատար, մտածւած եւ բովանդակութեամբ հարուստ ձեւով։ Բնականարար Մարքսի առաջ

պիտի ծագէր այդ թէորիայի գործադրութեան խնդիրը կապիտալիզմի առաջիկայ անկման եւ ապագայ կոմմունիզմի ապագայ զարգացման նկատմամբ։

Արդ ո՞րպիսի տւեալների հիման վրայ կարելի է պնել ապագայ կոմմունիզմի ապագայ զարգացման հարցը։

Այն հիման վրայ, որ նա ծագում է կապիտալիզմից, պատմականօրէն զարգանում է կապիտալիզմից, հետեւանք է այնպիսի հասարակական ոյժի ազդեցութեան, որը կապիտալիզմի ծնունդ է։ Մարքսը փորձ անում չի անում որեւէ ուտոպիա հնարելու կամ կահում-գամ չի անում որեւէ ուտոպիա հնարելու կամ կահում-ներ անելու այնպիսի բաների մասին, որ անկարելի է գիտենալ։ Կոմմունիզմի հարցը Մարքսը գնում է այնպէս, ինչպէս մի բնագէտ կըդնէր որեւէ նոր կենսաբանացիս ակներեւ, կտրուկ կերպով, խոչոք գծեքով։ յց տալ թէրէլին պետութեան մասին տարածւած սովորական նախապաշարմունքների (որոնց մէծ չափով ենթակայ էր եւ Լասոսալը) անհեթեթութիւնը։ Մարքսը լոկ թուոցիկ կերպով է շօշափում այդ խնդիրը, հետաքրքրւելով մի այլ թեմայով, այնէ՝ կոմմունիստական հասարակութեան զարգացման թեմայով։

Մարքսը նախ եւ առաջ գէն է շարտում այն խառնացիոթութիւնը, որը մացնում է Գոթի ծրագիրը պետութեան եւ հասարակութեան փոխ-յարաբերութեան ինդրի մէջ։

...«Ժամանակակից հասարակութիւնը, գրում է նա, կապիտալիստական հասարակութիւն է, որ գոյութիւն ունի բոլոր քաղաքակիրթ երկրներում եւ քիչ թէ շատ ազատ է միջնադարեան խառնուրդից, քիչ թէ շատ կերպարանափոխւածէ այս կամ այն երկրի պատմական զարգացման առանձնայատկութիւնների չնորհիւ, որը քիչ շատ զարգացած է։ Եւ ընդհակառակը՝ «Ժամանակակից պետութիւնը» փոխում է հէնց որ մի պետութեան սահմանից միւսի սահմանն ես անցնում։ Գերմանա-

պրուսական կայսրութեան մէջ նա բոլորովին այլ է, քան Զւիցարիայում, Անգլիայում բոլորովին այլ, քան Միացեալ-Նահանգներում։ Հետեւապէս «Ժամանակակից պետութիւնը» մի Փիկցիա է։

Սակայն չնայած նրանց ձեւերի խայտարդէտ բազմազանութեան, զանազան քաղաքակիրթ երկըրների տարրեր պետութիւններն ունեն այն ընդհանուր գիծը, որ բոլորն էլ ժամանակակից կապիտալիստական տեսակէտից քիչ չատ զարգացած բուժուական հասարակութեան հողի վրայ են կանդնած։ Ուստի եւ նրանք ունեն ընդհանուր էական գծեր։ Այդ իմաստով կարելի է խօսել «Ժամանակակից պետականութեան» մասին, հակառակով նըրան գալիքին, երբ նրա արմատը — բուրժուական հասարակութիւնը կըմահանայ։

Ապա խոնդիրն այսպէս է դրւում — թէ ո՞րպիսի վերափոխման կ'ենթարկուի պետականութիւնը կոմմունիստական հասարակութեան ծոցում։ Ուրիշ խօսքով՝ որպիսի հասարակական Փունկցիաներ կըմնան, որոնց կարող կըլինի նմանցնել այժմեան պետական Փունկցիաներին։ Այդ հարցին կարելի կըլինի պատասխանել միմիայն գիտականօրէն եւ քանի հազար անդամ էլ համադրեն «Ժողովուրդ եւ պետութիւն» բառերը, դա մաղաչափ անդամ առաջ չի մղի ինդրի լուծումը»...

Այդպիսով Մարքսը ծաղրի է ենթարկում «Ժողովը դական պետութեան» մասին եղած զրոյցներն ու հարցը դնում է այնպէս, կարծես նախազգուշացնում է, թէ նըրան գիտականօրէն պատասխանելու համար պէտք է գործադրել միմիայն գիտականօրէն հաստատուած տըւեալներ։ Առաջինը, որ միանգամայն ճշգրիտ կերպով

հաստատւած է զարգացման թէորիայով, առհասարակող գիտութեամբ — մի բան որ մոռացութեան են տւել ուսուպիստները, որ մոռացութեան են տալիս այժմեան օպպորտիւնիստները, որոնք վախինում են սոցիալիստական յեղափոխութիւնից — դա այն հանգամանքն է, որ պատմականօրէն անկասկած պիտի լինի կապիտալիդ մից դէպի կոմմունիզմ առնող փոխանցիկ մի առանձին շըջան, կամ առանձին էտապ։

2. Անցում կապիտալիզմից դէպի կոմմունիզմը։

Կապիտալիստական և կոմմունիստական հասարակութեան արանքում, շարունակում է Մարքսը, ընկնում է այն միջին շրջանը, երբ կապիտալիստական հասարակութիւնը յեղափոխականօրէն փոխուում է կոմմունիստականի։ Այդ շրջանին համապատասխանում է եւ քաղաքական անցման շրջան եւ այդ շրջանին պետութիւնը չի կարող լինել այլ ինչ, քան՝ պրալետարիատի յեղափոխական դիկտատորան։

Մարքսի այդ եզրակացութիւնը հիմնւած է պրոլետարիատի ժամանակակից կապիտալիստական հասարակութեան մէջ ունեցած գերի անալիզի վրայ, այդ հասարակութեան զարգացման եւ պրոլետարիատի եւ բուժուազիայի շահերի անհաշեկիլութեան տւեալների վրայ։

Առաջ ինդիրն այսպէս էր դրւում՝ աղատութիւնը ձեռք բերելու համար պրոլետարիատը պիտի տապալէ բուրժուազիային, քաղաքական իշխանութիւն նւաճէ, եր յեղափոխական դիկտատորան հաստատէ։

Այժմ ինդիրը քիչ այլ կերպ է դրւում։ Անցումը կապիտալիստական հասարակութիւնից, որի զարգացումը դէպի կոմմունիզմն է գնում, դէպի կոմմունիստական

Հասարակութիւնը անհնար է առանց «քաղաքական պնդողիկ շրջանի» եւ այդ շրջանի պետութիւնը կարող է լինել միմիայն պրոլետարիատի յեղափոխական դիկտատուրան :

Արդ՝ որպիսի՞ է այդ դիկտատուրայի եւ դեմոկրատիայի յարաբերութիւնը :

Մենք տեսանք, որ «Կոմմունիստական Մանիֆեստը» պարզորէն իրար կողքի է զնում երկու հասկցողութիւն, «աղողետարիատի տիրող դասակարդ դառնալն» ու դեմոկրատիային տիրանալը» : Բոլոր վերը ասածներիս հիման վրայ կարելի է աւելի ճշգրիտ կերպով որոշել, թէ ի՞նչ կերպ է փոխում դեմոկրատական կապիտալիզմից կոմմունիզմին անցնելիս :

Կապիտալիստական շրջանում, եթէ միայն հասարակական գարգացումը բարենպաստ պայմաններում է կատարում, քիչ թէ շատ լիակատար դեմոկրատիզմի իրականացումը գտնում ենք դեմոկրատիկ հանրապետութեան մէջ : Սակայն այդ դեմոկրատիզմը միշտ էլ կաշկանդւած է կապիտալիստական շահագործման նեղ շրջանակներով եւ դրա համար մշտապէս մնում է փոքրամասնութեան դեմոկրատիզմ, ունեւոր դասակարգի դեմոկրատիզմ, հարուստների դեմոկրատիզմ : Կապիտալիստական հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող ազատութիւնը մշտապէս մնում է մօտաւորապէս մի նոյնպիսի ազատութիւն, որպիսին զին յունական հանրապետութիւնների ազատութիւնն էր, այսինքն՝ ստրկատէրերի ազատութիւն : Այժմեան վարձու ստրկուները կապիտալիստական շահագործման չնորհիւ այնքան ճնշած են կարիքի ու չքաւորութեան ճիրաններում, որ գլուխ չունեն դեմոկրատիայի, քաղաքականութեան մասին մըտածելու, որ հասարակական քաղաքական կեանքի սո-

վորական խաղաղ ընթացքի միջոցին բնակչութեան մեծամասնութիւնը կտրւած է հասարակական քաղաքական կեանքից :

Այս պնդումի ճշուութիւնն ամենից ակներեւ կերպով հաստատում է Գերմանիայի օրինակը հէնց նրա համար, որ այդ պետութեան մէջ սահմանադրական լեզարութիւնը զարմանալի կերպով տեւական ու հաստատ էր մնում գլութէ կէողար (1871—1914թ.) եւ սոցիալ-դեմոկրատիան այդ ժամանակամիջոցում կարողացաւ օգտագործելու այդ լեզարութիւնը, աւելի քան այն որեւ է այլ երկրում եւ կազմակերպելով կուսակցութեան գիրկը մտցրեց բանուրների մի այնպիսի թիւ, որպիսին չի տեսնած որեւէ այլ երկրում :

Այժմ տեսնենք, թէ կապիտալիստական հասարակութեան ծոցում եղած քաղաքականօրէն գիտակից ու գործունեայ վարձու ստրկուների այդ չտեսնւած թիւն ամբողջութեան ո՞ր բաժինն է կազմում : Սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան մի միլիոն անդամ ընդդէմ 15 միլիոն վարձու բաւորների ! : Երեք միլիոն պրոֆեսիոնալ կազմակերպութիւնների մէջ մտած բանուրներ ընդդէմ 15 միլիոնի ! Դեմոկրատիա չնչին փոքրամասնութեան համար, դեմոկրատիա հարուստների համար — ահ թէ որն է կապիտալիստական հասարակութեան դեմոկրատիզմը :

Եթէ մօտիկանց դիտենք կապիտալիստական դեմոկրատիայի մեխանիզմը — կըտեսնենք ամենուրեք՝ թէ ընտրական իրաւունքի (իբր թէ աննշան!) մանրամասնութիւնների մէջ (նստակեցութեան ցենզ, կանանց ընտրելու իրաւունքից զրկելը, եւ այլն) թէ ներկայացուցչական հիմնարկութիւնների տեխնիկայի մէջ, թէ ժողովրդի իրաւունքի դէմ յարուցւող փաստացի

խոչընդուների մէջ (հասարակական չէնքերը «աղքատ-ների» համար չեն) թէ ամենօրեայ մամուլի զուտ կապիտալիստական կազմակերպութեան մէջ եւ այլն, եւ այլն, մենք կըտեսնենք դեմոկրատիզմի անվերջ ու անվերջ սահմանափակում :

Այդ սահմանափակումները, բացառումներն ու խոչընդուները, որ յարուցւում են չքաւորների գէմ մանր են երեւում մանաւանդ այն մարդկանց աչքում, որոնք իրանք երբէք կարիք չեն տեսել եւ ճնշւած դասակարգի հետ նրա մասսայական կեանքում շփում են ունեցել (այդպիսիների թւին են պատկանում բուրժուական քաղաքականների մէջ մականը, եթէ ոչ $\frac{99}{100}$), սակայն նրանց ընդհանուր հետեւանքը լինում է այն, որ այդ սահմանափակումները արտաքսում են, գուրս են նետում չքաւորներին քաղաքական աշխարհից, զրկում են նրանց դեմոկրատիային ակտիւ կերպով մասնակցելուց :

Մարքու հրաշալի կերպով ըմբռնում է կապիտալիստական դեմոկրատիայի այդ էութիւնը, կոմմունի փորձն անալիզի ենթարկելով ասում է, որ ճնշւածներին քանի տարին մի անգամ թոյլ են տալիս, որ նրանք որոշեն թէ արդեօք ճնշող դասակարգի ո՞ր ներկայացուցիչները պիտի ճնշւածների ներկայացուցչի գեր կատարեն ու ճնշեն նրանց :

Սակայն այդ կապիտալիստական դեմոկրատիայից, որ անխուսափելի կերպով նեղ է, որը ծպաեալ կերպով իրենից հեռու է վանում չունեւորներին եւ դրա համար ողջովին կեղծ է ու կեղծաւոր, այդ դեմոկրատիայից առաջդիմութեան զարգացումը պարզ, ուղիղ ու անխանգար չի ընթանում դէպի «աւելի ու աւելի լայն դեմոկրատիան», ինչպէս նկարագրում են այն ազանամիտ պը-

րոֆեսորներն ու մանր-բուրժուական օպպորտիւնիստները : Ոչ : Առաջադիմումը դէպի կոմմունիզմը կատարում է պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով եւ այլ կերպ չի կարող կատարել, որովհետեւ չըկայ այլ ոք կամ այլ միջոց, որ կարող լինի խորտակել կեղեքող կամտալիստների դիմարբուքիւնը :

Իսկ պրոլետարիատի դիկտատուրան, այսինքն ճընշածների աւանդարդի կազմակերպումն իրեւ տիրող դասակարգ ճնշողներին ճնշելու համար չի կարող առաջ բերել սոսկ դեմոկրատիայի լայնացում : Դեմոկրատիզմի հսկայական լայնացման հետ միասին, դեմոկրատիզմի, որն առաջին անգամն է որ պիտի գառնայ դեմոկրատիզմ աղքատների համար, դեմոկրատիզմ ժողովրդի համար, ահա այդ եւ ոչ թէ դեմոկրատիզմ հարուստների համար, ահա այդ դեմոկրատիզմի հսկայական լայնացման հետ միասին պրոլետարիատի դիկտատուրան մի շաբք բացառումներ պահանջների, կավիտալիստ կեղեքիների ազատութեան նկատմամբ : Մենք պէտք է նրանց ճնշենք, որ պէսզի կարողանանք ազատել մարդկութիւնը վարձու ստրկութիւնից, նրանց դիմադրութիւնը պէտք է փշել ոյժով եւ դրա համար պարզ է, որ ուր կայ ճնշում, կայ բռնութիւն — չի կարող լինել ազատութիւն, չի կարող լինել դեմոկրատիա :

Ճնշելու սքանչելի կերպով արտայայտել է այդ Բէկնդին գրած իր նամակում, ուր ինչպէս ընթերցողը կը բէկին գրած իր նամակում է, որ «պրոլետարիատը պետութեան կայշչ նա ասում է, որ դեմոկրատիա պէտք է փշել ոյժով եւ դրա համար պարզ է, որ ուր կայ ճնշում, կայ բռնութիւն — չի կարող լինել ազատութիւնը չիլինի :

Դեմոկրատիա ժողովրդի հսկայական մէծամասնութեան համար եւ կեղեքիներին, ժողովրդի ճնշեներին

բոնի ճնշելը, այսինքն՝ դեմոկրատիայից արտաքսել ահա թէ որպիսի փոփոխութեան պիտի ենթարկւի դեմոկրատիան կապիտալիզմից դէպի կոմմունիզմ տանող անցողիկ շրջանում :

Միմիայն կոմմունիստական հասարակութեան մէջ, երբ կապիտալիստների դիմադրութիւնն արդէն վերջնականապէս կոտրւած է, երբ կապիտալիստները չքացել են, երբ չկան այլեւս գասակարգեր (այսինքն երբ հասարակութեան անդամների մէջ հասարակական արտադրութեան նկատմամբ այլեւս ոչ մի խորութիւն չի դրում) միմիայն այն ժամանակ է որ «չխնում է պետութիւնը եւ կարելի է խօսել ազատութեան մասին»։ Միմիայն այն ժամանակ է, որ կիրականանայ լիակատար դեմոկրատիզմը եւ իրօք որ առանց բացառումների։ Եւ միմիայն այն ժամանակ է, որ դեմոկրատիան կսկսէ մահանալ այն պարզ պատճառով, որ մարդիկ ազատուելով կապիտալիստական ստրկութիւնից, կապիտալիստական կեղեքման անթիւ սարսափներից, վայրագութիւններից, անհեթեթութիւններից եւ զազրութիւններից աստիճանաբար կը-սովորեն կատարել համայնակեցութեան այն տարրական կանոնները, որոնք յայտնի են դարեւ ի վեր, որոնք հազար տարիներ կը կնւել են բոլոր այբուբեններում, կատարել առանց որեւէ բռնութեան, առանց ստիպման, առանց հպատակեցման, առանց ճնշման յազուկ ապարատի, որը պետութիւն է կոչում։

Պետութիւնը մահանում է արտայայտութիւնը շատ յաջող է ընտրուած, որպէսէտեւ նա մատնանջում է պրոցեսսի աստիճանականութիւնն ու տարերայնութիւնը։ Միմիայն սովորութիւնն է, որ կարող է այդպիսի ազդեցութիւն գործել եւ անշուշտ կգործէ, որովհետեւ մենք

հազար ու բիւր անդամ տեսնում ենք թէ որքան հեշտ են անտելանում մարդիկ համայնակեցութեան՝ իրենց համար անհրաժեշտ կանոնները պահելուն եթէ չկայ կեղեգում, եթէ չկայ խոռվութիւն, ըողոք եւ ապստամբութիւն ծագեցնող եւ ննջման անհրաժեշտութիւն ստեղծող որեւէ բան։

Աւրեմն կապիտալիստական հասարակութեան ծոցում մենք կարող ենք ունենալ պոչատ, ողորմելի, կեղծ դեմոկրատիա, դեմոկրատիա միմիայն հարուստների համար, փոքրամասնութեան համար։ Պրուետարիատի դիկտատուրան, դէպի կոմմունիզմն անցման այդ շրջանը, առաջին անդամ կըտայ մեզ դեմոկրատիա ժողովրդի համար, մեծամասնութեան համար, փոքրամասնութեան կեղեքիչների ճնշման հետ միասին։ Միմիայն կոմմունիզմն է, որ կարող է տալ իրօք լիակատար դեմոկրատիա եւ որքան լիակատար է այդ դեմոկրատիան, այնքան շուտ նա կը դառնայ անպէտք, ինքն իրեն կըմահանայ։

Այս խօսքով՝ կապիտալիզմի շրջանում մենք ունենք պետութիւն, բառի բուն իմաստով, մի յատուկ մեքենայ, որի միջոցով մի գասակարդ ճնշում է միւսին, եւ այն՝ փոքրամասնութիւնը ճնշում է մեծամասնութիւնը։ Հասկանալի է որ մի այդպիսի գործի համար, որպիսին է մեծամասնութիւն կազմող կեղեքւածների սիստեմատիկ ճնշում, փոքրամասնութիւն կազմող կեղեքիչների կողմից — հարկաւոր է ծայրայեղ կատաղութիւն, ճնշման գաղանութիւն, հարկաւոր են արեան ծովեր, որոնց մէջ ապրում է մարդկութիւնը իր ստրկութեան, ճնշութեան, վարձկանութեան շրջանը։

Ապա, կապիտալիզմից կոմմունիզմին անցնելիս ճնշումը դիմուս անհրաժեշտ է, բայց այսեղ ճնշողը փոքրամասնութիւն կազմող կեղեքիչները չեն։ Ճնշման յա-

տուկ ապարատը, յատուկ մեքենան — «պետութիւնը» դեռևս անհրաժեշտ է, բայց դա արդէն անցողիկ պետութիւն է, դա արդէն պետութիւն չի բառի բուն իմաստով, որովհետեւ երբ ճնշողը երեկուայ վարձու ստըրուկների մեծամասնութիւնն է, իսկ ճնշողը փոքրամասնութիւն կազմող կեղեքիչները — ճնշումը համեմատաբար այնքան հեշտ, հասարակ ու բնական մի գործ է, որ դրա համար շատ աւելի քիչ արեւն պիտի թափուի, քան ստրուկների, ճորտերի, վարձու բանուրների ապստամբութիւնը ճնշելիս, որ նա շատ աւելի աժան կընստի մարդկութեան վրայ: Եւ միաժամանակ կարող է գոյութիւն ունենալ բնակչութեան այնպիսի խոչը մեծամասնութիւնն ընդգրկող գեմոկրատիա, որ ճնշման յատուկ մեքենայի անհրաժեշտութիւնն սկսում է չքանալ: Բնականաբար կեղեքիչները անկարող են ժողովրդին ճնշել առանց ամենաբարդ մեքենայի, որի օգնութեամբ է որ այդ բանը պիտի իրագործւի, իսկ ժողովուրդը կեղեքիչներին կարող է ճնշել մի շատ պարզ ու հասարակ «մեքենայի» միջոցով, համարեա թէ առանց մեքենայի, առանց յատուկ ապարատի, զինւած մասամերի հասարակ կազմակերպութեամբ (օրինակ՝ Բանուրական և Զինուրական Դեպուտատների Խորհուրդների նման կազմակերպութիւնների միջոցով):

Վերջապէս միայն կոմմունիզմն է, որ կատարելապէս վերացնում է պետութեան անհրաժեշտութիւնը, որովհետեւ կոմմունիզմի ժամանակ չի լինի մի դասակարգ, որին կարեք լինէր ճնշել, չի լինի բնակչութեան որեւէ հատուած, որի գէմ պէտք լինէր սիստեմատիկ կերպով կուել: Մենք ուստապիստներ չենք եւ բնաւ չենք ժիտում, որ հնարաւոր եւ անխուսափելի կըլինեն չքացեսսներ առանձին անհատների կողմից եւ այդպիսի չքացեսսները

ճնշելու անհրաժեշտութիւն: Բայց նախ՝ դրա համար, անհրաժեշտ չէ ճնշման յատուկ մեքենայ, յատուկ ապարատ — այդ կանի ինքը զինւած ժողովուրդը նոյն պիտի հեշտ ու թեթեւ ձեւով, ինչպէս քաղաքակիրթ մարդկանց ամեն մի ամբոխ, նոյնիսկ ժամանակակից հասարակութեան օրերում, բաժանում է կուտարաներին կամ թոյլ չի տալիս կանանց բոնարաննելու: Եւ ապա, մենք զիտենք, որ համայնակեցութեան կանոնները խախտող էքսցեսսների հիմնական պատճառը մասսաների կեղեքումն է, նրան խեղդող կարիքն ու չքաւորութիւնը: Այդ գլխաւոր պատճառի վերացումով է քացեսսներն անխուսափելի կերպով կսկսեն «մահանալ»: Մենք չըգիտենք որքան արագ եւ ինչ աստիճանականութեամբ, բայց զիտենք որ նրանք կսկսեն մահանալ: Դրանց մահացման հետ միասին կըլմահանայ նաեւ պիտութիւնը:

Մարքն, առանց ուստապիանների յետելից ընկնելու, աւելի մանրամասն կերպով բնորոշել է այն, ինչ որ այժմ արդէն կարելի է որոշել այդ ապագայի նկատմամբ, այն է՝ կոմմունիստական հասարակութեան աւելի ստորին եւ աւելի բարձր Փաղի (աստիճանի, շրջանի) տարբերութիւնը:

3. Կոմմունիստական հասարակութեան առաջին փազը

«Գոթեան ծրագրի քննադատութեան» մէջ Մարքսը մանրամասն կերպով հերքում է լասսալեան այն գաղափարը, որ իբր թէ սոցիալիզմի ըլջանում բանուրները պիտի ստանան առանց «կրծատման» իրենց «աշխատանքի լիակատար արդիւնքը»: Մարքսը ցոյց է տալիս, որ ողջ հասարակութեան ամբողջ հասարակական աշխատանքից պէտք է հանել եւ պահ հ ե ս ո ի ֆ ո ն դ ը, եւ արտադրութեան լայնացման ֆոն դը եւ ամաշած» մեքենաների վերականգնման արժէքը, եւ

այլն եւ ապա՝ սպառման առարկաներից՝ վարչութեան, դպրոցների, հիւանդանոցների, անկելանոցների ծախսերը եւ այլն:

Լասուալի մշուշապատ, անպարզ, ընդհանուր ֆրազի տեղակ («աշխատանքի լիակատար արդիւնքը՝ բանւորին») Մարքսը լրջմիտ կերպով հաշւի է առնում թէ ինչպէս պէտք է ստիւլած լինի վարել իր տնտեսութիւնը սոցիալիստական հասարակութիւնը: Մարքսը սկսում է կոնկրետ անալիզի ենթարկել այդ կապիտալիզմից ազատած հասարակութեան կեանքի պայմանները եւ առում է: —

«Մենք այստեղ գործ ունենք (բանւորական կուսակցութեան ծրագիրը քննելիս) ոչ թէ մի այնպիսի կոմմունիստական հասարակութեան հետ, որը զարգացել է իր իսկ հիմքերից այլ մի այնպիսի հասարակութեան հետ, որը նոր է դուրս գալիս կապիտալիստական հասարակութիւնից եւ որը հէնց այդ պատճառով ամեն կողմից՝ թէ տնտեսական, թէ բարոյական եւ մտաւոր — կրում է վեռ իր վըրայ հին հասարակութեան կնիքը, այն հասարակութեան, որի խորքից ինքը ծագել է»:

Այս հէնց այդ կոմմունիստական հասարակութիւնը, որը նոր է, որ լոյս աշխարհ է ընկել կապիտալիզմի ծոցից, որը ամեն կողմով՝ կրում է հին հասարակութեան կնիքը՝ Մարքսն անւանում է կոմմունիստական հասարակութեան «առաջին» կամ ստորին Փաղ:

Արտադրութեան միջոցներն արդէն մասնաւոր անհատների սեփականութիւն չեն: Արտադրութեան միջոցներն արդէն ողջ հասարակութեանն են պատկանում: Հասարակութեան ամեն մի անդամ կատարում է հասարականորէն անհրաժեշտ աշխատանքի որոշ մասը եւ հա-

սարակութիւնից վկայագիր է ստանում, որ նա այսինչ աշխատանքը կ ա տ ա ր ե լ է: Այդ վկայագրի հիման վրայ նա ստանում է հասարակական սպառման պիտոյքների պահեստներից համապատասխան սոցիալիստամբ իրերը: Ուրեմն, ամեն մի բանւոր հաքանակութեամբ իրերը: Ուրեմն, ամեն մի բանւոր հաքանակութիւնից ստանում է նոյնքան, որքան որ ինքը տեղ է, բացի աշխատանքի այն քանակից, որը նրանից վերցում է հասարակական ֆոնդի համար:

Կարծէք թէ թագաւորում է «հաւասարութիւն»:

«Սակայն իրը Լասուալը աչքի առաջ ունենալով այդպիսի հասարակակարգ (որը սովորաբար սոցիալիզմ է կուլուում, և որը Մարքսն անւանում է կոմմունիզմի առաջին Փաղ) ասում է որ դա «արդարացի բաշխում է», որ դա «աշխատանքի հաւասար արդիւնքի ամենքի համար հաւասար իրաւունք է», Լասուալը սիալուում է եւ Մարքսը պարզում էնրա սիալը:

«Հաւասար իրաւունք, ասում է Մարքսը, այստեղ մենք իրօք տեսնում ենք, բայց դա դեռեւս «բուրժուական իրաւունք է», որն ինչպէս եւ ամեն մի իրաւունք անհաւարութիւն է ենթադրում: Ամեն իրաւունք — դորձագրութիւն է միանիւն մի մասշտարի զանազան մարդկանց վերաբերմամբ, մարդկանց, որոնք իրօք միանման չեն, հաւասար չեն միմիանց: Եւ դրա համար «հաւասար իրաւունքը» հաւասարութեան խախտում է եւ անարդարութիւն: Եւ իրօք՝ ամեն ոք, միւսի հետ հաւասար չափով կատարելով հասարակական աշխատանքի որոշ մասը, ստանում է հասարակական արտադրութեան հաւասար բաժինը (վերը յիշած հանումներով):

Մինչդեռ առանձին մարդիկ հաւասար չեն — մինն ուժեղ է, միւսը թոյլ, մինը ամուսնացած է, միւսը ոչ, մինը աւելի շատ երեխայ ունի, քան միւսը եւայլն:

...«Ռւրեմն, հաւասար չափով աշխատելով հանդերձ, եզրակացնում է Մարքով, հասարակական սպառման Փոնդին հաւասար կերպով մասնակցելով հանդերձ իրօք մինը կստանայ աւել, քան միւսը, մինը կըլինի աւելի հարուստ, քան միւսը, եւ այլն : Այդ ամենից խուսափելու համար իրաւունքը հաւասար լինելու փոխարէն պիտի անհաւասար լինի» :

Հետեւապէս կոմմունիզմի առաջին Փազը գեռեւս չի կարող տալ արդարութիւն եւ հաւասարութիւն : Հարըստութեան վերաբերեալ տարբերութիւններ կընան եւ անարդար տարբերութիւններ, սակայն մարդը մարդուն չի կարողանայ հարստահարել, որովհետեւ անհնար կըլինի խլել ու մասնաւոր սեփականութիւն դարձնել արտադրութեան միջոցները՝ Փաբրիկները, մեքենաները, հողը եւ այլն : Մարքսը փշրելով Լասսալի՝ մանր-բուրժուական Փրազը առհասարակ «հաւասարութեան» ու «արդարութեան» մասին, ցոյց է տալիս կոմմունիստական հասարակութեան զարգացման ընթացքը, որ ստիպւած է նախոնչացնել միմիայն այն «անարդարութիւնը», որ արտադրութեան միջոցները խլել ու իւրացըել են առանձին մարդիկ եւ որը անկարող է միանդամից ոչնչացնել եւ յետագայ անարդարութիւնը, որ կայանում է սպառման առարկաների բաշխման մէջ ոչ թէ ըստ կարիքի, այլ ըստ աշխատանքի :

Վուլգար տնտեսագէտները, դրանց թւում եւ բուրժուական պրոֆեսորները, նոյն թւում եւ մեր Տուդանը, շարունակ կշտամբում են սոցիալիստաներին, որ իբր թէ վերջնները մոռանում են մարդկանց անհաւասարութեան մասին եւ «Երազում են» ոչնչացնել այդ անհաւասարութիւնը : Այդ կշտամբանքը, ինչպէս տեսնում

ենք, միմիայն պ.պ. բուրժուական իդէոլոգների ծայրադեղ տգիտութիւնն է ցուցահանում :

Մարքսը ոչ միայն, ամենաճշգրիտ կերպով հաշմի է առնում մարդկանց անհաւասարութիւնը, այլ հաշմի է առնում նաեւ այն, որ արտադրութեան միջոցների սոսկ հասարակական սեփականութիւն գառնալը («սոցիալիզմը», ըստ այդ բառի սովորական գործածման) չի վերացնում բաշխման թերութիւններն ու բուրժուական իրաւունքի «անհաւասարութիւնը», այն իրաւունքի, որը շարունակում է իշխել որ չափով որ պրոդուկտները գեռեւս բաժանում են «ըստ աշխատանքի» :

«Բայց այդ թերութիւնները, շարունակում է Մարքսը, անխուսափելի են կոմմունիստական հասարակութեան առաջին Փազում, իր այն վիճակում, եթե նա երկարատես երկունքից յետոյ ծնւռում է կապիտալիստական հասարակութիւնից : Իրաւունքը բնաւ չի կարող աւելի բարձր լինել, քան տնտեսական կարգը եւ նրանով պայմանաւորած հասարակական կուլտարական զարգացումը» :

Այդպիսով կոմմունիստական հասարակութեան առաջին Փազում (որը սովորաբար սոցիալիզմ են անւանում) բուրժուական իրաւունքը միանդամայն չի վերացում, այլ մասսմբ միայն, միայն տնտեսական յեղացման կատարած նւաճման չափով, այսինքն միմիայն արտադրական իջոցների նկատմամբ : Բուրժուական իրաւունքը համարում է նրանց առանձին մարդկանց մասնաւոր սեփականութիւնն : Սոցիալիզմը նրանց ընդհանուրի սեփականութիւնն է զարձնում : Այդ չափով եւ միմիայն այդ չափով է վերանում «բուրժուական իրաւունքը» :

Բայց նա մնում է գեռեւս իր միւս մասով, մնում է իբր որոշիչ պրոդուկտների բաշխման եւ աշխատանքի

բաշխման հասարակութեան անդամների միջեւ: «Ովչի աշխատում նա չըպէտք է ուտի» այս սոցիալիստական սկզբունքն արդէն իրականացւած է: Սակայն զա դեռ կոմմունիզմ չէ եւ զա դեռ եւս չի վերացնում «բուրժուական իրաւունք», որը անհաւասար մարդկանց, անհաւասար աշխատանքի համար (փաստօրէն անհաւասար) տալիս է հաւասար չափով մթերքներ:

Դա — «թերութիւն է» — ասում է Մարքսը, բայց այդ անխուսափելի է կոմմունիզմի առաջին Փազում, որովհետեւ առանց ուստոպիզմի մէջ ընկնելու չի կարելի կարծել, որ կապիտալիզմը խորտակելուց յետոյ մարդկի միանգամից կըսովորեն աշխատել հասարակութեան համար առանց որեւէ իրաւական նորմերի: Այդպիսի փոփոխման համար տնտեսական նախապայմաններ չի էլ տալիս կապիտալիզմի վերացումը մի անգամից:

Իսկ ուրիշ նորմեր, բացի «բուրժուական իրաւունքից», չեւ այդ չափով էլ անհրաժեշտ է մնում պետութիւնը, որն արտադրութեան միջոցների ընդհանրական սեփականութիւնը պահպանելով պահպանելու է նաեւ աշխատանքի եւ մթերքների բաժանման հաւասարութիւնը:

Պետութիւնը մահանում է որ չափով որ արդէն կապիտալիստ չկայ, արդէն գասակարգ չկայ եւ դրա համար չի կարելի ճնշել որեւէ դասակարգ:

Բայց պետութիւնը գեռեւս բոլորովին չի մահացել, որովհետեւ պահանջում է դեռ «բուրժուական իրաւունքը» որ սրբագործում է փաստացի անհաւասարութիւնը: Պետութեան լիակատար մահացման համար հարկաւոր է լիակատար կոմմունիզմ:

4. Կոմմունիստական հասարակութեան բարձրագոյն ֆազը:

Մարքսը չարունակում է.

...«Կոմմունիստական հասարակութեան բարձրագոյն ֆազում երբ կըվերանայ հպատակումը աշխատանքի բաժանման, որը ստրկացնում է մարդուն, երբ դրա հետ միասին կըվերանայ եւ մտադուն, երբ դրա հետ միասին կըվերանայ ու մտադունը, որ ու ֆիզիքական աշխատանքի ներհակութիւնը. երբ աշխատանքը կըրդաղարի լոկ ապրուստի միջոց կինելուց եւ ինքը կըդառնայ կեանքի առաջին պահանջ, երբ անհպատների ամենակողմանի զարգացման հետ միասին կածեն եւ արտադրական ոյժերը եւ լիառատ հեղեղի նման կըհոսեն հասարակական հարստութեան բոլոր աղբերները — միայն այն ժամանակ կարելի կըլինի յաղթահարել բուրժուական իրաւունքի նեղ հորիզոնը եւ հասարակութիւնը կարող կըլինի գրել իր դրօմի վրայ՝ «ամեն ոք ըստ իր ընդունակութիւնների եւ ամեն ոքին ըստ իր կարիքի»:

Այժմ միայն մենք կարող ենք գնահատել թէ որքան արդարացի էին ինգելսի նկատողութիւնները, երբ նա անխնայ կերպով ծալլում էր իբր անհեթեթութիւն «պետութիւն» եւ «աղատութիւն» բառերի միացումը: Քանի կայ պետութիւն՝ չկայ աղատութիւն: Երբ կլինի աղատութիւն — չի լինի պետութիւն:

Պետութեան լիակատար մահացման տնտեսական հիմքը հանդիսանում է կոմմունիզմի այնպիսի բարձր զարգացումը, որի ժամանակ անհետանում է ֆիզիքական եւ մըտաւոր աշխատանքի ներհակութիւնը, հետեւապէս անհետանում է ժամանակից հասարակական անհաւասարութեան կարեւորագոյն աղբերներից մինը, որը չի կարող վերացւել միմիայն արտադրական միջոցների հա-

մայնացմամբ, միմիայն կապիտալիստների էքսպրոպր-
լիացիայով:

Այդ էքսպրոպրացիան հնարաւոր կըդարձնէ արտա-
դրական ոյժերի հսկայական զարգացումը: Եւ տեսնելով
թէ ինչպէս այժմ իսկ կապիտալիզմը անհաւատալի չա-
փով կասեցնում է այդ զարգացումը, թէ ինչքան շատ
բան կարելի կըլինէր առաջ մղել տեխնիկայի մէջ այժմ
արդէն կատարած նւաճումների բազիսի վրայ հիմնելով՝
մենք իրաւունք ունենք լիակատար համոզմամբ ասելու,
որ կապիտալիստների էքսպրոպրացիան անխուսափե-
լիօրէն տանելու է դէպի մարդկային հասարակութեան
արտադրական ոյժերի հսկայական զարգացումը: Բայց
մենք չըգիտենք եւ չենք կարող գիտենալ, թէ ո՞րքան ա-
րագ պիտի առաջ դնայ այդ զարգացումը, թէ որքան չուտ
նա կըլիզէ աշխատանքի բաժանումն ու վերջ կըդնէ մը-
տաւոր ու Փիզիքական աշխատանքի ներհակութեան, թէ
երբ նա «աշխատանքը կենսական առաջին պահանջ» կը-
դարձնէ:

Ուստի մենք իրաւունք ունենք խօսելու լոկ պետու-
թեան անխուսափելի մահացման մասին, շեշտելով որ
այդ պրոցեսսի երկարատեւութիւնը, նրա կախումը կոմ-
մունիզմի բարձրագոյն ֆազի զարգացումից եւ թողնելով
միանգամայն բաց մահացման կոնկրետ ձևերի որոշ
ժամանակի խնդիրը, որովհետեւ այդպիսի խնդիրները
լուծելու համար նիւթ չըկայ:

Գետութիւնը կըկարողանայ լիովին մահանալ այն
ժամանակ, երբ հասարակութիւնը կիրագործէ հետեւեալ
կանոնը՝ «ամեն ոք ըստ իր ընդունակութիւնների եւ ա-
մեն ոքին ըստ իր կարիքի», այսինքն՝ երբ մարդիկ այն
աստիճան կըսովորեն համայնակեցութեան հիմնական
կանոնները կատարելու եւ երբ նրանց աշխատանքն այն-

քան արտադրողական կըլինի, որ նրանք կամաւոր կեր-
պով կսկսեն աշխատել ըստ իրենց կարողութեան, ըստ
իրենց ընդունակութիւնների: «Բուրժուական իրաւուն-
թիւնց նեղ հորիզոնը, որ հարկադրում է Շայլոկի չոր սըր-
փի» նեղ հորիզոնը, որ հարկադրում է Շայլոկի չոր սըր-
տութեամբ հաշիւ անել, որ չըլինի թէ ուրիշից մի կէս
ժամ աւելի աշխատես, չըլինի թէ ուրիշից մի քիչ պա-
կաս վճար ստանաս, այդ նեղ հորիզոնից անցած կըլինեն
մարդիկ: Մթերքների բաշխումն այն ժամանակ հասա-
րակութեան կողմից նորմի ենթարկւած չի լինի, նորմի
ենթարկւած չի լինի ամեն մէկի ստանալիք մթերքի քա-
նակը: Ամեն ոք վերցնելիս կըլինի ազատ կերպով ըստ իր
պահանջի:

Բուրժուական տեսակէտով շատ հեշտ է ամեն մի
այդպիսի հասարակակարգ «զուտ ուսուպիա» յայտարա-
րել եւ չարախնդաց հեղնել թէ սոցիալիստները խոստա-
նում են, որ ամեն մարդ առանց իր աշխատանքը որեւէ
կուրոլի ենթարկելու կատանայ այնքան արիթմել, աւ-
տոմորիլ, պիտան եւ այլն, որքան որ կուզենայ: Այդ չար-
միտ հեղնանքով է, որ այժմ բուրժուական գիտնական-
ների մէծ մասը եօլա է գնում և գրանով նա ցոյց է տալիս
ոչ միայն իր տգիտութիւնը, այլ եւ իր շահագիտական
պաշտպանութիւնը, կապիտալիստական կարգերի:

Տգիտութիւնը — որովհետեւ ոչ մի սոցիալիստի
մտքով էլ չի անցնում «խոստանալ» որ կոմմունիզմի
զարգացման բարձրագոյն ֆազը կըգայ եւ մէծ սոցիա-
լիստների նախատեսութիւնը, որ նա դարձու է — ենթա-
գրում է աշխատանքի ոչ այժմեան արտադրութիւնը եւ
ոչ այժմեան քաղքենուն, որը Պոմեալովսկու բուր-
ժուակաների նման ընդունակ է միայն հասարակական հա-
րստաութեան պահեստները փչացնել եւ անկարելի բաներ
պահանջել:

Մինչ այն ժամանակը, երբ կըգայ կոմմունիզմի քարձրագոյն Փաղը, սոցիալիստները պահանջում են, որ հասարակութիւնն ու պետութիւնը ամենախիստ կոնտրոլի ենթարկեն աշխատանքի եւ սպառման չափը։ Միայն թէ այդ կոնտրոլը կապիտալիստների էքսպրոպրիացիայից է սկսւելու, սկսւելու է նրանից, որ կապիտալիստները կոնտրոլի ենթարկեն բանուրների կողմից եւ այդ կոնտրոլը իրականացնելու է ոչ թէ չինովնիկների պետութիւնը, այլ վիճած քանուրների պետութիւնը։ Չերնովների եւ նրանց պոչը կազմող Ծերեթելիների բուրժուական լոգէոլոգների կապիտալիզմի շահասիրական պաշտպանութիւնը կայանում է հէնց նրանում, որ նրանք խօսք ու վէճ բարձրացնելով հեռաւոր ապագայի մասին, դրանով ուզում են կեղծաւոր կերպով վոխարինել այսօրայ քաղաքականութեան Հերթական խնդիրը, այն է՝ կապիտալիստների էքսպրոպրիացիան, բոլոր քաղաքացիներին մի խոչըր «սինդիկատի» այսինքն՝ ողջ պետութեան բանուրներ ու ծառայողներ դարձնելը եւ այդ ողջ սինդիկատի բոլոր աշխատանքը իրապէս գեմակրատիկ պետութեան, այսինքն Քանուրական ու Զինուրական Դեպուտատների պետութեան հաղատակեցնելը։

Հստ էութեան, երբ գիտուն պրոֆեսուրը իսկ նրա յետքից քաղքենին ու սրա յետքից Ծերեթելիներն ու Չերնովները, խօսում են բոլեւիկների անմիտ ուտոպիաների մասին, նրանց դեմազողական խոստումների մասին, սոցիալիզմ «մտցնելու» անհնարութեան մասին, նրանք աչքի առաջ ունեն հէնց կոմմունիզմի բարձրագոյն Փաղը, որի «մտցնելու» մասին ոչ ոք, ոչ միայն խօսում չի տւել, այլեւ մտքովն էլ չի անցկացրել, որովհետեւ «մտցնել» այն առհասարակ անհնար է։

Այսուեղ մենք գալիս ենք հասնում այն խնդրին թէ որպիսի տարբերութիւն կայ գիտական տեսակէտով սուցիալիզմի եւ կոմմունիզմի մէջ, այն խնդրին, որը չօշացիւ է էնգելսը իր «սոցիալ-դեմոկրատ» ամսան սիալ լինելուն վերաբերող վերն առաջ բերած գատողութեան մէջ։ Կոմմունիզմի ստորին եւ բարձրագոյն Փաղերի մինչ է կոմմունիզմի ստորին եւ բարձրագոյն Փաղերի մինչ։ Կոմմունիզմի ստորին բարձրագոյն ամսական տեսակէտոց աջն եղած տարբերութիւնը քաղաքական տեսակէտոց ապագայում երեւի ահազին կըլինի, բայց այժմ կապի-պագայում երեւի ահազին կըլինէր ընդունել այն եւ տալիզմի շրջանում ծիծաղելի կըլինէր ընդունել այն եւ տալիզմի մզել կարող են գուցէ առանձին անարխիսաներ (եթէ անարխիսաների շարքերում դեռ եւս մնացել են մարդիկ, որոնք ոչ մի բան չեն սովորել կրապոտկինի, Գրավի, Կորնելիսանի եւ անարխիզմի միւս «աստունի, զերի» «պլեխսանովեան» կերպարանափոխութից յետոյ, երբ նրանք սոցիալ շովինիստ գարձան, դարձան անար-երը նրանք սոցիալ շովինիստ գարձան, դարձան անար-խալիքամատականներ, ինչպէս ասել է դեռ պատիւը պահպանած սակաւաթիւ անարխիսաներից մինը, (Գէն)։

Սակայն սոցիալիզմի եւ կոմմունիզմի գիտական տարբերութիւնը պարզ է։ Այն, ինչ սովորաբար սոցիալիզմ են անւանում, Մարքսը կոչել է կոմմունիստական լավարակութեան «առաջին» կամ ստորին Փաղ։ Որ չափով որ արտադրութեան միջոցները ընդհանուրի սեփականութիւն են դառնում, այն չափով կոմմունիզմ բառը կարելի է գործածել այսուեղ եւս միայն թէ չըպէտք է կարելի է գործածել այսուեղ եւս միայն թէ չըպէտք է կարելի է գործածել այսուեղ կոմմունիզմ չէ։ Մարքսի լուսաբանութիւնների մեծ նշանակութիւնը կայանում է նրանում, որ նա այսուեղ եւս գործադրում է մատերիալիստական զիալեկտիկան, զարգացման ուսմունքը, դեմուկ կոմմունիզմը իրեւ կապիտալիզմից զարգացող մի բան։ Սիսոլաստիկ-հնարովի, թխած բնորսչումների եւ բառերի մասին անպառուղ վէճ վարելու փոխարէն (ի՞նչ

է սոցիալիզմը, ի՞նչ է կոմմունիզմը) Մարքսը անալիզն է տալիս այն բանի, որ կարելի է անտանել կոմմունիզմի տնտեսական հասունութեան աստիճաններ :

Իր առաջին Փաղում, առաջին աստիճանում, կոմմունիզմը գեռ եւս չի կարող տնտեսական ախակէտից կատարելապէս հասուն լինել, լիովին ազատ լինել կապիտալիզմի հետքերից ու տրադիցիաներից : Այսուեղից է առաջ գալիս այն հետաքրքրի երեւոյթը, որ կոմմունիզմի առաջին շրջանում պահպանում է «քուրժուական իրաւունքի նեղ հորիզոնը» : Բուրժուական իրաւունքը բապանան, մթերքների բաշխման նկատմամբ ենթագրում է իհարկէ անխուսափելի կերպով եւ բուրժուական պետութիւն, որովհետեւ իրաւունքը ոչինչ է, եթէ չըկայ այն ապարատը, որը կարող է հարկադրել, որ այդ իրաւունքի նորմերը կատարեն :

Դուրս է գալիս որ կոմմունիզմի շրջանում որոշ ժամանակի ընթացքում մնում է ոչ միայն բուրժուական իրաւունքը, այլ նոյնիսկ եւ բուրժուական պետութիւնը, բայց առանց բուրժուազիայի :

Դա կարող է թւալ պարագուս կամ մտքի դիալեկտիկ խաղ, որում յաճախ մեղագրում են մարքսիզմը մարդիկ, որոնք ոչ մի ջանք չեն թափել որ ուսումնասիրեն նրա չափից դուրս խոր բովանդակութիւնը :

Իսկ իրօք, հնի մնացորդները նորի մէջ կեանքը ցուցահանում է մեր առաջ եւ ամեն մի քայլափոխում թէ՝ բնութեան ծոցում, թէ՝ հասարակութեան : Եւ Մարքսը քմայական կերպով չէ որ «բուրժուական» իրաւունքի մի կտոր մտցրել է կոմմունիզմի մէջ : Նա վերցրել է այն, ինչ տնտեսապէս և քաղաքականապէս անխուսափելի է մի հասարակութեան մէջ որը դուրս է գալիս կապիտալիզմի ծոցից :

Դեմոկրատիան ահագին նշանակութիւ ունի բանւոր դասակարգն իր ազատագրութեան համար կապիտալիստ-ների դէմ մղած պայքարի համար : Բայց դեմոկրատիան ներաւ մի սահման չէ, որն անցնել անհնար է, այլ ֆէոդալիզմից դէպի կապիտալիզմ եւ կապիտալիզմից դէպի կոմմունիզմ տանող էտապներից է միայն :

Դեմոկրատիա նշանակում է հաւասարութիւն : Հասկանալի է թէ ինչ մեծ նշանակութիւն ունի պրոլետարիատի պայքարը յանուն հաւասարութեան եւ հաւասարութեան լոգունգը — եթէ ուղիղ հասկանալու լինենք այն իրք դասակարգերի ոչնչացում : Բայց դեմոկրատիան նշանակում է լոկ ձեւական հաւասարութիւն : Եւ հէնց որ իրականանայ հասարակութեան բոլոր անդամների հաւասարութիւնը արտադրական միջոցներին տիրելու այսինքն՝ իրականանայ աշխատանքի հաւասարութիւն, աշխատավարձի հաւասարութիւն, — մարդկութեան առջեւ անխուսափելի կերպով կանգնելու է աւելի առաջ գնալու հարցը . ձեւական հաւասարութիւնից փաստացի հաւասարութեանն անցնելու խնդիրը այսինքն, իրականացնելու այն կանոնը ըստ որի՝ «ամեն մարդ աշխատում է ըստ իր ընդունակութեան եւ ստանում ըստ իր կարիքի» : Թէ ինչ էտապներով, ինչ գործնական միջոցներով կըհասնի մարդկութիւնն այդ բարձրագոյն նպատակին մենք չըգիտենք եւ գիտենեալ չենք կարող : Բայց կարեւոր է պարզել մեզ համար թէ ո՞քան անսահման կերպով կեղծ է սովորական բուրժուական պատկերացումը, որ իրը թէ սոցիալիզմը մի ինչ որ մեռած, քարացած, մի անդամ ընդ միշտ տրւած բան է, մինչդեռ միայն սոցիալիզմից է որ սկսելու է արագ, իսկական, իրօք մասսայական, բնակչութեան մեծամասնութեան իսկ ակա եւ ողջ բնակչութեան մասնակցութիւնը կապիտալիզմի ծոցից :

թեամբ շարժումը դէպի առաջ հասարակական եւ ան-
հատական կեանքում :

Դեմոկրատիան պետութեան ձեւ է, նրա տարրեր
տեսակներից մէկը : Եւ հետեւապէս նա ինչպէս եւ ամեն
պետութիւն հանդիսանում է կազմակերպւած,
սխատեմատիկ բռնութեան գործադրութիւն մարդ-
կանց վրայ : Դա մի կողմից : Բայց միւս կող-
մից նշանակում է քաղաքացիների հաւասարու-
թեան ձեւական խոստովանցութիւն, խոստովանութիւն
որ քաղաքացիները հաւասար իրաւունք ունեն պետու-
թեան կազմակերպման եւ կառավարութեան նկատմամբ :
Իսկ դա իր կարգին կապւած է այն բանի հետ, որ դե-
մոկրատիան իր զարգացման որոշ աստիճանի վրայ նախ
համախմբում է կապիտալիզմի դէմ յեղափոխական դա-
ռակարգը — պրոլետարիատը եւ նրան հնարաւորութիւն
է տալիս կոտրել, ջարդ ու փշուր անել, ջնջել, ընդմիշտ
բուրժուական, թէկուզ եւ հանրապետական բուրժուա-
կան պետական մեքենան, մշտական գորքը, ոստիկանու-
թիւնը, չինովնիկութիւնը, փոխարինել նրանց աւելի դե-
մոկրատիկ, բայց այնուամենայնիւ դեռ պետական մե-
քենայով — զինւած բանւորական մասսայի ձեւով, որին
փոխարինում է ողջ ժողովրդի մասնակցութիւնը միլի-
ցիային :

Այսուեղ՝ «քանակը որակ է գառնում» : — Դեմոկրա-
տիզմի այդ աստիճանը կապւած է բուրժուական հասա-
րակութեան շրջանակներից գուրս զալու եւ սոցիալիստա-
կան վերացնութիւն սկսելու հետ : Եթէ յիրաւի որ բո-
լորը մասնակցում են պետութիւնը կառավարելու գոր-
ծում, ապա կապիտալիզմը չի կարող արդէն դիմանալ:
Եւ կապիտալիզմի զարգացումն իր հերթին նախապայման-
ներ է ստեղծում, որպէս զի «բոլորը» կարողանան մաս-

նակից լինել պետական կառավարչութեան : Այդ նախա-
պայմաններից մինն է ընդհանուր գրագիտութիւնը, որ
իրականացրել են մի շարք ամենաառաջաւոր կապիտալիս-
տական երկրներ, ապա միլիոնաւոր բանւորների «վար-
ժեցումն ու դիսցիպլինի ենթարկելը» պոստի, երկաթու-
ղիների, խոշոր ֆաբրիկների, խոշոր առեւտրի, բանկա-
յին գործի եւ այլ համայնականացրած ապարատի մի-
ջոցով :

Այդպիսի տնտեսական նախապայմաններ ունենալով
միանգամայն հնարաւոր է անմիջապէս, կապիտալիստ-
ներին ու չինովնիկներին ոչնչացնել ու արտադրութեան ու
բաշխման վրայ կոնտրոլ հաստատելու աշխատանքի ու
մթերքների հաշվի առնելու գործում փոխարինել նրանց
զինւած բանւորներով, ամբողջ զինւած ժողովրդով :
(Կոնտրոլի ու հաշվի տակ դնելու հարցը չըպէտք է շփո-
թել ինժեներների, ազրոնումների եւայլն գիտականօրէն
կրթւած պերսոնալի խնդրի հետ : Այդ պարոնները այսօր
աշխատում են հպատակւելով կապիտալիստներին — վա-
զըն աւելի լաւ կաշխատեն հպատակւելով զինւած բան-
ւորներին) :

Հաշվի տակ դնել եւ կոնտրոլի ենթարկել — ահա թէ
զի իսպառապէս ինչ է պէտք որ հարթի եւ կանոնաւոր
գործի կոմմոնիտական հասարակութեան առաջին Փազը :
Այսպէս բոլոր քաղաքացիները դառնում են պետութեան
վարձու ծառայողներ, պետութեան, որը կազմում են
զինւած բանւորները : Բոլոր քաղաքացիները դառնում են
մի համաժողովրդական պետական «օինդիկատի» բանւոր
ծառայողներ : Եւ բանն այն է, որ նրանք հաւասար չա-
փով աշխատեն, ճշիր պահպանեն աշխատանքի չափը եւ
հաւասար վարձ ստանան : Այդ հաշվի տակ դնելը՝ կոնտ-
րոլի ենթարկելը կապիտալիզմը ծայր աստիճան պար-
զացման է հասցըել, դարձրել է ամենահասարակ, սմեն

մի գրադէտ մարդու մատչելի հսկողութեան ու գրի առնելու օպերացիա, որի համար հարկաւոր է իմանալ լոկ թւարանութեան չըս գործողութիւնները եւ համապատասխան անդորրագրեր տալը¹⁾:

Երբոք ժողովրդի մեծամասնութիւնը կոկսի ամենուրեք այդպէս ամեն ինչ հաշւի տակ դնել եւ կապիտալիստներին (որոնք այժմ ծառայողներ են դարձել) ու պարոն ինտելիցիններին, որ դեռ պահպանում են կապիտալիստական սովորութիւնները, այն ժամանակ այդ կոնտրոլ իրօք կը զառնայ ունիվերսալ, ընդհանրական, համաժողովրդական, այն ժամանակ նրանից անկարելի կը լինի խուսափիլ, նրանից փախչելու տեղ չի լինի»:

Ողջ հասարակութիւնը կը լինի մի գրասենեակ, մի ֆաբրիկ աշխատանքի եւ վարձի հաւասարութեամբ:

Բայց այդ Փարբիկի «գիսցիպիլնը», որը կապիտալիստներին յաղթահարած եւ հարստահարենքին խորտակած պըոլետարիատը կը տարածի ողջ հասարակութեան վրայ, ոչ մի կերպ չի կարող լինել ոչ մեր իդէալը, ոչ մեր վերջնական նպատակը, այլ նա միմիայն մի աստիճան է, որ անհամառեշտ է հասարակութիւնը կապիտալիստական հարստահարութեան զազրութիւնից ու զարչելիութիւնից մաքրելու եւ յետագայ առաջադիմութեան համար: Սկսած այն վայրկեանից, երբ հասարակութեան բոլոր անդամները կամ գոնէ նրա մեծամասնութիւնը ինքը կը սովորի կառավարել պետութիւնը եւ այդ գործն իր ձեռքը կառնի, երբ նա «կարդի կը բերի» այդ գործն ու

1) Երբոք պետութիւնն իր մեծ մասով այդպիսի Փունկցիաների է փխուում, բանուրների կողմից հաւի եւ կօնտրուի ենթարկելու գործ է դառնում, այն ժամանակ հա դադարում է «քաղաքական պետութիւն լինելուց», այն ժամանակ «հասարակական Փաթէցիաները բաղականից հասարակ վարչական Փունկցիաների են փխուում»: (Համեմատ վերը զլ. IV 2 էնգելսի անբխիստների հետ մզած պունիկայի մասին):

կոնտրոլ կը հաստատի չնչին փոքրամասնութիւն կազմող կապիտալիստների վրայ, այն պարոնների վրայ, որոնք ուզում են իրենց կապիտալիստական սովորոյթները պահպանել բանուրների վրայ որոնց խորապէս անբարոյականցը է կապիտալիկմը և ահա այդ վայրկեանից սկսում է անհետանալ առհասարակ կառավարելու անհրաժեշտութիւնը: Որքան լիակատար է գեմոկրատիան, այնքան մօտ է այն ժամը, երբ նա անպէտք է դառնում: Որքան աւելի գեմկորատիկ է «պետութիւնը», որը բազկացած է զինւած բանուրներից եւ որը «արդէն պետութիւն չէ բառի բուն իմաստով», այնքան արագ է սկսում մահանալ ամեն մի պետութիւն:

Որովհետեւ, երբ բոլորը կը սովորեն կառավարել եւ իրօք կսկսեն ինքնուրոյն կերպով կառավարել հասարակական արտադրութիւնը, ինքնուրոյն կերպով հաշւի տակ դնել ու կոնտրոլ ենթարկել ձրիակերներին, աղմաներին, խարերաներին եւ այլ «կապիտալիստների աւանդները պահպանողներին», այն ժամանակ այնքան գժւար կը լինի խուսափիլ այդ համաժողովրդական հաշւից ու կոնտրոլից, այնքան հաղւագիւն բացառութիւն կը դառնայ այն, այնքան արագ ու լուրջ պատժի կենթարկել (որովհետեւ զինւած բանուրները գործնական կեանքի մարդիկ են եւ ոչ թէ սենտիմենտալ ինտելիգենտներ եւ հազիւթէ նրանք թոյլ ասան իրենց հետ կատակ անելու) որ ամեն մի մարդկային համայնակեցութեան անբարդ, հիմնական կանոնները կատարելու անհրաժեշտութիւնը շատ շուտ սովորոյթ գառնայ:

Եւ այնժամ լայն բացւած կը լինի դուռ, կոմմունիստական հասարակութեան բարձրագոյն Փաղին անցնելու համար զբա հետ միաժամանակ եւ պետութեան կատարեալ մահացման համար:

Գ Լ Ո Ւ Խ VI.

ՄԱՐՔՍԻ ԶՄԻ ԳՌԵՀԿԱՑՈՒՄԸ ՕՊՊՈՐՏԻՒ-
ՆԻՍՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ :

Պետութեան ու սոցիալական յեղափոխութեան յարա-
մերութիւնների խնդիրը, խչպէս եւ առհասարակ յեղա-
փոխութեան խնդիրը շատ քիչ է զրազեցրել երկրորդ ին-
տերնացիոնալի (1889—1914) ամենաականաւոր թէորե-
տիկներին եւ պուրլիցիստներին։ Բայց երկրորդ ինտեր-
նացիոնալը 1914 թւին խորտակման հասցնող օպպորտիւ-
նիզմի աստիճանական աճման պրոցեսի մէջ ամենաբնո-
րոշն այն է, որ մինչեւ անդամ այն ժամանակ, երբ եկել
հասել, քիվ էին այդ հարցին, նրանք աշխատում էին նրա
կողքովն անցնել եւ նրան չէին նկատում։

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ պետութեան
եւ պրոլետարական յեղափոխութեան յարաբերութիւն-
ների խնդրից խուսափումից, այն խուսափումից, որը
ձեռնուու էր օպպորտիւնիզմի «համար եւ սնում էր նրան,
առաջ էկաւ մարքիզմի աղջատումն ու նրա կատարեալ
գուհկացումը։ այդ տխուր պրոցեսը դէթ համառոտակի
ընթրոշելու համար վերցնենք մարքիզմի ամենաականա-
ւոր թէորետիկներին — Պլէխանովին ու Կառոցկուն։

1. Պլէխանովի եւ անարխիստների պոլեմիկան։

Պլէխանովը անարխիզմի եւ սոցիալիզմի յարաբերու-
թեան խնդրին նուիրել է մի յատուկ բրոշիւր՝ «Անարխիզմ
և Սոցիալիզմ», որը լոյս է տեսել գերմաններէն 1894 թը-
ւին։ Պլէխանովը հմտօրէն կարողացել է այդ թեման քըն-
նել այնպէս, որ բոլորովին մի կողմ է թողել ամենա-
ակտուել, հրատապ եւ, անարխիզմի դէմ պայքարելիս,

քաղաքական տեսակէտից՝ ամենաէական խնդիրը, այն է
— յեղափոխութեան ու պետութեան յարաբերութեան
խնդիրը, առհասարակ պետութեան խնդիրը։ Նրա բրո-
շւրը կարելի է բաժանել երկու մասի։ Դրանցից մինը
զրական-պատմական մասն է ուր կայ գնահատելի նիւթ
Շտիլների, Պրուդոնի եւ այլոց իդէաների պատմութիւ-
նից, միւսը՝ Փիլիպտերական մասն է, ուր անձունի դա-
տողութիւններ են այն մասին, թէ շատ դժւար է անար-
խիստին բանդիտից զանազաննելը։

Թէմաների համազրութիւնը շատ զւարձալի է եւ շատ
բնորոշ Պլէխանովի՝ յեղափոխութեան նախօրեակին եւ
Ռուսաստանի յեղափոխական ցշանում ցոյց տւած ողջ
գործունէութեան համար։ Պլէխանովը 1905—1917 թւա-
կաններին իսկ այսպէս էլ ցոյց տւեց իրան՝ կիսադրոկո-
րինեօր, կիսաֆիլիստեր, որ քաղաքականութեան մէջ
զնում էր բուրժուազիայի պոչից բննած։

Մէնք արդէն տեսանք, որ Մարքսն ու Էնգելսը անար-
խիստների դէմ պոլեմիկա մղելով ամենայն խնամքով
պարզել են իրենց տեսակէտները պետութեան ու յեղափո-
խութեան յարաբերութեան խնդրի նկատմամբ։ Էնգելսը
1891 թւին, Մարքսի Գոթի ծրագրի քննադատութիւնը
հրատարակելիս դրում էր, «Մէնք (այսինքն՝ Էնգելսն ու
Մարքսը) այն ժամանակ Բակունինի եւ նրա անարխիստ-
ների հետ ամենաատաք պայքարի մէջ էինք ինտերնացիո-
նալի (առաջին) Հասդայի կոնդրեսից յետոյ հազիւ երկու
տարի անց»։

Անարխիստները հէնց Պարիզի կոմմունը ուզում էին
«իրենցը» յայտարարել, իրենց ուսմունքն արդարացնող
յայտարարել, մինչդեռ նրանք բոլորովին չէին ըմբռնել
կոմմունի զասերն ու Մարքսի կատարած անալիզը այդ
գասերի նկատմամբ։ Հարկաւո՞ր է արգեօք փշրել հին
պետական մեքենան եւ ինչո՞վ պէտք է փոխարինել նրան

— այդ մասին անարխիզմը չըտւեց ոչինչ որ գէթ մօտաւորապէս ճշմարտանման լինէր կոնկրետ քաղաքական իշն-դիրների վերաբերմամբ :

Սակայն «անարխիզմի» ու սոցիալիզմի» մասին խօսել և խուսափել պետութեան խնդրից, չընկատել մարքսիզմի ողջ զարգացումը մինչ կոմմունն ու կոմմունից յետոյ, կը նշանակէ ցած սահել զէպի օպպորտիւնիզմի գիրքը: Որովհետեւ օպպորտիւնիզմի համար իսկ որ ամենից աւել այն է հարկաւոր, որ մեր վերը առաջ բերած հարցը բը-նաւ չըդրւեն: Դա արդէն օպպորտիւնիզմի յաղթանակ է:

* Աչ մի դրականութեան մէջ կառւցկու երկերն այնքան չեն թարգմանւել, որքան ուսւաց դրականութեան մէջ: Չուր չէ, որ գերմանական սոցիալ-դեմոկրատներից ո-մանք կատակարանում են, թէ կառւցկուն աւելի շատ Ռուսաստանում են կարգում, քան թէ Գերմանիայում: (Փակագծի մէջ պէտք է ասենք, որ այդ կատակում շատ աւելի խոր սկասմական բովանդակութիւն կայ, քան կարծում է նա ով այդ կատակը մէջ տեղ է բերել: Դա այն է, որ սուս բանորները 1905 թւին չըտեսնաւծ չափերով պահանջ արտայայտելով աշխարհիս լաւագոյն սոցիալ-դե-մոկրատիայի լաւագոյն երկերի նկատմամբ եւ ստանալով արդ երկերի թարգմանութիւնների ու հաստարակութիւնների այնպիսի քանակ որ ուրիշ երկրներ չեն տեսել, դրանով իսկ արագացրած եղանակով մեր պրոլետարական շարժման մատադ հոդի վրայ փոխադրեցին հարեւան ա-ւելի առաջաւոր երկրի հսկայական փորձը):

Կառւցկին մեղանում, բացի իր տւած մարքսիզմի մատչելի շարադրութիւնից, յայտնի է առանձնապէս պո-լեմիկայով, որ նա մզել է օպպորտիւնիստների եւ նրանց գլուխն անցած Բերնշտայնի դէմ: Սակայն գրեթէ ան-յայտ է մի փաստ, որն անուշադիր չի կարելի թողնել

եթէ նպատակ ես զնում հետեւել, թէ ինչպէս է հասել կառւցկին այն աներեւակայելի կերպով անարդ շփոթ-մունքին եւ սոցիալ-շովինիզմի պաշտպանութեան, որը կատարւեց 1914—1915 թ. մեծադրոյն կրիզիսի ժամանակ: Իսկ դա այն փաստն է, որ կառւցկին իր ֆրանսական (Փո-րես, Միլերան) եւ գերմանական (Բերնշտայն) ամենա-ականաւոր օպպորտիւնիստների դէմ դուրս զայրւ նա-խօրեակին շատ խոշոր երերում ցոյց տւեց: Մարքսիստա-կան «Զ ա ր ե ա ն» (Արշալոյս), որը լոյս էր տեսնում Շտուտգարտում 1901—1902 թ. եւ յեղափոխական-պրո-լետարական տեսակէտներն էր պաշտպանում, հարկա-գրւած էր պոլեմիկա մզել կառւցկու դէմ, կառւչուկա-յին, կիսատիկ, երկմիտ, օպպորտիւնիստների նկատմամբ հաշտեցուցիչ անւանել նրա՝ 1900 թւին Պարիզում կայա-ցած միջազգային սոցիալիստական կոնգրեսում առա-ջադրւած ուեզուլիցիան: Գերմանական դրականութեան մէջ ապա գրւեցին նաև կառւցկու նամակները, որոնցից երեւում են նրա ոչ պակաս չափով երերումները նախ քան նա արշաւանք սկսեց Բերնշտայնի դէմ:

Սակայն անհամեմատ աւելի մեծ նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ իր օպպորտիւնիստների դէմ մզած պոլեմիկայում հարցի դրւածքում եւ քննութեան մէջ, մենք այժմ, երբ ուսումնասիրում ենք մարքսիզմի դէմ կառւցկու կողմից կատարած նորադոյն դաւաճանութեան պատմութիւնը, նկատում ենք սիստեմատիկ թեքում դէ-պի օպպորտիւնիզմը եւ հինգ պետութեան խնդրի նկատ-մամբ:

Վերցնենք կառւցկու օպպորտիւնիզմի դէմ ուղղւած առաջին խոշոր երկը, նրա «Բերնշտայնն ու սոցիալ-դե-մոկր. ծրագիրը» գիրքը: Կառւցկին մանրամասնորէն հեր-քում է Բերնշտայնին. աւկայն, մի բնորոշ բան:

Բերնշտայնը իր հերոսորատօրէն հոչակաւոր «սոցիալիզմի նախապայմաններում» մարքսիզմը «բլանկիզմում» է, մեղադրում (մի մեղադրանք, որ այն օրւանից հազար անգամ կրկնել են օպպորտինիստները եւ լիբերալ-բուրժուաները Ռուսաստանում՝ յեղափոխական մարքսիզմի ներկայիշների—բոլցեւիկների դէմ): Այդտեղ Բերնշտայնը յատկապէս կանգ է առնում Մարքսի «Քաղաքացիական կոլիւլ ֆրանսիայում» գրքի վրայ եւ փորձում է, — ինչպէս տեսանք շատ անյաջող — նոյնացնել Մարքսի և Պրուդոնի տեսակիշտները՝ Կոմմունի դասերի նկատմամբ: Բերնշտայնը յատուկ ուշադրութիւն է դարձնում Մարքսի այն եղակացումը որը նա ստորագծել է «Կոմմունիստական Մանիֆեստի» 1872 թւականի առաջարանում և որն ասում է, «բանւոր դասակարգը չի կարող պարզապէս իր ձեռքն առնել պատրաստի պետական մեքենան ու նրան բանացնել իր սեփական նպատակների համար»: Բերնշտայնին այս միտքն այնքան է «դուր եկել», որ նա ոչ պակաս քան երեք անգամ կրկնում է այն իր գըրքում, ամեն կերպ աղճատելով նրան ու օպպորտինիստական մեկնաբանութիւնների ենթարկելով:

Մարքսը, ինչպէս մենք տեսանք, ուզում է ասել, որ բանւոր դասակարգը պէտք է փշրէ, կոտրէ, ուղը ցնդեցնէ սրեցուց—պայթում, ինգելսի արտայայտութիւնն է) ողջ պետական մեքենան: Խոկ ըստ Բերնշտայնի այնպէս է դուրս գալիս, որ իբր թէ Մարքսը նախազգուշացնում է բանւոր դասակարգը չափից դուրս յեղափոխական քայլերից այն ժամանակ, երբ նրանք իշխանութիւնը խլելու մինեն:

Մարքսի մտքի աւելի կոպիտ ու այլանդակ աղճատում դժւար է երեւակայել:

Խոկ ի՞նչպէս վարւեց կառւցկին՝ Բերնշտայնիամբ մանրամասնօրէն հերքելիս:

Նա խուսափեց քննել մարքսիզմի օպպորտինիզմի կողմից կատարած աղճատումը այդ կէտում: Նա մէջ թերեց Մարքսի «Քաղաքացիական կուի» առաջաբանից ինցելսի մեր վերը յիշած խօսքերն ու ասաց, որ ըստ Մարքսի բանւոր դասակարգը չի կարող պարզ կերպով տիրանալ պատրաստի պետական մեքենային, բայց առասարակնա կարող է նրան տիրանալ եւ ուրիշ ոչինչ: Խոկ այն մասին, թէ Բերնշտայնը Մարքսին վերագրել է մի միտք, որը ուղղակի հակառակ է Մարքսի իրապէս ասածին, թէ Մարքսը 1852 թւից առաջ էր մղում իրեւ պրոլետարական յեղափոխութեան խնդիրների՝ «փշել» պետական մեքենան — ահա այդ մասին կառւցկին չի ասում եւ ոչ մի խօսք:

Եւ այնպէս դուրս եկաւ, որ մարքսիզմի եւ օպպորտինիզմի ամենաէական տարրերութիւնը պրոլետարական յեղափոխութեան խնդիրների նկատմամբ կառւցկին սւազեց ու կոկեց:

Պրոլետարական դիկտատուրայի պրոլեմի լուծումը, զրում էր կառւցկին Բերնշտայնի «դէմ», մենք ամենայն հանգստութեամբ կարող ենք ապազային թողնել (Գերմ. Հրատ. եր. 172):

Դա իրօք ոչ թէ պոլեմիկա է ընդդէմ Բերնշտայնի, այլ զիջում նրան, դիրքերի յանձնում օպպորտինիզմին, որովհետեւ օպպորտինիզմին առայժմ հարկաւոր չէ ուրիշ ոչինչ, բացի այն, որ պրոլետարական յեղափոխութեան անելիքների հիմնական հարցերը «ամենայն հանըստութեամբ թողնեն ապազային»:

Մարքսն ու ինգելսը 1852 թւականից սկսած մինչեւ 1891 թւականը — քառասուն տարի պրոլետարիատին ուսուցել են, որ նա պէտք է փշրի պետական մեքենան: Խոկ կառւցկին 1889 թւականին, այն ժամանակ, երբ օպպորտինիստները լիովին դաւաճանել են մարքսիզմին այդ կէտիւնիստները լիովին դաւաճանել են մարքսիզմին այդ կէ-

տում, այն հարցի տեղ թէ արդեօք պէտք է այդ մեքենան փշրել, գնում է փշրման կոնկրետ ձեւերի մասին եւ փշրկութիւն է վնասում այն «անվիճելի» (եւ անպտուղ) ֆիլմստերական ճշմարտութեան հովանու տակ՝ թէ կոնկրետ ձեւերը մենք առաջուց չենք կարող իմանալ:

Սար ու ձոր կայ Մարքսի ու Կառլի մէջ, եթէ համեմատելու լինենք նրանց վերաբերմունքը դէսի պրոլետարական կուսակցութեան անելիքը բանւոր դասակարգը սոցիալական յեղափոխութեան համար պատրաստելու նպատակով:

Վերցնենք Կառլի կու հետեւեալ, աւելի հասուն գըրւածքը, որը նոյնական խոչոր չափով նէիրւած է օպապորտինիզմի սիաները հերքելուն: Դա նրա «Սոցիալական յեղափոխութիւն» բրոշիւն է: Հեղինակն այստեղ վեր է առել իրեւ յատուկ թեմա «պրոլետարական» յեղափոխութեան եւ «պրոլետարական ուժիմի» խնդիրը: Հեղինակը շատ եւ վերին աստիճանի գնահատելի բան է տուել, բայց հէնց պետութեան խնդիրից խուսափել է: Իրոշիւրի մէջ ամեն տեղ խօսում է պետական իշխանութեան նւաճման մասին եւ ուրիշ ոչինչ, այսինքն ընդունւած է այնպիսի ձեւակերպում, որը զիջում է անում օպապորտինիստներին, որ չափով որ թոյլատրում է իշխանութեան նւաճում առանց պետական մեքենան փշրելու: Հէնց այն, ինչ «կոմմունիստական Մանիքեստում» Մարքսը 1872 թւին «Հնացած» է յայտարարել, Կառլի վերածնեցը նում է 1902 թւին:

Բրոշիւրի մէջ մի յատուկ պարագրաֆ նէիրւած է «սոցիալիստական յեղափոխութեան ձեւերին ու գէնքին»: Այստեղ խօսում է եւ մասսայական քաղաքական գործադուրի մասին, եւ քաղաքացիական կուի մասին, եւ «ժամանակակից խոչոր պետութեան ոյժի այնպիսի գործիքների մասին, որպիսիք են բիւրոկրատիան ու զօրքը», սա-

կայն այն մասին, թէ ինչ է ուսուցել բանւորներին Կոմմունը — այդ մասին եւ ոչ մի խօսք: Ակներեւ է որ ինգելսը զուր չէր, մանաւանդ գերմանական սոցիալիստներին, նախազգուշացնում «նախապաշտամած ակնածութիւնից» դէպի պետութիւնը:

Կառլի բանը այսպէս է շարադրում յաղթող՝ պրոլետարիատը «կիրականացնի գեմոկրատիկ ծրագիրը» եւ շարադրում է այդ ծրագրի պարագրաֆները: Այն մասին, թէ ինչ նոր բան է տւել 1871 թւականը, բուրժուական գեմոկրատիան պրոլետարական գեմոկրատիայով փոխարինելու խնդիրի նկատմամբ — եւ ոչ մի բառ: Կառլի իր զիմից ուաղ է անում այդ այսպիսի «ծանր ու մեծ» երեւող գուհկարանութեամբ:

«Ինքն ըստ ինքեան ակներեւ է, որ մենք տիրապետութեան չենք հասնի այժմեան կարգերի ժամանակ: Յեղափոխութիւնն ինքը ենթագրում է երկարատեւ ու խոր ակոսող մի պայքար, որը կը կարողանայ արդէն փոփոխել մեր այժմեան քաղաքական ու սոցիալական կազմը»:

Անկասկած դա «ինքն ըստ ինքեան ակներեւ է», ինչպէս եւ այն ճշմարտութիւնը, որը ձին դարի է ուսում եւ վոլգա գեաը կասպից ծովն է հոսում: Բայց ափառ որ «խոր ակոսող» պայքարի վերաբերեալ սնամէջ ու փրուն Փրազ արտասանելով աչքաթող է տրում յեղափոխական պրոլետարիատի համար այժմէական նշանակութիւն ունեցող այն հալցը, թէ ապա ինչո՞ւմն է կայանում նրա պետութեան նկատմամբ, գեմոկրատիայի նկատմամբ կատարած յեղափոխութեան «խորութիւնը», համեմատած նախկին ոչ պրոլետարական յեղափոխութիւնների հետ:

Զանցառու լինելով այդ խնդիրի նկատմամբ, Կառլին, իրօք այդ ամենաէական կէտում զիջում է անում օպորտինիզմին — խօսքով ահեղ պատերազմ յայտարա-

բելով նրան, երբ չեշտում է «յեղափոխութեան գաղափարի» նշանակութիւնը (արդեօք ինչ արժէք ունի այդ «գաղափարը, եթէ վախենում ես բանւորներին քարոզել յեղափոխութեան կոնկեա դադափարները») կամ ասում ամենից առաջ — յեղափոխական իդէալի՛զմ կամ յայտարարում, որ անգլիական բանւորներն այժմ «հազիւ թէ շատ աւելի մի բան են ներկայացնում իրենցից — քան մանրութուաներ»:

«Սոցիալիստական հասարակութեան մէջ — գրում է կառուցկին, — կարող են դոյութիւն ունենալ իրար կողքի... ձեռնարկութեանց ամենատարբեր ձեւեր, բիւրոկրատական(??), տրեգիւնիոնիստական, կոռպերատիւ անհատական»...

«Գոյութիւն ունեն, օրինակի համար, ձեռնարկութիւններ, որոնք չեն կարող եօլս դնալ առանց բիւրոկրատիկ(??) կազմակերպութեան — այդպէս են երկաթուղիները: Եյստեղ դեմոկրատիկ կազմակերպութիւնը կարող է հետեւեալ ձեւն ընդունել — բանւորներն ընտրում են գելեգատներ, որոնք կաղմում են պարլամենտի նման եւ այդ պարլամենտը կարգաւորում է աշխատանքն ու հըսկում բիւրոկրատական սպազմատի վրայ: Միւս ձեռնարկութիւնները կարելի է բանւորական միութիւնների վարչութեան տակ դնել ուրիշ ձեռնարկութիւններ կարելի է կազմակերպել կոռպերատիւ սկզբունքներով: (Բուռակարգմ. 1903 թ. Ժընեւի հրատ. եր. 148 եւ 115):

Այդ դատողութիւնը սիսալ է եւ մի քայլ դէպի յետ է տանում համեմատած այն բացատրութեան հետ, որ տեղ են Մարքսն ու Էնդելը 70-ական թւականներին կոմմունի գասերի օրինակի վրայ հիմնելով:

Երկաթուղիները ոչ մի բանով չեն տարբերում, իբր թէ անհրաժեշտ «բիւրոկրատիկ» կազմակերպութեան տեսակէտից, համեմատած միւս առհասարակ խոչը մերե-

նայական ինդուստրիի ձեռնարկութիւնների հետ, համեմատած ամեն մի Փարբիկի, խոչը մագագինի, խոչը կապիտալիստական գիւղատնտեսական ձեռնարկութիւնների մէջ տեխնիկան հրամայական է գարձնում ամենախիստ դիսցիպլին, ամենամեծ ճշտագահութիւն ամեն մէկի կողմից աշխատանքի իրեն յանձնւած աշխատանքի այս կամ այն բաժինը կատարելիս, հակառակ դէպօւմ սպառնալով ողջ գործը կանգնեցնել կամ մեխանիզմն ու մթերքները փճացնել: Ի հարկէ, որ բոլոր այդպիսի ձեռնարկութիւններում բանւորները պիտի «ընտրեն գելեգատներ, որոնք կը կազմեն պարլամենտի նման մի բան»:

Բայց բանն էլ հէնց այն է, որ այդ պարլամենտի նըման բանը» պարլամենտ չի լինի բուրժուական-պարլամենտական հաստատութիւնների իմաստով: Բանն էլ հէնց այն է, որ այդ «պարլամենտի նման բանը» միմիայն կարգեր համատաելով եւ «բիւրոկրատիկ ապարատի վարչութեան վրայ հսկելով չի զբաղւելու», ինչպէս որ երեւակայում է Կացկին, որի միտքը բուրժուական պարլամենտարիզմի շրջանակներից դուրս չի թեւակոխում: Սոցիալիստական հասարակութեան մէջ «պարլամենտի նըման բանը», որ կազմւած է լինելու բանւորական ներկայացուցիչներից, ի հարկէ կարգեր կը հաստատի եւ կը հսկի «ապարատի» վարչութեան վրայ, բայց այդ պարատը «բիւրոկրատիկ» չի լինի: Բանւորները իշխանութիւն նւաճելով կը վշտին բիւրոկրատիկ ապարատը, հիմնովին կը խորտակեն այն, նրանից քար քարի վրայ չեն թողնի կը փոխարինեն նրան նորով, որը կազմւած կը լինի նոյն բանւորներից ու ծառայողներից, որոնց բիւրոկրատ դառնալու դէմ իսկոյն ձեւք կառնեն այն միջոցները, որոնք մանրամասն քննել են Մարքսն ու Էնդելը՝—1) ամեն մի պաշտօնեայ կը լինի ոչ միայն ընտրովի,

այլ եւ ամեն ժամանակ փոխարինելի, (2) վարձը կը լինի ոչ աւելի բարձր, քան բանորի վարձը, (3) անմիջապէս կը դիմեն այն բանին, որ ամենքը կոնտրոլի եւ հսկողութեան Փունկցիաներ կատարեն, որ ամենքը ժամանակաւոր կերպով «բիւրոկրատ» լինեն եւ որպէս զի այդպիսով ոչ ոք ըլկարողանայ «բիւրոկրատ» դառնալ:

Կառուցկին ամենեւին մինչեւ վերջը չի ժառածել Մարքոսի հետեւեալ խօսքերի վրայ. «Կոմմունան ոչ թէ պարլամենտական, այլ աշխատող կողագորացիա էր, միաժամանակ եւ օրէնքներն ի կատար ածող»:

Կառուցկին բոլորովին չի ըմբռնել գեմոկրատիան (ոչ ժողովրդի համար) բիւրոկրատիզմի հետ (ժողովրդի դէմ) միացնող բուրժուական պարլամենտարիզմի եւ պրոլետարական գեմոկրատիզմի տարրերութիւնը, այն գեմոկրատիզմի, մինչեւ այնտեղ որն անմիջապէս միջոցներ ձեռք կառնի որ արմատահան անի բիւրոկրատիզմը եւ որը կարող կը լինի այդ միջոցները մինչեւ վերջը հասցնելը, մինչեւ բիւրոկրատիզմի կատարեալ ոչնչացումը, մինչեւ կատարեալ ժողովրդին ծառայող գեմոկրատիաներուծումը: Այսոեղ կառուցկին ցուցադրում է նոյն սնապաշտ ակնածութիւնը» դէպի պետութիւնը», «սնապաշտ հաւատը» դէպի բիւրոկրատիզմը:

Անցնենք այժմ կառուցկու օպպորտիւնիստների դէմ դրած վերջնին եւ լաւագոյն հեղինակութեանը, նրա «Իշխանութեան ուղին» բրոշիւրին: Այդ բրոշիւրը խոշոր առաջադիմութիւն է, որ չափով որ նրանում խօսում է ոչ թէ առհասարակ յեղափոխութեան ծրագրին մասին, ինչպէս 1891 թւին Բերնշտայնի դէմ գրւած բրոշիւրում, ոչ թէ սոցիալական յեղափոխութեան մասին, անկախ նրա դաստեան ժամկից, ինչպէս 1902 թւի «Սոցիալիստական յեղափոխութիւն» բրոշիւրի մէջ է, այլ այն կոնկրեա պայ-

մանների մասին, որոնք հարկադրում են մեզ ընդունել, որ «յեղափոխութեան ըրջանը» հասնում է:

Հեղինակը պարզորոշ մատնացոյց է անում դասակարգային հակասութիւնների առհասարակ սուր կերպարանք ընդունելը եւ իմպերիալիզմը, որն այդ կողմից մեծ դեր է կատարում: Արեւմտեան Երոպայի 1789—1871 թւականների «յեղափոխական» ըրջանից յետոյ 1905 թւից սկսում է նոյնպէսի մի ըրջան Արեւելքի համար: Համարում է նոյնպէսի մի ըրջան Արեւելքի համար: Համաշխարհային պատերազմը վրայ է համարում սպառնալից արագութեամբ: «Պրոլետարիատը այլեւս չի կարող խօսել վաղաժամ յեղափոխութեան մասին»: «Մենք մտել ենք արդէն յեղափոխական ըրջանը»: «Յեղափոխական ըրջանն սկսում է»:

Այս յայտարարութիւնները միանդամայն պարզ են: Կառուցկու այս բրոշիւրը պիտի չափանիշ ծառայէ այն բանի, թէ ինչ էր խոստանում լինել գերմանական սոցիալականի, լինչ էր խոստանում լինել գերմանական սպատերազմից առաջ եւ որքան ցած է գլորւել նա (նոյն թւում եւ կառուցկին) պատերազմի ծագման բովածին: «Այժմեան սիսուացիան», գրում էր կառուցկին յիշեալ բրոշիւրի մէջ, իր հետ բերում է այն վտանգը, որ մեզ (այսինքն գերմանական սոցիալ-գեմոկրատիային) հեշտ է աւելի չափաւոր համարել, քան թւում էր:

Առաւել եւս բնորոշ է, որ կառուցկին յեղափոխութեան արդէն սկսած ըրջանի մասին այդքան բացորոշ յայտարարութիւններ անելուց յետոյ նոյնիսկ այն բրոշիւրում, որն իր ինկ ասելով «քաղաքական յեղափոխութեան» ինդրի քննութեան է նւիրւած, գարձեալ միան-

գամայն անցնում է պետութեան խնդրի կողքով առանց այն քննելու:

Այդ զանցառումների, լոռութեան, խուսափումների գումարից ստացւեց անխուսափելի կերպով այն կատարեալ փոխանցումը դէպի օպազորտիւնիզմը, որի մասին մենք այժմ պիտի խօսենք:

Գերմանական սոցիալ-դեմոկրատիան յանձինս կառացկու, կարծես յայտարարում էր. Ես մնում եմ յեղափոխական տեսակէտների վրայ կանգնած (1899թ.): Ես մանաւանդ ընդունում եմ պրոլետարիատի սոցիալական յեղափոխութեան անխուսափելիութիւնը (1902թ.): Ես ընդունում եմ յեղափոխութիւնների նոր չքանի գալուստը (1909): Բայց այնուամենայնիւ ես յետ եմ գնում հակառակ այն բանի, ինչ ասել է Մարքսը դեռ 1852թւին, քանի որ հարցը վերաբերում է պրոլետարական յեղափոխութեան պետութեան նկատմամբ (1912թ.):

Ճիշտ այդպէս շիտակ դրւած էր հարցը Պաննեկուկի դէմ մզւած պոլեմիկայի ժամանակ:

3. Կառուցկու եւ Պաննեկուկի բանակիւք:

Կառուցկու դէմ բնակու սկսեց Պաննեկուկը իրրկ ձախ արմատական հոսանքի ներկայացուցիչներից մէկը, այն հոսանքի, որի շարքերում էին գտնուում Ռոզա Լիւֆսեմբուրգը, Կարլ Ռապեկը եւ ուրիշները եւ որի յեղափոխական տակտիկան պաշտպանելով համոզած էր, որ կառուցկին օպպորտիւնիզմի եւ մարքսիզմի մէջտեղում անսկզբունք կերպով երերուղ «կենտրոնի» դիրքն է անցընում: Այդ տեսակէտի ճշտութիւնը լիակատար կերպով ապացուցեց պատերազմը, երբ «կենտրոնի» հոսանքը (որ սիալ կերպով մարքսիզմ է կոչում) կամ «կառուցկիականութիւնը» լիովին ցոյց տւեց իրեն, իր ողջ զգւելի խեղճութեամբ:

«Մասսայական գործողութիւններն ու յեղափոխութիւնը» յօդւածում (Neue Zeit 1912, XXX, 2) շօշափելով պետութեան խնդիրը Պաննեկուկը բնորոշեց կառուցկու դիրքը իրրեւ «պասսի ուաղիկալիզմի» դիրք, «անկու գործունեայ սպասման թէորիայ»: Կառուցկին չի ուղղում նկատել յեղափոխութեան պրոցեսուը (Եր. 616): Խնդիրն այդ կերպ զնելով, պաննեկուկը մերձեցաւ այն խնդրին որ մէկ հետաքրքրում է, այսինքն՝ թէ ինչպէս պիտի վարւի պրոլետարական յեղափոխութիւնը պետութեան խնդրում:

«Պրոլետարիատի պայքարը, դրում էր նա, սոսկ պետական իշխանութեան համար մղող մի պայքար չէ, այլ մի պայքար ընդդէմ պետական իշխանութեան... պը րոլետարական յեղափոխութեան բովանդակութիւնը կազմում է պետութեան ոյժը կազմող գործիքների ոչընչացումը եւ նրանց դուրս վանումը (բառացի-արձակում Auflösung) պրոլետարիատի ոյժի գործիքների միջոցով... պայքարը դադարում է միայն այն ժամանակ, երբ իրը այդ պայքարի վերջնական հետեւանք առաջանում է պետական կազմակերպութեան կատարեալ ոչընչացումը: Մեծամասնութեան կազմակերպութիւնը իր առաւելութիւնը ցոյց է առլիս նրանով, որ ոչնչացնում է տիրող փոքրամասնութեան կազմակերպութիւնը (Եր. 548):

Այն ձեւակերպումը, որ տեև է իր միտքն արտայայտելիս Պաննեկուկը, շատ խոշոր թերութիւններ ունի, սակայն միտքը այնուամենայնիւ պարզ է եւ հետաքրքիր է թէ ինչպէս է հերքում այդ միտքը կառուցկին:

Մինչեւ այժմ, գրում էր նա, անարխիստների եւ սոցիալ-դեմոկրատների ներհակութիւնը կայանում է նըրանում, որ սոցիալ-դեմոկրատներն ուղղում էին պետա-

կան իշխանութիւնը զաւթել, իսկ անարխիստները՝ պետական իշխանութիւնը — խորտակել։ Պաննեկուկը ուղղում է ե՛ւ այն, ե՛ւ միւսը «(Եր. 724)»։ Եթէ Պաննեկուկի շարադրութիւնը այնքան էլ պարզ եւ կոնկրետ չէ (չենք խօսում այստեղ նրա յօդւածի միւս թերութիւնների մասին), որոնք կազ չունեն չօշափառ թեմայի հետ), ապա կառւցկին վերցնում է Պաննեկուկի գծած բանի ըսկը ունենքային էութիւնն ու հիմնական սկզբունքային հարցում միանդամայն թողնում է մարքսիզմի տեսակիցն ու կատարելապէս օպպորտիւնիզմի կողմն է անցնում։ Անարխիստների եւ սոցիալ-դեռևկրատների տարբերութիւնը նա միանդամայն սիմալ է բնորոշում եւ այդտեղ մարքսիզմը վերջնականապէս աղաւաղւած ու գոեւկացւած է։

Մարքսիզմի եւ անարխիստների տարբերութիւնը կայանում է նրանում, որ (1) մարքսիստներն իրենց նպատակ դնելով պետութեան կատարեալ ոչնչացումը, այդ նպատակն իրագործելի են համարում միայն այն ժամանակ, երբ սոցիալիստական յեղափոխութիւնը կը ոչնչացընէ դասակարգերը եւ երբ պետութեան ոչնչացումը հետեւանք կը լինի սոցիալիզմի հաստատման, որ տանում է դէպի պետութեան մահացում։ Իսկ անարխիստներն ուղում են անմիջապէս ոչնչացնել պետութիւնը, առանց հասկանալու այդ ոչնչացումն իրականացնելու պայմանները։ (2) Մարքսիստներն անհրաժեշտ են համարում, որ պրոլետարիատը, նւաճելով քաղաքական իշխանութիւնը, լիովին խորտակի հին պետական մեքենան եւ փոխարինի նրան նորով, որը բաղկացած պիտի լինի զինւած բանւորների կազմակերպութիւնից ըստ Կոմմունի տիպի, իսկ անարխիստները պաշտպանելով պետական մեքենայի խորտակումը, պարզ կերպով չեն պատ-

կերացնում, թէ ինչով պիտի փոխարինի այն պրոլետարիատը եւ ինչպէս պիտի օգտուի նա յեղափոխական իշխանութեամբ։ անարխիստները ժխտում են մինչեւ իսկ այն, որ յեղափոխական պրոլետարիատը պիտի օգտագործի պետական իշխանութիւնը, ժխտում են պրոլետարիատի յեղափոխական գիտառութիւնն էն, որ պրոլետարիատը պատրաստի յեղափոխութեան համար օգտագործելով այդ նպատակի համար ժամանակակից պետութիւնը, իսկ անարխիստներն այդ ժխտում են։

Ըստդէմ կառւցկու այս վէճում հէնց Պաննեկուկն է, որ հանդիսանում է մարքսիզմի ներկայիչ, որովհետեւ Մարքսն էր, որ ուսուցանում էր, թէ պրոլետարիատը շի կարող պարզապէս իր ձեռքն առնել պետական իշխանութիւն այն իմաստով, որ հին պետական ապարատը նոր ձեռք անցնի, այլ նա պիտի փշի, խորտակի այդ ապարատը, նորով փոխարինի այն։

Կառւցկին մարքսիզմից դէպի օպպորտիւնիզմ է գընում, բովհետեւ նրանում անհետանում է հէնց այդ պետական մեքենայի խորտակումը, որ միանդամայն անընդունելի է օպպորտիւնիստների համար եւ մնում է միեւլը, որի իմաստն այն է, որ պէտք է պարզապէս «մեծամասնութիւն» ձեռք բերել։

Իր կատարած մարքսիզմի աղճատումը քօղարկելու համար կառւցկին վարում է որպէս մի փոխասաց-դպիր։ Նա ցիտատ է առաջ բերում Մարքսից։ 1850 թւին Մարքսը գրում էր «ոյժը վճռական կերպով պետական իշխանութեան ձեռքում կենարունացնելու» անհրաժեշտութեան մասին։ Եւ կառւցկին յաղթական եղանակով հարց է տալիս թէ արգեօք չի^o կամենում Պաննեկուկը խորտակել «կենտրոնացումը»։

Այս արդէն պարզապէս մի Փոկուս է նման այն բանին, որ Բերնշտայնը նոյնացնում էր մարքիզմի եւ պը-րուղոնիզմի տեսակէտները Փեղերացիալիզմի նկատմամբ կենտրոնացման փոխարէն:

Կառուցկու առաջ բերած «ցիտատը» ոչ մի առնչութիւն չունի գէտի ներկայ ինդիբրը: Կենտրոնացում կարող է տեղի ունենալ թէ հին, թէ նոր պետական մեքենայի մէջ: Եթէ բանւորները կամովի միացնեն իրենց զինած ոյժերը — դա կըլինի կենտրոնացում, սակայն նա հիմնւած կըլինի պետական կենտրոնացած ապարատի «կատարեալ խորտակման» վրայ՝ մշտական գորքի, ոստիկանութեան, բիւրոկրատիայի խորտակման վրայ: Կառուցկին միանգամայն խարդախ է վարւում, զանցառութեան տալով Մարքսի եւ էնգելսի դատողութիւնները կոմմունի մասին եւ դուրս քաշելով մի ցիտատ, որը հարցին չի վերաբերւում:

... «Գուցէ Փաննեկուլը կամենում է ոչնչացնել չեռվովիկների պետական Փունկցիաները» — շարունակում է Կառուցկին: Բայց առանց չինովնիկների մենք չենք կարողանում եօլա գնալ նոյն իսկ կուսակցական ու պրո-ֆեսսիոնալ կազմակերպութիւնների մէջ — ուր մնաց թէ պետական վարչութեան մէջ: Մեր ծրագիրը պահանջում է ոչ թէ պետական չինովնիկների ոչնչացում, չինով-նիկների ընտրութիւն ժողովրդից ...

Խօսքն այժմ այն բանի մասին չէ, թէ ինչ ձեւ կըս-տանայ վարչութեան ապարատը «ապագայ պետութեան մէջ», այլ այն մասին թէ արդեօք ոչնչացնում է (բա-ռացի արձակում է auflost) մեր քաղաքական պայքարը պետական իշխանութիւնը, նախքան մենք այն նախած կը լինենք (նոտրզիբը Կառուցկունն է): Ո՞ր մենիստրութիւնն է, որ իր չինովնիկների հետ միասին կարելի կըլինէր

ոչնչացնել»: Մէկ մէկ թւում է այստեղ կառուցկին, լուսաւորութեան, արդարապատութեան, Փինանսների, զինւորական մինիստրութիւնները: Ոչ, այժմեան մինիստրութիւններից եւ ոչ մինը չի կարող վերացւել մեր կառավարութեան դէմ մզած քաղաքական պայքարով... Թիւրիմացութիւնից խուսափելու համար կրկնում եմ, որ խօսքն այստեղ այն մասին չէ, թէ ինչ ձեւ պիտի տայ «ապագայ պետութեան» յաղթական սոցիալ-դեմոկրատիան, այլ այն մասին է թէ ինչպէս է փոփոխում այժմեան պետութիւնը մեր օպպոզիցիան (եր. 725):

Սա բացարձակ աղճատում է: Պաննեկուլը հէնց յեղափոխութեան ինդիբրն է գնում: Դա պարզ կերպով ասւած է թէ նրա յօդւածի վերնազրում, թէ մէջ բերած կտորներում: Դրա վրայով Կառուցկին թոչում անցնում է օպպոզիցիայի ինդիբրն եւ իսկ որ յեղափոխական տէսակէտը փոխարինում է օպպորտիւնիստականով: Նրանում այսպէս է գուրս գալիս — այժմ օպպոզիցիա, իսկ իշխանութիւնը նախելուց յետոյ կըխօսենք առանձին: Յեղափոխութիւնը չանում է: Օպպորտիւնիստների ուղածն էլ հէնց այդ է:

Խօսքը ոչ թէ օպպոզիցիայի կամ առհասարակ քա-ղաքական պայքարի մասին է, այլ յատկապէս յեղափոխութեան մասին: Յեղափոխութիւնը այն է, որ պրոլետարիատը «վարչական ապարատը» եւ ողջ պետական ապարատը խորտակում է փոխարինելով այն նորով, ո-րը զինւած բանւորներից պիտի լինի բաղկացած: Կառուցկին «սնապաշտ ակնածանք» է ցոյց տալիս գէտի «մինիստրութիւնները», սակայն հարց է ծագում — թէ արդեօք ինչո՞ւ այդ մինիստրութիւնները չեն կարող փոխարինել, ասենք, մասնագէտների կոմիսարներով լիա-

կատար եւ ամենազօր իշխանութիւն վայելող Բանուրա-
կան եւ Զինուրական Խորհուրդներին կից :

Բանի էութիւնը բոլորովին այն չէ, թէ կըմնա՞ն
արդեօք «մինիստրութիւնները» թէ կըմնեն «մասնագէտ-
ների կոմիսուրաներ» կամ այլ հաստատութիւններ, այդ
ամենեւին կարեւոր չէ : Բանի էութիւնն այն է թէ արդ-
եօք պահպանում է հին պետական մեքենան (որը հա-
զարաւոր թելերով կապւած է բուրժուազիայի հետ եւ
ողջովին ոռուտինի ու քարացման ողով է տոգորւած) թէ՝
այդ մեքենան խորտակում է եւ փոխարինուում նորով :
Յեղափոխութիւնը ոչ թէ այն բանում է կայանալու որ
մի նոր դասակարգ պիտի հրամաններ արձակի, կառա-
վարի հին պետական մեքենայի օգնութեամբ, այլ այն
բանում, որ նա խորտակի այդ մեքենան եւ հրամաններ
արձակի, կառավարի նոր մեքենայի օգնութեամբ —
մարքսիզմի հիմնական միտքը կառուցկին աղաւաղում է
կամ թէ չէ բոլորովին չի ըմբռնել այն :

Նրա հարցը չինովնիկների մասին ակներեւ կերպով
ցոյց է տալիս, որ նա կոմմունի դասերը ու Մարքսի ուս-
մունքը չի ըմբռնել : Մենք մեր «կուսակցութեան եւ պը-
րոֆեսուիոնալ կազմակերպութիւնների մէջ էլ առանց
չինովնիկների հօլա չենք գնում»...

Մենք առանց չինովնիկների հօլա չենք գնում կա-
պիտակիզմի շրջանում, բուրժուազիայի տիրապետու-
թեան շրջանում : Պրոլետարիատը ճնշւած է, աշխատա-
ւոր մասսաները ստրկացւած են կապիտալիզմին : Կապի-
տալիզմի շրջանում դեմոկրատիզմը նեղ շրջանակի մէջ է
դրւած, սեղմւած է, խուղւած, այլանդակւած է վարձու-
ստրկութեան ողջ կարիքի, մասսայական չքաւրութեան
սարք ու կարգով : Դրա համար է եւ միմիայն դրա հա-
մար է, որ մեր քաղաքական ու պրոֆեսուիոնալ կազմա-

կերպութիւնների մէջ պաշտօնատար անձինք անբարոյա-
կանանում են (կամ աւելի ճիշտ ասած անբարոյականա-
նալու հակում ունեն) չնորհիւ կապիտալիզմի սարք ու
կարգի եւ հակում են ցոյց տալիս բիւրոկրատներ դառ-
նալու այսինքն՝ մասսաներից կտրւած, մասսաներից վեր
կանդնած, մենաշնորհւած անձեր դառնալու :

Բիւրոկարտիզմի կութիւնն այդ է եւ քանի զեռ է խ-
պրոպրիացիայի չեն ենթարկել կապիտալիստները, քա-
նի զեռ բուրժուազիան չի խորտակւած, անխուսափելի
է նոյն խև պրոլետարական պաշտօնեանների որոշ բիւ-
րոկրատացումը» :

Կառուցկու մօտ այսպէս է դուրս գալիս .— մնում են
ընտրւած պաշտօնեանները, ուրեմն սոցիալիզմի ժամա-
նակ մնում են չինովնիկները, մնում է բիւրոկրատիան :
Ահա չէնց այդ է որ սխալ է : Չէնց կոմմունի օրինակի
վրայ Մարքսը ցոյց է տեւ, որ սոցիալիզմի ժամանակ
պաշտօնեանները դադարում են «բիւրոկրատներ» ու «չի-
նովնիկներ» լինելուց, դադարում են, երբ պաշտօնեա-
ների ընտրականութեան հետ միասին մտցւում է նաեւ
նրանց փոխարինուումը — երբ եւ ուղենաս եւ ապա՝ երբ
նրանց վարձի չափը բանուրի վարձին հաւասարեցնելը եւ
երբ պարլամենտական հաստատութիւնները կը փոխարին-
ւեն «աշխատող», այսինքն օրէնքներ հրատարակող եւ
այդ օրէնքները ի կատար ածող հաստատութիւններով :

Իրօք կառուցկու ընդդէմ Պաննեկուկի առաջ բերած
ողջ արգումենտացիան եւ մանաւանդ նրա այն հոյակապ
արգումենտար, թէ մենք մեր կուսակցական ու պրոֆես-
ուսիոնալ կազմակերպութիւններում էլ հօլա չենք գնում ա-
ռանց չինովնիկների, ցոյց է տալիս, որ կառուցկին կըր-
կնում է այն արգումենտները՝ որ առհասարակ մարք-
սիզմի դէմ առաջ էր բերում Բերնշտայնը : «Սոցիալիզմի

նախապայմանները» ունեղատական գրքում Բերնշտայնը պայքար է մզում պրիմիտիվ դեմոկրատիայի գաղափարի դէմ, ընդդէմ այն բանի, որը նա «գոկտրինեօրական դեմոկրատիզմ է անտառում՝ իմպերատիւ մանդատներ, վարձ չըստացող պաշտօնեաները, անզօր կենտրոնական ներկայացուցչութիւնը եւ այլն։ Իրեւ պրիմիտիւ «գեմոկրատիզմի» անզօրութեան ապացոյց Բերնշտայնը մատնացոյց է անում անդիլիական տրեգ-իւնիոնների փորձը ըստ Վէրը ամուսինների մեկնաբանութեան։ Իր թէ իրենց 70 ամեայ զարգացման ընթացքում տրեգ-իւնիոնները, որ զարգանում էին «կատարելապէս ազատ» (գերմ. Հրատ. Եր. 137), եկան այն համոզման, որ պրիմիտիւ դեմոկրատիզմը պիտանի չէ եւ վոխարինեցին այն բիւրոկրատիզմի հետ միացած սովորական պարամենտարիզմով։

Իսկ իրօք տրեգ-իւնիոնները զարգացել են ոչ թէ կատարելապէս ազատ այլ կապիտալիստական կատարեալ ստրկութեան մէջ, որի միջոցին, հասկանալի է, չէր կարելի «եօլա գնալ» առանց մի չարք զիջումներ անելու տիրող չարութեան, անարգարութեան, չքաւորներին բարձրագոյն վարչական գործերից հեռացնե ու սկզբունքին։

Սոցիալիզմի շրջանում պրիմիտիւ «գեմոկրատիզմից» շատ բան կը կենդանանայ, որովհետեւ առաջին անդամ քաղաքակիրթ հասարակութիւնների կեանքում ազգաբընակչութեան մասսան կը բարձրանայ այն աստիճան, որ կը կարողանայ ի ն ֆ ն ո ւ ր ո յ ն կերպով մասնակցիլ ոչ միայն ձայնաւութեան եւ ընտրութիւններին, այլ եւ առօրեայ կառավարութեան գործում, սոցիալիզմի ժամանակ բոլորը կը կառավարեն հերթով եւ արագ կերպով կը նտելանան այն բանին, որ

ոչ ոք չըկառավարի։ Մարքսն իր հանձարեղ քննադատապէս կանալիսիկ մտքով տեսել է կոմմունի գործնական քայլերում այն յեղաշրջումը, որի առաջ երկիւլ են կը բում եւ որը չեն ուզում ընդունել օպպորտինիստները վախկուտութիւնից զրդած, բուրժուազիայի հետ անգանալի կերպով կապերը խզել չըկամենալու պատճառով եւ որը չեն ուզում նկատել անարխիստները կամ իրենց շտապութեան պատճառով կամ ընդհանրապէս մասսայական սոցիալական վերափոխումները գնահատելու անընդունակ լինելու պատճառով։ «Հին պետական մեքենան խորտակելու մասին մասձել անզամ հարկաւոր չէ, ուր մնաց թէ եօլա գնալ առանց մինիստրութիւնների եւ չինովնիկների» այսպէս է գտառում օպպորտիւնիստը, որ ամրողովին Փիլիստերութեամբ է տոգորւած եւ ըստ էութեան եւ ոչ միայն հաւատ չունի դէպի յեղափոխութիւնը, յեղափոխութեան ստեղծագործութիւնը, այլ մահացու կերպով վախենում է նրանից (ինչպէս որ մենչեւ մենչեւիկներն ու էսերներն են վախենում նրանից)։

Միմիայն հին պետական մեքենայի խորտակման մասին պէտք է մտածել, հարկ չըկայ նախկին պլութետարական յեղափոխութիւնների տամած կոնկրետ դասերի խորքը թափանցելու եւ անալիկ անել թէ ինչով եւ ինչպէս փոխարինել այն, ինչ խորտակում ես, այսպէս է դատում անարխիստը (իհարկէ անարխիստներից լաւագոյնը, եւ ոչ թէ այնպիսին, որը պ. կրապստկինների եւ ընկ. հետ բուրժուազիայի յետեւից է քաշ գալիս)։ Դրա համար էլ անարխիստի տակտիկը յուսահատութեան տակտիկ է, եւ ոչ թէ անխնայ-համարձակ եւ միեւնոյն ժամանակ մասսաների շարժման պրակտիկ պայմանները հաշւի առ-

նող եւ կոնկրետ խնդիրների վրայ յեղափոխական աշ-
խատանք թափող տակտիկ :

Մարզսն ուսուցանում է մեղ, որ Երկու սխալից էլ
խուսափենք : Նա ուսուցանում է, որ անձնուրաց կերպով
համարձակ լինենք հին պետական մեքենան խորտակելիս
եւ միեւնոյն ժամանակ հարցը կոնկրետ դնենք : Կոմմու-
նը մի քանի շարթւայ ընթացքում կարողացաւ սկիզբ դը-
նել նոր պրոլետարական պետական մեքենայի կառուց-
ման եւ այդպիսով անցկացնելով յիշեալ միջոցները՝ ա-
ռևացնելով գեմոկրատիզմն ու արմատահան անելով բիւ-
րոկրատիզմը : Արխութիւն սովորենք կոմմունարներից,
նկատենք նրանց ձեռնարկած գործնական քայլերում ուր-
ւագծումն այն միջոցների, որոնք գործնականօրէն ան-
հրաժեշտ եւ անմիջապէս իրազործելի եւ այն ժամանակ
այդ ուղիով գնալով մենք բիւրոկրատիզմի կատարեալ
ոչնչացմանը կըհասնենք :

Այդ խորտակման հնարաւորութիւնն ապահովւած է
նրանով, որ սոցիալիզմը կըկրծատի բանւորական օրը,
մասսաներին վեր կըբարձրացնի նոր կեանքի համար,
բնակչութեան միջամասնութիւնն այնպիսի պայմաննե-
րի մէջ կըդնի, որպէսզի ամենքը առանց խորութեան
հնարաւորութիւն ունենան «պետական Փունկցիաներ»
կատարելու : Իսկ դա կըտանի դէպի առհասարակ պե-
տութեան կատարեալ մահացումը : Ամեն մի գործադուլի
խնդիրը, շարունակում է կառուցին, երբէք չի կարող
լինել այն, որ պետական իշխանութիւնը խորտակի, այլ
միայն, որ ստիպի կառավարութեան զիջում անել որ-
եւ յատուկ ինդրում կամ այն կառավարութիւնը որը
թշնամարար է վերաբերում դէպի պրոլետարիատը,
փոխարինի պրոլետարիատի պահանջներին ընդառաջ գը-
նացող (entgegenkommende) կառավարութեամբ, չի

կարող տանել դէպի պետական իշխանութեան խորտա-
կումը, այլ միայն դէպի ոյժերի յարաբերութեան որոշ
տեղափոխում (verschiebung) պետական իշխանութեան
ներսում : Եւ մեր քաղաքական պայքարի նպատակը մը-
ներսում է գարձեալ ինչպէս եւ մինչ այժմ՝ պետական իշ-
խանութեան նւաճումը պարլամենտում մեծամասնու-
թիւն ձեռք բերելու միջոցով եւ պարլամենտը կառավա-
րութեան տէրը գարձնելով» : (Եր. 726, 727, 732) :

Այս արդէն կատարեալ ու մաքուր օպլորտիւնիզմ է,
խօսքով յեղափոխութիւնն ընդունելն ու գործով նրան
ուրանալն է : Կառուցկու միտքը «պրոլետարիատին
ընդառաջ զնացող կառավարութիւնից» այն կողմ չի ան-
ցնուած — սա մի քայլ է դէպի յետ, դէպի ֆիլիստերու-
ցնում — սա մի քայլ է դէպի յետ, դէպի ֆիլիստերու-
ցնում : Ամենամատած 1847 թւականի հետ, երբ «Կոմմու-
նիստական Մանիֆեստը» կոչ արեց դէպի «պրոլետա-
րիատի կազմակերպումն իբրեւ տիրող դասակարգի» :

Կառուցկին ստիպւած կըլինի իր սիրած «միութիւնը»
հայդեմանների, Պլեխանովների, Վան-
իրականացնել Շայդեմանների, Համաձայն են կոիւ
գերվելլների հետ, որոնք բոլորը համաձայն մէն կու-
ղելու յանուն այն «կառավարութեան», որն ընդառաջ
կըզնայ պրոլետարիատին» :

Իսկ մենք կանչացնենք սոցիալիզմի այդ դաւաճան-
ներից, եւ պայքար կըմղենք ողջ հին պետական մեքե-
ներից, այն պայքար կըմղենք համար այնպէս — որ զինուած պրոլե-
տարիատը ինքը կառավարութիւն լինի : Այս Երկուսի մէջ
խոչը տարբերութիւն կայ :

Կառուցկին հարկադրուած կըլինի Լեզենների, Դա-
ւիդների, Պլեխանովների, Պոտրեսովների, Ծերեթելի-
ների եւ Զերնովների ընկերութեան մէջ լինել : Նրանք բո-
լորը համաձայն են պայքար մղելու յանուն «ոյժի յա-
րաբերութեան տեղափոխման պետական իշխանութեան

ներսում», յանուն «սպարլամենտում մեծամասնութիւն ձեռք բերելու եւ պարլամենտը կառավարութեան կատարեալ տէր դարձնելու», — ազնւագոյն մի նպատակ, ուր ամեն ինչ ընդունելի է օպպորտիւնիստների համար, ամեն ինչ մնում է բուրժուական սպարլամենտական հանրապետութեան շրջանակիներում:

Իսկ մենք կանչատենք օպպորտիւնիստներից եւ ողջ դիտակից պրոլետարիատը մեղ հետ կըզնայ, երբ մենք կըզայքարենք ոչ թէ ոյժի՝ յարաբերութեանց տեղափոխման համար, այլ բուրժուազիայի խորտակման, բուրժուական սպարլամենտարիզմի խորտակման համար, յանուն կոմմունի տիպի գեմոկրատիկ հանրապետութեան կամ յանուն Բանուրական ու Զինուրական Դեպուտատների Խորհուրդների հանրապետութեան, յանուն պրոլետարիատի յեղափոխական դիտատուրայի:

* * *

Կառցիուց աջ միջազգային սոցիալիզմի շարքերում կանգնած են Հոսանքները, որոնց արտայայտիչն է «Սոցիալիստական Ամսագիրը» Գերմանիայում (Լեգին, Դաւիդ, Կոլ'ր եւ շատ ուրիշները — սրանց մէջ Հայած սկանդինավուցի Ստաունինգին ու Բրանտինգին), Ժորեսիս ներն ու Վանդերիզիդը Ֆրանսիայում ու Բէլգիայում, իտալական կուսակցութեան աջ թեւի ներկայիշներ՝ Տուրատի, Տրիվիսը եւուրիշները, Փարիսկաններն ու «անկախները» («անկախ բանուրական կուսակցութիւն») որը իրօք միշտ կախումի մէջ է եղել բուրժուազիայից ու միքրալիներից) Անդիֆիայում եւ այլն: Բոլոր այդ պարոնները, խոչոր, յաճախ գերիշխող դեր կատարելով պարլամենտական աշխատանքում ու կուսակցական հրապարակախօսութեան մէջ, ուղղակի ժխտում են պրոլե-

տարիատի դիկտատուրան, առաջ են մղում օպպորտիւնիստակատի առանց այն քօղարկելու: Այդ պարոնների տեսանիզմը առանց այն քօղարկելու: Այդ պարոնների տեսանիզմը է» կէտով պրոլետարիատի դիկտատուրան «հակասո՞ւմ է» դեմոկրատիային: Նրանք ըստ էութեան ոչ մի բանով դեմոկրատիային: Են առաջ ըստ էութեան ոչ մի բանով դեմոկրատիայից:

Ի նկատ առնելով այդ հանգամանքը, մենք իրաւունք ունենք եղակացնել, որ երկրորդ ինտերնացիոնալը յանուններ եղակացնել, ճանաչուածին իրակայիշների, ճնշող մեծամասնութեամբ կատարելապէս օպպորտիւնիզմի գիրկն է գըլուել: Կամմունի փորձը ոչ միայն մոռցւել է, այլ աղյուսել: Բանուրական մասսաներին ոչ միայն չի ներճատւել, որ մօտենում է այն ժամանակը, երբ նրանք պիշնչւել, որ մօտենում է այն ժամանակը, երբ նրանք պահանջում էին պահանջում էր հակասական մեքենան տի հանդէս զանդէս զան եւ խորտակեն հին պետական մեքենան տի հոփարինելով այն նորով եւ այդպիսով իրենց տիրափոխարինելով հասարակութեան սոցիալիստական վերապետութիւնը հասարակութեան սոցիալիստական վերացիութեան բաղիս զարձնելու, այլ ընդհակառակը, մասսաներին ներշնչում էր հակասակը եւ «իշխանութեան նւաճումը» այնպէս էին պատկերացնում, որ օպպորտիւնիզմի համար հազար ու մի ելք էր մնում:

Պրոլետարական յեղափոխութեան եւ իշխանութեան յարաբերութեանց խնդրի այդորինակ աղաւաղումն ու լուսութեան մատնելը չէր կարող ահազին զեր չկատարել այն ժամանակ, երբ պետութիւններն իրենց իմպերիալիստական մրցման պատճառով ուժեղացած ապարատով զարձել են ուղղմական հրէշներ, որոնք միլիոնաւոր մարդիկ են ոչնչացնում որպէսզի վճռեն այն վէճը, թէ արդեօք Անգլիան թէ Գերմանիան, այս թէ այն Փինանսական կապիտալը պիտի տիրէ աշխարհին:

Աերջ առաջին պրակի.

Վ Ե Բ Ջ Ա Բ Ա Ն

Այս բրոշիւրը գրւած է 1917 թ. օգոստոս սեպտեմբեր ամիսներին։ Ես արդէն ծրագիր էի կազմել հետեւեալ, եօթներորդ դիմի համար — «1905 եւ 1917 թւականների ոռւսական յեղափոխութիւնների փորձը»։ Բայց վերնագրից բացի ես այդ դիմից եւ ոչ մի տող չկարողացաց գրել։ Ինձ «խանդարեց» քաղաքական կրիզիսը — 1917 թ. հոկտեմբերեան յեղափոխութեան նախօրեակը։ Այդպիսի «խանդարման» համար կարելի է միայն ուրախանալ։ Բայց բրոշիւրի երկրորդ պրակը նւիրւած՝ «1905 — 1907 թւականների յեղափոխութեանց փորձին», երեւի Հարկ կը լինի երկար յետաձգել։ շատ հաճելի եւ օդտաւէտ է «յեղափոխութեան փորձը» կատարել, քան թէ նրա մասին գրել։

ՀԵՂԻՆԱԿ

Պետրոգրադ.

1917 թ. 30 նոյեմբերի.



Ա.

Արսիրակտ — Վերացական, տեսական, անօշափելի։
Արսոլիւտ — Բացարձակ, միահեծան։
Արսոլիտիզմ — Բացարձակապետութիւն, բոնապետութիւն, միահեծանութիւն։
Ազիտացիա — Քարոզչութիւն, շարժում, պայքար։
Ազրոնոմ — Գիւղատնես։
Ակտ — Գործ, գործողութիւն։
Ակցիա — Գործ, բաժին։
Ակցիոներ — Բաժնետէր, մասնատէր, մասնակից։
Անալիզ — Վերլուծութիւն։
Անարխիա — Անիշխանութիւն։
Անարխիստ — Անիշխանական։
Անտազոնիզմ — Հակառակութիւն, հակազրութիւն, շահերի բաղիում, հակամարտութիւն։
Անտիպոդ — Հականնեայ։
Ապարատ — Գործիք, կազմուածք։
Ասոցիացիա — Ընկերակցութիւն, միութիւն, կազմակերպութիւն։
Ասրիբուտ — Սոորոզելի, յատկանիւ։
Արգումենտ — Փաստ, տարկութիւն, պատճառաբանութիւն։
Աւանդարս — Ցառաջաւագ։
Աւոռմոպիլ — Ինքնաշարժ կառք, օտոմոպիլ։

Բ.

Բազիս — Հիմք, յենարան, պատռւանդան։
Բանկ — Դրամատուն, գանձարան։
Բիւրկրատիա — Տիրող պաշտօնէութիւն։
Բլանկիստ — Լուի Բլանկի հետեւորդ։ Բլանկը Փարիզի կոմմունի կարեւոր դէմքերից մէկն է։
Բոնապարտիզմ — Բոնապարտականութիւն, (Բօնա-Պարտի ան ևնով), կայսերականութիւն։
Բրօնի — Արոյք, պղնձի եւ կապարի խառնութը։

Գ.

Գենտիլ — Յեղային, տոհմային.

Դ.

Իելեգացիա — Պատվամաւրութիւն.

Իեկլամացիա — Արտասանութիւն.

Իեմագոգ — Ամբոխավար, խուժանավար.

Իեմոլիպատիկ — Ծամկավարական, ժողովրդավարական.

Իեպարտամենու — Բաժանմունք, պաշտօնատուն, տնօչութիւն, զաւառ.

Իեպուտատ — Ներկայացուցիչ.

Իիալեկոլիկա — Տրամախօսութիւն. Հականառութեան արևսո, գիտելմէրող որ աշխարհին նայում է որպէս ընթացող երեսոյթի եւ ոչ որպէս մի տրւած, հաստատուն իրողութիւն։ Հեղեղի եւ Մարքսի մօտ այդպէս կոչում է ան ժամանելակերպը. Կամ մեթոսը, որ գըրութիւնից եւ Հակադրութիւնից Համադրութիւն կազմելով լուսարանութեան աւելի բոլոր ձեւերի է զեմում.

Իիկտատուրա — Խստիշխանութիւն, բռնադետութիւն.

Իիցիպլին — Կարդապահութիւն.

Իիփֆերնեցիացիա — Զանազանաւորում, բաժանում, չերտաւորում.

Իոկտրինեոր — Վարդապետող, տառացիօքէն ուսմունքին, վարդապետութեան հետեւող.

Ե.

Էկլեկտիցիզմ — Բնորոշականութիւն, (այդպէս կկոչւին փելիսութիւն) կամ ընկերարանական այն ուսմունքերը, որոնք երեւոյթների միական բացատրութիւն չեն տար.

Էկոնոմիա — Տնտեսութիւն.

Էտապ — Կայան, ըրջան, ժամանակաշրջան, դրութիւն աստիճան.

Էտիլիցիա — Բարեցրութիւն, աստիճանական զարգացում.

Էէցես — Ծայրայեղութիւն, չափից դուրս ելած.

Էէսպրառիատոր — Բռնագրաւող.

Էէսպրառիացիա — Բռնագրաւում.

Թ.

Թէորիա — Տեսութիւն, վարդապետութիւն.

Թէորիտիկ — Տեսաբան.

Թըլստ — Խոչոր կապիտալիստական ընկերութիւն.

Ի.

Իլլիստրացիա — Լուսազարդում, պայծառացում, փայլեցում, լուսաբանութիւն օրինակով, պատկերազարդում.

Ինդուստրի — Արդիւնաբերութիւն.

Ինտելիգենցիա — Մտաւորականութիւն.

Ինտերնացիօնալ — Միջազգային.

Ինտերիա — Կայսրութիւն.

Ինէոնգ — Գաղափարական, գաղափարախօս

Լ.

Լապուս — Սլավմունք, վրիպակ, անկում.

Լասալիզմ — Դերման սօցիալիստ Ֆերտինանտ Լասալի ուսմունքը. Լամբեյ — Սպասաւուր, փոխարերական մտքով գործ կածւի, քսու, սուլամունքը.

Լեգալ — Օրինական.

Լեգիտիմ — Հարազատ (զաւակ), վաւերական, իրաւունքով.

Լիրիք — Քնարական, քնարերգակ.

Լոգունգ — Նշանաբան, խորհրդանիշ.

Լոկիֆական — Տրամաբանական.

Կ.

Կաղրիլ — Եւրոպական մի պարի անուն է.

Կատեդր — Սահմ. Ռամկավար (Ռուսական).

Կապիտալ — Դրամագլուխութիւն.

Կատաստրոֆ — Աղետ, տակնումբայրութիւն, փլուզում.

Կարիերիզմ — Պաշտօն, դիրք, գործունէութեան ասպարէզ.

Կարիերիզմ — Դիրքի, պաշտօնի ցանկացող մտայնութիւն.

Կամա — Տոհմ, ցեղ.

Կասմիկ — Դասական.

Կրիզիս — Տագնապ, նեղութիւն, ճղնաժամ.

Կոլոնիատ — Գաղթավայրում ապրող, գաղթական.

Կոալիցիոն — Տարբեր ուժերի միացում, դաշնակցում, համագործակցում.

Կոնկրետ — Շօշափելի, գործնական.

Կոնորոլ — Հսկողութիւն, վերահսկողութիւն.

Կոմինացիա — Դասաւորում, բաղադրութիւն, զուգադիպութիւն, կազմութիւն.

Կոմենտատոր — Լուսաբանող, ներկայացնող, մեկնաբանող.

Կոմպրոմիս — Զիջում, տեղի տալ, իրաւախոհութիւն.

Կոմիսիա — Առանձին մարմին, յանձնախումբ.

Կոմիսար — Գործադար.

Կոմիսարիատ — Պետական գործադարներու խորհուրդ, մարմին, հիմնարկութիւն.

Կոմունա — Համայնք.

Կոմունիզմ — Համայնատիրութիւն.

Կորպորացիա — Մարմին, կազմ, կազմութիւն.

Կուլիս — Բեմի յետեւ, զարտնի, հասարակութիւնից ծածուկ.

Ա.

Մագագին — Վաճառատուն, խանութ.

Մագնատ — Մեծատուն, ազգեցիկ կազիտալիստ, գորաւոր գրամատէր.

Մանիֆեստ — Ազգ, յայտարարութիւն.

Մաստար — Զար, աստիճանաշաբ.

Մասսա — Զանգուած, ամրութ.

Մարդուր — Յափշտական, կողոպտիչ, չարաշահաց մէկը.

Մարքսիզմ — Մարքսի ուսմունքը, գիտական սոցիալիզմ.

Մերուտիկ — Զեւաւոր, կանոնաւոր, կանոնի ենթակայ.

Մենամիզմ — Կազմ, մարմին, կառուցւածք, յօրինւածք.

Մեջան — Քաղքենի.

Միլիտարիզմ — Զինուրապաշտութիւն.

Մոդա — Նորոյթ, նորաձեւութիւն.

Մոմենտ — Վայրկեան, յարմար բոպէ.

Մոնոպոլիստական — Մենաշնորհական, մենաշնորհական.

Ա.

Նացիոնալիզմ — Ազգայնականութիւն.

Նորմա — Զար, քանակ.

Յ.

Շտուրմ — Գրոհ, յարձակում, փոթորիկ.

Շօվինիստ — Թթու հայրենասէր, ազգամուլ.

Ո.

Ութիվերսալ — Բնդհանրական, արեգերական, համապարփակ.

Ուտոպիա — Ցնորք, զառանցանք, մտացածին մի գրութիւն.

Չ.

Չինովնիկ — Աստիճանաւոր, ուսւական պետական պաշտօնեայ՝ Յարական օրերում.

Պ.

Պանեզերիկ — Ներշող, գրուատական.

Պատրիոտ — Հայրենասէր.

Պարագրաֆ — Մաս, հատւած, յօդւած.

Պարազիտ — Զրիակեր, ուրիշի հաշին ապրող, մակաբոյծ.

Պարլամենտ — Խորհրդարան.

Պասսի — Կրաւորական.

Պեդանտ — Տառակեր, մանր, անարժէք խնդիրների ուշ դարձնող մէկը, բժանողին.

Պերմանենտ — Յարատեւ, մշտակեւ, տեւական, շարունակական.

Պերսոնալ — Մի հիմնարկութեան պաշտօնէութեան հաւաքական կազմը.

Պլոկ — Լուծ, լծակցութիւն, միութիւն.

Պիանո — Դաշնակ, դաշնամուր.

Պինցիպ — Սկզբունք.

Պիմիտիւ — Նախնական.

Պրոդուկտ — Արդիւնք, մթերք.

Պրոլետարիատ — Բնդիանական դարձաւորութիւն.

Պրոպագանտա — Քարողչութիւն.
Պրոցես — Գործողութիւն, ընթացում.
Պրոֆեսոր — Ռազուցչապետ.
Պրուդոնիստ — Պրուդոնի հետեւող.
Պոլեմիկա — Վէճ, բանակոիւ, բանավէճ.
Պոլիցիա — Ոստիկանութիւն.
Պուրլիցիստ — Հրապարակաթիսու.

Բ.

Ռայխստագ — Գերմ. պարլամենտ.
Ռատիկալիզմ — Արմատականութիւն.
Ռեակցիա — Յևաղիքական շարժում, յետաշրջում.
Ռենեգաս — Դաւաճան, դաւալիք, ուխտագրում.
Ռեպրեսիւ — Բռնի ճնշչէ.
Ռեփորմիստ — Բարենորոգչ ուկան.

Ս.

Սարսուած — Դիտաւորեալ վնասում կամ փնտում մեքենաների դիտաւորեալ խանդարում գործի, եւ կամ ծուլացում.
Սենդիկալիզմ — Այն ընկերային վարդապետութիւնը, որ քաղաքական գործունչութեան չի հաւատում, այլ ուզում է բանտորական միութիւնների ուղղակի պայքարով ըսկերային նոր կարգ հրատարակել.

Սենտիմենտալ — Զգայական.
Սիստեմատիկ — Կանոնաւոր եղանակով.
Սիտուացիա — Դրութիւն, վիճակ.
Սպեցիֆիկ — Առանձնայատուկ, իւրայատուկ.
Սոցիալական — Հասարակական.
Սոցիալիզմ — Ընկերվարութիւն.
Սովետական — Խորհրդային.
Սօֆիզմ — Սովետատութիւն.

Վ.

Վուլգար — Գոեհիկ.

Տ.

Տեսդեմոն — Միտում, նպատակաւոր.
Տեխնիկա — Մեքենականութիւն, արտադրութեան ձեւ, գործակարութեան կամ արեստի եղանակ.

Տերիտորիա — Երկրամաս, հողամաս, գետին.
Տրադիցիա — Աւանդութիւն.
Տրիտել — Գևոնի տակ բուժնող, գետնախնձորի նման սոկոնի մի տեսակն է. ժողովրդի մօտ գործ կած ւի հաղուածիւութիւն երեւոյթների մասին, որովհետեւ այդ սոկոնը երեմն մի քանի տարին մի անդամ կը բուժեմ.

Ռ.

Թէվոլիցիա — Յեղափոխութիւն.

Ց.

Ցիտատ — Քաղուածք, մէջբերում.
Ցենզ — Իրաւունք, իրաւասութիւն, հիմնւած նիւթական որոշ եկամտի, կարողութեան վրայ.


Օ.


Օրիենտիւ — Առարկայական.
Օրիվատել — Քաղքենի, քաղքային բնակիչ.
Օրգանապէս — Ներքին կերպով կապւած, սերտորէն.
Օպպորտիւմիստ — Պատեհապաշտ.

Ֆ.

Ֆազ — Աստիճան, շրջան.
Ֆանտազիա — Երեւակայութիւն.
Ֆէոտալ — Աւատատէր, աւատական.
Ֆէտիք — Կուռք, պաշտանքի առարկայ.
Ֆետերատիւ — Դաշնակցային.
Ֆիլկիցիա — Խարկանք, երեւակայութիւն.
Ֆիլիպիստիք — Կեղծաւոր, անօգուտ սովորութիւնների գերի մէկը, եւ մաստակ, մանր-բուրժուական մտայնութիւն ունեցող.
Ֆիրազ — Խօսք, նախադասութիւն, ասացուածք.
Ֆինդ — Հիմնադրամ, դրամատլուխ.







7895

3 K 23
7-50